

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Հոդվածների ժողովածու

(«Սոցիալական համերաշխությունը՝ պետության զարգացման
հիմք» միջազգային գիտաժողովի նյութերի հիման վրա,
ապրիլի 4-6, 2025)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ս 783

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ
սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Գիտական խմբագիր՝ քաղ.գ.դ., պրոֆեսոր Ա. Վ. Աթանեսյան
Գրախոսներ՝ փիլ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան
սոց.գ.թ., դոցենտ Յու. Գ. Մելքումյան
Լեզվական խմբագիր՝ սոց.գ.թ., ասիստենտ Մարինե Յարմալոյան

Ս 783 **Սոցիալական համերաշխության արդի հիմնախնդիրները
տեսամեթոդաբանական մոտեցումներում: Հոդվածների ժո-
ղովածու/ Ա. Վ. Աթանեսյանի խմբ./: – Եր., ԵՊՀ հրատ., 2025,
156 էջ:**

Ժողովածուն պատրաստվել է արդիական հիմնախնդրի՝ սոցիալական համերաշխության, միջմասնագիտական քննարկումների և տեսամեթոդաբանական մոտեցումների շրջանակներում, որոնք արտացոլում են ժամանակակից հասարակություններում սոցիալական փոխհարաբերությունների խնդրահարույց տիրույթներն ու ներկայացնում բարձրացվող խնդիրների լուծման հնարավորությունները: Սոցիալական համերաշխության հիմնահարցերը քննարկվում են սոցիալական աշխատանքի, սոցիոլոգիայի, սոցիալական տեխնոլոգիաների տեսամեթոդաբանական շրջանակներում: Ժողովածուն նախատեսված է տեսաբանների և սոցիալ-հումանիտար ոլորտում պրակտիկ գործունեություն իրականացնողների համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

ISBN 978-5-8084-2718-1
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808427181>

© Կազմողի համար, 2025
© ԵՊՀ հրատ., 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ 5

Միրա Անտոնյան
ՅՈՒՐԱՅԻՆ, ԹԵ՞... ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՌԻՍԿԵՐԸ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՅԻՆԵՐԻՆ
ՀՅՈՒՐԸՆԿԱԼԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 6

Արտակ Խաչատրյան
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 29

Նվարդ Մելքոնյան, Թամարա Վարդանյան
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՆՍԵՆՍՈՒՍԸ ՓՈՓՈԽՎՈՂ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԴԵԼԻԲԵՐԱՅԻԱ՞, ԹԵ՞
ՄԱՆԻՊՈՒԼՅԱՅԻԱ..... 39

Անահիտ Սահակյան, Լիանա Մկրտչյան
«ԷՄՊԱՏԻԱ (ԱՊՐՈՒՄԱԿՑՈՒՄ)» ԵԶՐՈՒՅԹԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐ..... 57

Լուսինե Քարամյան
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՍՅՈՒՆ 67

Լիանա Բալյան	
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.	
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ	
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	81

Նունե Գեղամյան, Մարինե Յարմալոյան	
«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ԵԶՐՈՒՅԹԻ	
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ	99

Գագիկ Թումանյան	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԱՇԽԱՐԱՐ	
ՆԵՐՈՒԺԸ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ	
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՇՈՒՐԶ	109

Syuzanna Yeghiazaryan	
SOCIAL GRAVITATION AS THE BASIS OF INSTITUTIONAL	
COHESION.....	127

Gayane Hovakimyan	
EXPLORATORY FINDINGS ON ARMENIA DIASPORA	
EXPECTATIONS WITHIN EXISTENTIAL SECURITY AND	
CRISIS OF ARMENIAN IDENTITY	140

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Սույն ժողովածուն, որը կազմվել է «Սոցիալական համերաշխությունը՝ պետության զարգացման հիմք» միջազգային գիտաժողովի նյութերի հիման վրա (Ծաղկաձոր, ապրիլի 4-6, 2025) անդրադառնում է սոցիալական համերաշխության հիմնախնդիրներին՝ ներառելով սոցիալական աշխատանքի, սոցիոլոգիայի, սոցիալական տեխնոլոգիաների և հարակից ոլորտների տեսամեթոդաբանական մոտեցումները: Ժամանակակից աշխարհում, երբ համաշխարհային մարտահրավերներն ու սոցիալական բևեռացվածությունը խորանում են, առավել քան երբևէ արդիական է դառնում հասարակությունների համերաշխության պահպանման և վերակազմակերպման խնդիրների ուսումնասիրությունը:

Ժողովածուի նյութերն արտացոլում են ինչպես տեսական վերլուծություններ, այնպես էլ գործնական դիտարկումներ՝ ընդգրկելով սոցիալական ոլորտում տեղի ունեցող ինստիտուցիոնալ փոփոխություններն ու մարտահրավերները, հարկադիր տեղահանության սոցիալական հետևանքները, ժողովրդավարության մշակույթի և սոցիալական ներառականության խաչմերուկները: Հեղինակները տարբեր տեսանկյուններից ներկայացնում են սոցիալական համերաշխության հասկացության բազմազան դրսևորումները՝ վեր հանելով դրանց սոցիալական, մշակութային, քաղաքական և հոգեբանական տարրերը:

Սույն ժողովածուն կարող է օգտակար լինել ինչպես գիտական շրջանակների, այնպես էլ սոցիալական ոլորտում գործող փորձագետների, քաղաքականություն մշակողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար՝ որպես տեսական ու գործնական նյութերի հարուստ աղբյուր՝ հասարակական համերաշխությունը վերաիմաստավորելու և ամրապնդելու նպատակով:

**ՅՈՒՐԱՅԻՆ, ԹԵ՞... ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՌԻՍԿԵՐԸ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՅԻՆԵՐԻՆ
ՀՅՈՒՐԸՆԿԱԼԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

Միրա Անտոնյան

*Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի
ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլո-
գիաների ամբիոնի դոցենտ*

**OURS, OR...? RISKS OF SOCIAL TENSION IN
COMMUNITIES HOSTING DISPLACED ARTSAKH
RESIDENTS**

Mira Antonyan

*PhD in Sociology, Associate Professor, Department of Social Work and
Social Technologies, Faculty of Sociology, YSU*

Abstract. This article examines the relational dynamics between persons forcibly displaced from Artsakh to Armenia and residents of receiving communities. Employing qualitative methodological approaches, the research demonstrates that approximately eighteen months following displacement, displaced persons' sense of "belonging" remains ambivalent and fluid, oscillating between indicators of complete integration and social alienation. The study proposes an interdisciplinary theoretical framework for comprehending the contemporary complexities inherent in displaced persons' integration processes and for developing intervention strategies to mitigate the escalation of social tensions.

Keywords: displaced Artsakh residents, tensions, Armenia, adaptation.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մոտ 115,388 էթնիկ հայեր տեղահանվեցին Լեռնային Ղարաբաղից՝ Ադրբեջանի կողմից ռազմական հարձակման հետևանքով, ինչը լրացրեց 2020-ից ի վեր տեղահանված մոտ 26,700 անձանց թվակազ-

մը: Սույն վերլուծությունը նպատակ ունի համակողմանիորեն ուսումնասիրել արցախցիների և տեղացիների փոխհարաբերություններում «յուրային-օտար» դիխոտոմիան՝ համադրելով սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական և մշակութաբանական միջգիտակարգային մոտեցումը: Հետազոտության շրջանակում կիրառվել է որակական մեթոդաբանություն, որը հիմնված է ֆոկուս խմբերի (18) և կիսաձևայնացված հարցազրույցների (30) վրա: Հետազոտական տվյալները հավաքվել են տարբեր տեղահանված անձանց հյուրընկալած տարբեր համայնքներից, ինչը թույլ է տալիս համեմատական վերլուծություն անցկացնել քաղաքային և գյուղական միջավայրերի միջև:

Տեղահանված անձինք կազմում են Հայաստանի բնակչության ավելի քան 4%-ը (մոտավորապես յուրաքանչյուր 33-րդ բնակիչը): Ժողովրդագրական կազմը ներառում է 52% կանայք, 31% երեխաներ և 14% տարեցներ: Տեղահանված անձանց աշխարհագրական բաշխվածությունը ցույց է տալիս կենտրոնացում Երևանում (40.3%) և հարակից մարզերում՝ Կոտայք (16.1%), Արարատ (10.4%) և Արմավիր (9.5%): Այս անհամաչափ բաշխվածությունը ստեղծում է ճնշում քաղաքային ենթակառուցվածքների վրա և առաջացնում համայնքային դինամիկայի փոփոխություններ:

Հարկադիր տեղահանության սոցիալական հետևանքները բազմաչափ են: Գործազրկության մակարդակը Հայաստանում 12.4% է, մինչդեռ փախստականների շրջանում այն հասնում է 34%-ի: Տեղահանված անձանց 75%-ը նշել է եկամտի փոփոխություն տարվա ընթացքում, որից 77%-ը զգացել է եկամտի ավելի քան 50% նվազում: Այս անհավասարակշռությունը կարող է առաջացնել լարվածություն տեղական բնակչության հետ՝ սահմանափակ աշխատատեղերի մասով:

Տեղահանված անձանց 45%-ը դժվարություններ ունի սննդի հասանելիության հետ կապված, 80%-ը նշում է ֆինանսական անբավարարությունը որպես հիմնական խնդիր: Տեղահանված տնային

տնտեսությունների 22%-ը ունի ոչ ֆորմալ պարտքեր, որոնց 59%-ը կուտակվել է սնունդ գնելու համար: Հայաստանի բնակչության 33%-ը ունի ոչ ֆորմալ պարտքեր: Պարտքերի հիմնական աղբյուրները մոտակա խանութներն են (64%) և ազգականներն ու ընկերները (32%): Հարցվողների 70%-ը սնունդ է գնում վարկով: Այս պարտքային շրջանառությունը ստեղծում է տնտեսական փոխկախվածություն տեղահանված անձանց և ընդունող համայնքների միջև:

Պետական սոցիալական ծրագրերը հանդիսանում են տեղահանված տնային տնտեսությունների 55%-ի եկամտի հիմնական աղբյուր: Պետական աջակցության 50,000 դրամ/անձ նպաստի նվազեցումը կարող է պարենային անապահովությունը 16%-ից բարձրացնել մինչև 42%: Տեղահանված անձանց 73%-ը ունի տնտեսական կարողություններ հիմնական կարիքները բավարարելու համար՝ ի համեմատ տեղական բնակչության 51%-ի, ինչը պայմանավորված է իրենց իրավական կարգավիճակով (ժամանակավոր փախստականի կարգավիճակ): Այս անհամաչափությունը կարող է ստեղծել լարվածություն տեղական բնակչության մեջ:

Ակնհայտ է, որ բռնի տեղահանության պատճառով առաջ են եկել բազմաթիվ կարիքներ, որոնց արձագանքելը անհրաժեշտություն է, սակայն ոչ երբեք պարզ գործողությունների որոշակի համախմբություն: Անմիջական արձագանքը թերևս ավելի քիչ պոտենցիալ ունի սոցիալական լարվածություն, երկրորդային հետևանքների տեսքով առաջ բերելու, մինչդեռ հետագա հիմնական արձագանքի ձևաչափը, բովանդակությունը, տևողությունը իր հերթին կարող է առաջ բերել կողմնակի վնաս՝ սոցիալական լրացուցիչ լարվածության տարբեր դրսևորումների տեսքով: Որոշ տեսաբաններ, օրինակ, Սամերը (Summer, 2009) գտնում են, որ տեղահանության գործընթացը մարտահրավեր է նետում ոչ միայն պետական ինստիտուտների ադապտիվ կարողությունների, այլև հասարակական համախմբվածության վրա, իսկ Թաթլը (Tuttle, 2019), գտնում է, որ հարկադիր միգրացիայի պարագայում «յուրայինության» զգացողության փոխա-

կերպումն ընթանում է երկու՝ տեղափոխված խմբի ներքին ինքնաընկալման և ընդունող հանրության կողմից այդ խմբի ընկալման հարթություններում: Դրանք կարող են ունենալ ինչպես օգնող, այնպես էլ «սպառնալիքային», որոնք, ինչպես հետազոտությունը ցույց տվեց, կարող են մի քանի տիպի լինել:

Այսպես, «սիմվոլիկ սպառնալիքները» վերաբերում են հավաքական ինքնության բազային տարրերի ընկալմանը, օրինակ՝ բարբառային տարբերությունները, կենցաղավարման նորմերի տարբերությունները և համայնքային նույնականացման առանձնահատկությունները (արցախցի-հայաստանցի):

Միջխմբային անհանգստությունը, որպես սպառնալիք դրսևորվում է ամենօրյա փոխազդեցություններում որպես անհանգստություն, անվստահություն և անորոշություն, որոնք կապված են առաջին անսովոր, նոր շփումների, կարգավիճակային անորոշության և հաղորդակցային առանձնահատկությունների հետ: Բացասական կարծրատիպերը, որպես սպառնալիք, համաձայն Ջոստի և Բանաջիի (Jost & Banaji, 2004) «համակարգը արդարացնող տեսության» (system justification theory), կարող են գործել որպես մեխանիզմ՝ բացատրելու և արդարացնելու սոցիալական անհավասարությունները: Հայաստանյան համատեքստում այս կարծրատիպերը արտահայտվում են տեղացիների շրջանում արցախցիների՝ «ավելի բարձր կենսամակարդակ ունեցողներ» կամ «պահանջկոտ» ընկալումներով, իսկ արցախցիների շրջանում՝ տեղացիների «անտարբեր» կամ «անհյուրընկալ» ընկալումներով:

Ինչ վերաբերում է իրատեսական սպառնալիքների դրսևորումներին, ապա, վերլուծելով տեղացիների դիսկուրսը, կարելի է տեսնել, թե ինչպես են սոցիալական ռեսուրսների բաշխումն ու դրանց ընկալումները ձևավորում «յուրային-օտար» դիստոմֆիան:

«Փաստը այն է, որ մեր մոտ էլ կան անապահով ընտանիքներ, որ սոված են, որ դոմիկում են, բայց ոչ մի աջակցություն չկա, իսկ արցախցիներն անխտիր բոլորը գումար են ստանում, դա բարկացնում է անապահով խավին» (Կին, տեղացի, Արթվյան):

Այս դիսկուրսը, «գուգակցվող սոցիալական ընկալումների» (congruent social perceptions) հայեցակարգի համաձայն, արտացոլում է այն, ինչպես են սահմանափակ ռեսուրսների պայմաններում ձևավորվում «արժանի» և «անարժան» շահառուների վերաբերյալ պատկերացումները, հետևաբար նաև սոցիալական լարվածություն «յուրային-ոչ յուրային» պատկերի գոյացման, առավել ևս, խորացման համար: Երբեմն այդ լարվածությունը ոչ այնքան իրական է, որքան մտացածին, կարծրատիպային պատկերացումների վրա կառուցված. *«Ամեն դեպքում եկեք ընդունենք, որ էնտեղ շատ բարձր աշխատավարձեր ու նպաստներ են եղել, որի պատճառով էլ իրենք մեզ վերևից են նայել, իհարկե ոչ բոլորը»* (Կին, տեղացի, Աբովյան): Այս պնդումը վկայում է որոշակի սոցիալական խմբին ընդհանրացված հատկանիշների վերագրման մասին, ինչը, այնուամենայնիվ, կարող է ներառվել իրատեսական սպառնալիքների թվում:

Չուգահեռաբար, արցախցիները ակտիվորեն մշակում են ռազմավարություններ՝ իրենց նոր սոցիալական դիրքը հասկանալու և դրան հարմարվելու համար՝ համաձայն Գիդդենսի (Giddens, 1984) ռեֆլեքսիվության դրսևորման մոտեցման: Նման իրատեսական մրցակցության արտահայտման օրինակներից է ինքնակենտրոնացումը՝ *«Համայնքն անտարբեր է մեր խնդիրներին, մեր պրոբլեմները մենք լուծում ենք ինքնուրույն, ինչպես որ կարողանում ենք»* (ֆոկլուս խումբ, Սարդարապատ), ինչը ցույց է տալիս, թե ինչպես են ենթախմբերը զարգացնում ներքին դիմադրության և ինքնաբավության սեփական մեխանիզմները:

Արցախցիների տնտեսական ինտեգրումը պայմանավորված է ոչ միայն աշխատատեղերի առկայությամբ, այլ նաև ազատությունների և իրավունքների իրացմամբ: *«Արցախցիները աշխատասեր են, կազմակերպված և բանիմաց, ինչը դրականորեն է ազդել համայնքի զարգացման վրա»* (Կին, տեղացի, Մասիս), կամ *«Համայնքը հարստացել է նոր մասնագետներով, ովքեր տարբեր ոլորտներում փորձառություն ունեն»* (Կին, տեղացի, Գորիս):

Այս դիսկուրսը համահունչ է Մեննեթի (Sennett, 2003) «փոխադարձ հարգանքի» (mutual respect) հայեցակարգին, որը շեշտադրում է սոցիալական հարաբերություններում ունակությունների և հմտությունների ճանաչման և դրանց հանդեպ հարգանքի կարևորությունը: *«Էստեղ մերոնք տարբեր տեղերում են աշխատում, ուստիկանություն, բանակ, դպրոցում աշխատողներ ունենք, կոմունալ ծառայություն, շինարարություն, շատերն էլ նոր մասնագիտություն են սովորել»* (արցախցի):

Արցախցիների այս ակտիվ մասնակցությունը աշխատաշուկայում կարելի է մեկնաբանել Դը Սերտոյի (De Certeau, 1984) «առօրեականության պրակտիկաների» (practices of everyday life) տեսանկյունից, որտեղ անհատները, չնայած իրենց թվացյալ անգործությանը, գործադրում են ստեղծագործական ռազմավարություններ՝ նոր միջավայրում իրենց տեղը գտնելու համար: Մեկ այլ, կացարանային ապահովության հիմնարար հարցը տեղահանման դեպքում դառնում ոչ միայն նյութական, այլև սիմվոլիկ պայքարի դաշտ: Դիսկուրսը այս առնչությամբ հետևյալն է՝ *«Բնակարանների վարձերի գների կտրուկ բարձրացումը, ինչը ազդել է ոչ միայն արցախցիների, այլև տեղաբնակների վրա»* (տղ., տեղացի, Գորիս), մինչդեռ տեղահանված անձի տեսակետից՝ *«Ես ահավոր գոհ եմ Սարդարապատից: Մի ընտիր մարդ մեզ իրա տունն անվճար ա տվել, ապրում ենք, ու էդ հետ զգած փողերով հիմա հող եմ առել, դոմիկ եմ դրել»* (արցախցի):

Այս նարատիվը ցույց է տալիս այն, ինչը Ապպադուրայը (Appadurai, 1996) անվանում է «լոկալության խարսխում» (production of locality)՝ նոր տարածքում «տուն» ստեղծելու գործընթացը: Հարմարվողականության և դիմակայունության մոդելի հիմքում ընկած են Ջեսսորի (Jessor, 1981) և Անգերի (Ungar, 2006) հարմարվողականության տեսությունները, Ունգարի (Ungar, 2008) «սոցիալ-էկոլոգիական դիմակայունության» (socio-ecological resilience) տեսությունը և Մասթենի (Masten, 2001) «սովորական հրաշքի» (ordinary magic) հայեցակարգը: Այս տեսական կառույցները վերջին տարիներին

զարգացել են Քաների և Մանինգի (Kaner & Manning, 2018) «համակարգային դիմակայունության» (systemic resilience) հայեցակարգի ուղղությամբ, որը շեշտադրում է դիմակայունության համայնքային և համակարգային բնույթը:

Հետևաբար, ռեսուրսների մրցակցության տեսությունը հայկական համատեքստում պետք է համադրվի Մալեշևիչի (Malešević, 2010) «կազմակերպված անանունության» (organized anonymity) հայեցակարգի հետ, համաձայն որի՝ պատմական տրավմաները (ցեղասպանություն, ինքնիշխանության կորուստ և այլն) ուժեղացնում են սոցիալական խմբերի խոցելիության զգացողությունը և լարում միջխմբային հարաբերությունները նույնիսկ միևնույն էթնո-մշակութային համատեքստի պարագայում:

Օգտագործելով Բրոնֆենբրենների (Bronfenbrenner, 1979) էկոլոգիական համակարգերի տեսությունը, կարող ենք բացահայտել, թե ինչպես է տեղահանվածների հարմարվողականությունը դրսևորվում տարբեր համակարգային մակարդակներում: Այսպես, անհատական մակարդակում մարդիկ ավելի շատ փնտրում են նմանություններ, ընդհանրություններ, քան հակասություններ՝ *«Մեծ դժվարությամբ ենք այստեղ հասել, սակայն հասկացել ենք, որ համայնքը, ժողովուրդը և բնությունը շատ նման են Արցախին, դրա համար մարդիկ այլ տեղ չեն գնա այս համայնքից, եթե ոչ Արցախ»* (արցախցի): Այս արտահայտությունը ցույց է տալիս այն, ինչը Անտոնովսկին (Antonovsky, 1996) անվանում է «ձգտում դեպի իմաստավորում և ամբողջականություն՝ հոգեբանական բարեկեցության համար»: Միջանձնային մակարդակում, որտեղ պատկերը ուղղակիորեն կախված է նաև այլ անձանցից, դիտարկվում է փոքր ինչ անհանգստություն, բայց ոչ նշանակալի, այսպես, *«Տղայիս դասարանում երկու երեխա կան, նենց լավ են ընկերություն անում: Սկզբում մենակ բարբառն էր խանգարում, հիմա իրար լավ հասկանում են»* (կին, տեղացի, Սարդարապատ) և կամ՝ *«Երեխաս մի օր դպրոցից եկավ ասեց՝ գիտե՞ս, մամա, մեր դասարանում երկու հայերեն խոսող էլ կա՝ նկատի ունենալով բարբառը, արցախցի»* (կին, տեղացի, Նոր Հաճըն):

Միջանձնային մակարդակում Սվեդբերգի (Swedberg, 2018) «փոխազդեցության ծեսեր» (interaction rituals) հայեցակարգը օգնում է հասկանալ, թե ինչպես են ձևավորվում սոցիալական կապերը նոր միջավայրում. արցախցիների պարագայում պասիվ, ոչ նախաձեռնողական անհատական մոտեցումը էականորեն փոխհատուցվում է այն գործոններով, որոնք թելադրվում են միջավայրից. *«երեխայիս ուսուցչուհին հորդորել է դասարանցիներին, որ իմ երեխային իրենց տուն հյուր կանչեն, որ ավելի արագ հարմարվեն»* (մեջբերում հարցազրույցից):

Ինստիտուցիոնալ մակարդակում պատկերը բավականին հետաքրքրական է և հակասական: Այսպես, *«Մեր համայնքապետը շատ հետաքրքրված է, անընդհատ հետաքրքրվում է մեր խնդիրներով, փորձում տարբեր հարցերի համար լուծումներ տալ»* (արցախցի): Իվանսի և Պլյուշտևայի (Evans & Plyushteva, 2016) «քաղաքացիական ինստիտուցիոնալիզմի» (civic institutionalism) հայեցակարգը կարևորում է տեղական ինստիտուտների դերը սոցիալական համախմբվածության հաստատման գործում: Տվյալ դեպքում տեղական ինստիտուտները տեղահանված անձանց ժամանման առաջնային փուլում ունեցել են կարևոր դեր՝ ընդունելու, տեղավորելու, կազմակերպելու նրանց հարմարման գործընթացը և այլն, որի համար նրանց հատկացվել են նյութական և ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև, առաջին անգամը լինելով, ՏԻՄ-երը առիթ են ունեցել կարևորվել իրենց դերում, որպես դերակատարներ, ինչը, կարելի է ասել, խանդավառություն է առաջացրել ՏԻՄ կառույցների շրջանում: Հաջորդ փուլում, սակայն, *«մարել է նրանց հետաքրքրությունը»* (մեջբերում հարցազրույցից), նվազել ներգրավվածությունը և արցախցիների խնդիրները ներկա փուլում *«...ճիշտ այն չափով են կարևոր ՏԻՄ-երի համար, որքան սեփական բնակիչներինը»* (մեջբերում հարցազրույցից): Նման փոփոխությունը բացատրվում է ոչ թե վերաբերմունքի փոփոխությամբ, այլ տրիվյալ ձևով՝ միջոցների անբավարարությամբ, հետևաբար ոչ կանխամտածված նման համահարթեցումը

թեն հետքայլ է մարդկանց օգնելու տեսակետից, սակայն նվազեցնում է հնարավոր լարվածությունը համայնքներում՝ ռեսուրսների հանդեպ մատչելիության տարբերությունների վերացման տեսակետից: Մեծ պատկերի մեջ, սակայն այն ավելի շատ հետքայլ է նաև տեղացիներին օգնելու կարողության զարգացման տեսակետից, քանի որ համայնքներին չհաջողվեց կապիտալիզացնել մարդկանց օգնելու սեփական փորձառությունը:

Մակրոմակարդակի պարագայում տեղահանված անձանց դիրքորոշումը շատ ավելի կոնկրետ է և հստակ՝ *«Մենակ մի լարվածություն կա՝ դեկավարությունը պետք ա փոխի վերաբերմունքը, մեզ քանի տեղ դնի, կարծիք հարցնի»* (արցախցի): Այստեղ կարևորվում է այն, ինչը Հոֆստեդեն (Hofstede, 2001) նկարագրում է որպես «ուժային հեռավորություն» (power distance)՝ ձգտումը դեպի հավասարություն որոշումների կայացման գործընթացում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տեղահանված արցախցիների սոցիալական կապիտալը ենթարկվում է վերադասավորման և վերակառուցման ակտիվ գործընթացների: Այսպես, նախկին շփումների և կապերի համար հիմնականում գործում են վիրտուալ շփումների միջոցները, հատկապես սոցիալական ցանցերում, ինչը աստիճանաբար թուլացնում է դրանց պրակտիկ նշանակությունը և ավելի սիմվոլիկ աջակցության բնույթ ստանում, մինչդեռ նոր կապերը դեռևս «փոխադարձ զննության» փուլում են՝ «սիմվոլիկ սպառնալիքների» ազդեցության ներքո: Արցախցիների վկայությամբ, իրենք ներկայանում են իրենց նախկին հարևանների, մտերիմների, ծանոթների հոգեհանգստի կամ դրան առնչվող արարողակարգերին՝ իրենց սոցիալական կապիտալի մասը հանդիսացած մարդկանց հետ շփումների, «կարոտը հագեցնելու» դրդապատճառներով ավելի, քան մեկ այլ պատճառով. *«Չիրար տեսնելու շատ հիմնավոր պատճառ ու առիթ է...»* (Ֆոկուս խումբ, Վայոց Ձոր): Այսպիսով, կարելի է համարել, որ նոր միջանձնային կապերը և հարաբերությունները ավելի շատ կառուցողական նշանակություն կարող են

ստանալ, քան հակառակը՝ կախված կողմերի դիրքորոշումներից և կանխատրամադրվածությունից: Հետևաբար, միջանձնային շփումները ավելի սիմվոլիկ սպառնալիքների շարքում են, քան իրատեսական: Այսպիսով, «Սոցիալական կապիտալի» մոդելը, հատկապես Գրինովետտերի (Granovetter, 1983) «թույլ կապերի ուժի» (strength of weak ties) հայեցակարգը որպես նոր սոցիալական կապեր հաստատելու միջոց, արցախցիների պարագայում հստակ դրսևորվում է:

«Էթնիկ ինքնության և կոլեկտիվ տրավմայի մոդել»-ի նոր տեսական զարգացումները թույլ են տալիս ավելի «նրբորեն» ուսումնասիրել կոլեկտիվ տրավմաների գեներացումը, դրա սերնդային և խմբային փոխանցումը և ազդեցությունը խմբային ինքնության վրա: Այսպես, «յուրայինության զգացողության դիալեկտիկայի և կորստի պրակտիկաների» (Ricoeur, 1992) համատեքստում յուրայինության զգացողությունը արցախցիների շրջանում խիստ ամբիվալենտ է. մի կողմից առկա է ընդհանուր էթնիկ պատկանելության գիտակցումը, մյուս կողմից՝ խորը զգացողություն, որ իրենք Հայաստանում, այնուամենայնիվ, «այլ»-եր են: Այս առումով դրական, ինչպես նաև ոչ դրական փորձառությունները վերաբերում են միջանձնային, հարևանական հարաբերություններին ավելի, քան ինստիտուցիոնալ կամ մակրո մակարդակներին, այսպես. *«Ես ունեմ շատ հարևաններ, նաև տղայիս դասարանում կան Արցախից երեխաներ: Փորձառությունս միայն լավն է, դրական: Շատ արժանապատիվ, բարի մարդիկ են: Տղայիս մտերիմ ընկերն է»* (տեղացի): Միևնույն ժամանակ, տեղացին նշում է՝ *«Նրանք տարբերվում են «ամեն ինչով» և ունեն «բողոքական վերաբերմունք»»* (կին, տեղացի, Գորիս): Այս արտահայտությունը ապացուցում է այն, ինչը Սայդը (Said, 1978) բնորոշում է որպես «օրինենտալիզմ»՝ «այլի» կառուցողական պատկերացում, որը բնութագրվում է ընդհանրացմամբ: *«Կյանքը կործանված էր ինձ համար, երբ եկանք: Մի անգամ Բաքվում տուն թողեցինք, մյուս անգամ Ստեփանակերտ»* (արցախցի): *«Կա միայն մեկ բան, որ չի թողնում լիովին շնչենք. դա մեր հայրենիքի կարոտն է, որ չի թողնում նկատել*

մեր կողքի գեղեցկությունը» (արցախցի): Այս արտահայտությունները, համաձայն Լազարուսի (Lazarus, 1991) «ապրումային սթրեսի» (experiential stress) տեսության, ցույց են տալիս, թե ինչպես է կորուստը մարմնավորվում և դառնում մշտապես ներկա փորձառություն:

Ալենկարը և Սիննոթը (Alencar & Sinnott, 2009) նկարագրում են սա որպես «ոչ-հարմոնիկ ինտեգրացիա» (non-harmonic integration)՝ մի վիճակ, երբ անցյալի կորուստն անընդհատ ներխուժում է ներկա փորձառության մեջ: Ահա ինչու, արցախցիների համար հայրենիքի, իրենց ծագման համայնքի կորստի վերքի «ներխուժող թաքնացում է» քաղաքացիական պատկանելության փոփոխության պահանջը: Արցախի քաղաքացիության պահպանման պահանջն, ըստ էության, ինքնության պահպանման փորձ է՝ *«Ինչո՞ւ պիտի մենք փոխենք անձնագիր, կորցնենք վերջին հույսը ու կապը մեր հայրենիքի հետ: Բոլոր արցախցիներն էլ իմ նման են մտածում»* (արցախցի, ֆոկլոր խումբ, Տավուշ): Այս արտահայտությունը «Էթնոտերիտորիալ ինքնության շարունակականության» (ethnoterritorial identity continuity)՝ դրսևորում է՝ ձգտում պահպանելու տարածքային, հնարավոր շոշափելի կապը անգամ ֆիզիկական կորուստ ապրած հայրենիքի պարագայում: Բակսը (Bux, 2007) նշում է, որ այս երևույթը հատկապես տարածված է հարկադիր տեղահանված խմբերի շրջանում, որպես ձևաչափ դիմադրելու իրենց նկատմամբ տեղի ունեցած անարդարությանը:

Հետևելով «Հոգեբանական ադապտացիայի և կորստի մոդել»-ի ժամանակակից տեսական զարգացումներին, որոնք շեշտադրում են ոչ միայն կորստի բացասական հետևանքների հաղթահարումը, այլև դրական փոփոխությունների հնարավորությունը, սույն հետազոտության արդյունքները ցույց են տալիս երկու հակադիր, բայց միաժամանակյա տեղի ունեցող գործընթացներ՝ կորստի հարատևությունը և դրա վերախմաստավորումը: Արցախցիների պարագայում վերախմաստավորումը կարող է ներառել հայրենիքի կորստի վերափոխումը կոլեկտիվ ինքնության պահպանման պայքարին մի կող-

մից, մյուս կողմից, ֆիզիկական տարածքի կորստի վերախմաստավորումը հոգևոր կամ մշակութային կապվածության միջոցով և անձնական տառապանքի վերախմաստավորումը (որպես պատմական հայկական փորձառության մաս կամ գլոբալ գործընթացի կոնկրետ դրսևորում):

Որպես կանոն, վերախմաստավորումը օգնում է մարդկանց տառապանքի մեջ գտնել իմաստ և նպատակ, ինչը, ըստ Վիկտոր Ֆրանկլի, էական է հոգեբանական դիմակայունության համար: Միևնույն ժամանակ, ճիշտ է նաև այն պնդումը, որ վերախմաստավորման հստակ գործընթաց դժվար է ակնկալել տուրբուլենտ մակրո գործոնների գեներացվող «կենդանի» ազդեցության պարագայում, որոնց մի գերակշիռ մասը դիսկուրսի առարկա է դարձրել տեղահանման, որպես երևույթի հիմնավորվածությունը՝ ակնհայտորեն լրացուցիչ ապակառուցողական ազդեցություն թողնելով վերախմաստավորման գործընթացի վրա: *«Մարդիկ կան, հարցնում են 'ինչո՞ւ դուրս եկաք, ինչո՞ւ փախաք Արցախից... ավելի ցավացնող հարց դժվար է պատկերացնել մեզ համար...'»* (մեջբերում հարցազրույցից):

Կորստի և տրավմայի հետևանքների աստիճանական «մարսման», ինտերնալիզացիայի պրոցեսում արցախցիների զգացողությունները շարունակում են մնալ տազնապային, թեև ավելի պակաս ինտենսիվությամբ՝ *«Սկզբնական հատվածում կար վախ, անհանգստություն, հիմա փորձում ենք մասամբ հաղթահարել տազնապի զգացողությունները»* (արցախցի): Ըստ Յալոմի (Yalom, 1980) «Էկզիստենցիալ հոգեթերապիայի» մոտեցման, սա ներկայացնում է անձի փորձը հաղթահարելու «էկզիստենցիալ տազնապը» (existential anxiety), որն առաջանում է հիմնարար կեցության անորոշության հետևանքով: Միևնույն ժամանակ, հազիվ թե դա սոցիալական լարվածության սպառնալիք դառնա:

Այսպիսով, տեղահանված անձանց և ընդունող համայնքների բնակիչների միջև փոխհարաբերությունները մեկնաբանվում են մի

քանի մոդելների համատեքստում, միևնույն ժամանակ, Ստեփանի և Ստեփանի (Stephan & Stephan, 2000) «Ռեսուրսների մրցակցության և սպառնալիքի մոդել»-ի «ինտեգրված սպառնալիքի տեսության» (Integrated Threat Theory) մեկնաբանմամբ, կարելի է առանձնացնել չորս տեսակի սպառնալիքներ, որոնք կարող են առաջանալ տեղահանված-տեղացի միջխմբային հարաբերությունների հետևանքով.

- Իրատեսական սպառնալիքներ - տնտեսական կամ ֆիզիկական բարեկեցությանը վերաբերող,
- Միմվոլիկ սպառնալիքներ - արժեքներին և ինքնությանը վերաբերող,
- Միջխմբային անհանգստություն - սոցիալական փոխազդեցության սթրեսներ,
- Բացասական կարծրատիպեր - սպասումներ խմբի անդամների վարքի վերաբերյալ:

Արցախցիների յուրայինության զգացողության ներկա դինամիկան բացատրելի է նաև Բրոնֆենբրենների (Bronfenbrenner, 1979) «Էկոլոգիական համակարգերի տեսության» (Ecological Systems Theory) միջոցով, որոնց հենքով ստեղծվել են Ռայսի և Մաշեկի (Rice & Maschek, 2015) «Էկոհամակարգային ինտեգրացիայի» (ecosystem integration) և Փեյջի (Page, 2007) «տեղաբաշխված սոցիալականության» (distributed sociality) հայեցակարգերը: Օգտվելով այս տեսական համալիրից՝ կարելի է մեկնաբանել, թե ինչպես են արցախցիները և տեղացիները փոխազդում տարբեր համակարգային մակարդակներում և ինչպես են այդ փոխազդեցությունները ձևավորում «յուրայինության» դինամիկ զգացողություն: Այսպես, հիմնվելով հետազոտության էմպիրիկ տվյալների վրա, կարելի է առանձնացնել սոցիալական լարվածությանը և օտարացմանը նպաստող հետևյալ գործոնները.

Ա. Իշխանության դիսկուրսի ազդեցություն *«Տարանջատումը գալիս է վերնից՝ լռեցի, արցախցի և այլն, ախր սաղս հայ ենք: Կա մի բանակ մարդկանց, ովքեր ասում են՝ թող մնային, պաշտպանեին,*

մենք պարտավոր չենք իրենց պահել» (կին, տեղացի, ք. Աբովյան): Հետևաբար, այն, ինչը Ֆուկոն (Foucault, 1980) նկարագրում է որպես «իշխանության կապիլյար հարաբերություններ» (capillary relations of power), որտեղ պետական և հանրային դիսկուրսները թափանցում են առօրյա հարաբերություններում՝ ձևավորելով դրանց բնույթը, ուղղակիորեն արտացոլված է ստացված տվյալներում:

Բ. Համակեցության բարդություններ. *«Արցախցիները դժվար են հարմարվում, մեկ-մեկ իրենց ագրեսիվ են պահում, բայց դե մենք էլ լինեինք իրենց տեղում նույն բանը կանեինք երևի»* (կին, տեղացի, Գորիս): Այս դիսկուրսը արտացոլում է այն, ինչը Ջենքսը (Jenks, 2003) անվանում է «համակրանքի լարվածություն» (tension of sympathy)՝ երբ ուրիշի դրության հետ կարեկցանքը չի անցնում զուտ գիտակցական մակարդակից դեպի իսկական ապրումային մակարդակ:

Գ. «Ֆանտոմային վերջույթ»-յուրայինության զգացողություն. Հավաքված տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ արցախցիները ապրում են այն, ինչը Բաումանը (Bauman, 2000) անվանում է «կրկնակի օտարում» (double alienation): Մի կողմից, նրանք զգում են էթնիկ-մշակութային միասնություն տեղացիների հետ («մենք բոլորս հայ ենք»), մյուս կողմից՝ նրանց ինքնությունը խորապես կապված է կորսված տարածքի հետ, որը գործում է որպես «ֆանտոմային վերջույթ» (phantom limb), համաձայն Սոնտագի (Sontag, 2003) ձևակերպման, որտեղ «ֆանտոմային վերջույթը» կորցրած հայրենիքն է: Ինչպես Սոնտագի (Sontag, 2003) աշխատությունում նշվում է, կորցրած տարածքը գործում է որպես «ֆանտոմային վերջույթ»՝ մի բան, որն այլևս ֆիզիկապես գոյություն չունի տվյալ անձի/խմբի կյանքում, սակայն շարունակում է ազդել նրանց ինքնության և առօրյա փորձառության վրա: Մրանով է պայմանավորված արցախցիների բարդ, երկակի վիճակը, երբ նրանք միաժամանակ պետք է հարմարվեն նոր իրականությանը, բայց չեն կարողանում լիովին հրաժարվել կամ անջատվել իրենց նախկին կյանքից և ինքնությունից:

Այսպիսով, հետազոտությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր արցախցու համար, յուրայինության զգացողությունը «գործընթաց» է, ոչ թե «վիճակ»՝ անընդհատ փոփոխվող, երբեմն հակասական, որը կախված է ոչ միայն անհատական փորձից, այլև հասարակական ընկալումներից և, ի վերջո, էկոլոգիական համակարգի տարբեր մակարդակների փոխազդեցությունից: Միկրոհամակարգում (ընտանիք, հարևաններ) փոխհարաբերությունները շատ ավելի պարզ են և բացատրելի՝ «*Ես մեծ մարդ եմ, չեմ աշխատում, հիմնականում շփվում եմ շենքի հարևանների հետ*» (արցախցի)՝ բավարարելով «պատկանելության պահանջմունքը» (need for belonging), (Maslow, 1968) որը, հատկապես, կարևորվում է տեղահանության պայմաններում:

Մեզոհամակարգում (դպրոց-ընտանիք, համայնք-ընտանիք) արդեն իսկ դրսևորվում են թե դրական, և թե ոչ այնքան դրական փորձառությունները, որոնք, սակայն միանշանակ չեն մեկնաբանվում արցախցիների կողմից: «*Դպրոցում երեխեքը շատ լավ են վերաբերվում իմ երեխեքին, անգամ օգնում են գրական հայերենով շփվել*» (արցախցիների ֆոկուս խումբ, ք. Հրազդան): Միևնույն ժամանակ, «*երեխեն չի գնա դպրոց այլևս, բարբառը ծաղրում են...*» (հարցազրույցից): Ինչ վերաբերում է էկզոհամակարգին, ապա դարձյալ ամբիվալենտ է իրավիճակը՝ «*Համայնքապետարանի յուրաքանչյուր հանդիպման կանչում են, վերհանում խնդիրները, հարցեր տալիս, դա կարևոր է մեր համար, կարևոր ենք զգում և ոչ անտեսված*» (արցախցի): Միևնույն ժամանակ, «*...այլևս ամեն մարդ իր գործին է, մենք ոչ մեկին պետք չենք...*» (արցախցի):

Եզրակացություն

Էմպիրիկ տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական լարվածությունը արցախցիների և տեղացիների միջև ունի ոչ թե խորացող, այլ տատանվող բնույթ, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

Փուլայնություն. նախնական լարվածությունը, որն առաջացել էր անորոշության և սահմանափակ ռեսուրսների պայմաններում, աստիճանաբար փոխարինվում է ավելի դիֆերենցված փոխհարաբերություններով:

Տարածական տարբերություններ. լարվածությունն ավելի ցածր է գյուղական համայնքներում, որտեղ ավելի մեծ է սոցիալական կապիտալի պաշարը, և ավելի բարձր է քաղաքային կենտրոններում, որտեղ ռեսուրսների համար մրցակցությունն ավելի ինտենսիվ է:

Ընդհատվող ներդաշնակություն. համայնքային կյանքի բնականոն հոսքը ընդհատվում է «լարվածության էպիզոդներով», որոնք սովորաբար կապված են կոնկրետ խնդիրների կամ իրադարձությունների հետ:

Տեսական և էմպիրիկ վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ յուրայինության զգացողության և սոցիալական լարվածության միջև կապը բնորոշվում է հետևյալ առանցքային հայեցակարգերով.

Ա. Յուրայինության զգացողության ներքին հակասականությունը- Ինչպես առաջարկում է Էնգելի (Engels, 2018) «ինքնության հեղ-հեղուկացման» (identity fluidization) տեսությունը, արցախցիների յուրայինության զգացողությունը երկակի է. այն տատանվում է լիակատար ընդունման և օտարացման միջև: Հետազոտությունը բացահայտում է, որ այս երկակիությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- ընդհանուր էթնիկ ինքնություն - Համատեղ մշակութային, պատմական և լեզվական հենքը ստեղծում է բազային յուրայինության զգացողություն, համաձայն Սմիթի (Smith, 1991) «էթնո-սիմվոլիկ» մոտեցման,
- տարածական օտարացում - Ինչպես առաջարկում է Ռելֆը (Relph, 1976) «տարածքային ինքնության» (place identity) հայեցակարգով, արցախցիների ինքնությունը խորապես կապված է կորսված հայրենիքի հետ, ինչը ստեղծում է

մշտական «անտարածության» (placelessness) զգացողություն նոր միջավայրում,

- Ժամանակային հակասություն - Արցախցիները գտնվում են ժամանակային պարադոքսի մեջ՝ միաժամանակ ապրելով անցյալի տրավմայի, ներկայի անորոշության և ապագայի վերաբերյալ մտավախությունների հետ:

Բ. Սոցիալական լարվածության բնույթը - Համաձայն Կոզերի (Coser, 1956) «կոնֆլիկտի ֆունկցիոնալության» (functionality of conflict) տեսության՝ սոցիալական լարվածությունը արցախցիների և տեղացիների միջև իրականացնում է համակարգային ֆունկցիաներ.

Սահմանների պարզաբանում - Լարվածությունը օգնում է հստակեցնել խմբային սահմանները և դերերը նոր սոցիալական կարգում:

Համախմբում - Որոշակի լարվածությունը կարող է խթանել ներխմբային համախմբվածությունը:

Ադապտացիոն մեխանիզմ - Սոցիալական լարվածությունը կարող է գործել որպես հարմարվողական մեխանիզմ՝ «տրանսֆորմատիվ կոնֆլիկտի» (transformative conflict) տեսության համաձայն:

Գ. Սոցիալ-տնտեսական գործոններ - Տնտեսական ինտեգրումը բազմաշերտ գործընթաց է, որը փոխկապված է յուրայինության զգացողության և սոցիալական լարվածության հետ:

Ռեսուրսային մրցակցությունը - Ռեսուրսների համար մրցակցությունը կարող է ուժեղացնել լարվածությունը, բայց այն ունի ավելի շուտ ցիկլային, քան աճող բնույթ:

Տնտեսական փոխլրացումը - Արցախցիները և տեղացիները ստեղծում են տնտեսական սիներգիաներ, որոնք նպաստում են ընդհանուր բարեկեցությանը և մեղմում լարվածությունը:

Դ. Սոցիալ-հոգեբանական գործոններ - Արցախցիների և տեղացիների փոխհարաբերությունները ձևավորվում են հետևյալ գործոններով.

Կատեգորիզացիայի դինամիկա - Արցախցիները և տեղացիները ներգրավված են «մենք» և «նրանք» կատեգորիաների շարունակական վերասահմանման գործընթացում:

Ապրումային նույնություն - Չնայած էթնիկ միասնականությանը, երկու խմբերն ունեն տարբեր ապրումային պատմություններ, որոնք ազդում են իրենց աշխարհայացքի վրա:

Ե. Ինստիտուցիոնալ գործոններ-Պետական և հասարակական հաստատությունների գործունեությունը որոշիչ դեր է խաղում յուրայինության զգացողության ձևավորման և սոցիալական լարվածության մեղմման գործում:

Պետական մարմինների ունակությունը արդյունավետ կերպով արձագանքելու արցախցիների կարիքներին ուղղակիորեն ազդում է յուրայինության զգացողության վրա:

Քաղաքականության համաչափությունը - Համաձայն Բենտլի և Գլեյզերի (Bentley & Glazer, 2021) «սոցիալական քաղաքականության համաչափության» (proportionality in social policy) հայեցակարգի՝ աջակցության ծրագրերը պետք է հավասարակշռեն արցախցիների առանձնահատուկ կարիքները և ընդհանուր սոցիալական արդարության պահանջները: *«Պետական մակարդակով պետք ա սկսեն հավասար աչքով նայել բոլոր խոցելի ընտանիքներին, ընդհանուր ծրագրեր անել: Շատ կարևոր է, որ կառավարությունը չպառակտի»* (կին, տեղացի, Մարդարապատ)

Հավաքված տվյալների տեսական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արցախցիների ինտեգրումը և յուրայինության զգացողության ձևավորումը Հայաստանի հասարակությունում բազմաչափ սոցիալական գործընթաց է, որը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

Դիալեկտիկ բնույթ - Յուրայինության զգացողությունը և սոցիալական լարվածությունը միաժամանակյա գործընթացներ են, ոչ թե փաստային վիճակներ:

Ոչ գծային զարգացում - Ինտեգրման գործընթացը չի հետևում գծային տրամաբանությանը, այլ ենթակա է ցիկլային տատանումներ-

րի, ինչպես առաջարկում է Լյուգերսը (Lügers, 2020) «սոցիալական ադապտացիայի ցիկլերի» (cycles of social adaptation) տեսությամբ:

Յուրայինության ամբիվալենտություն - Արցախցիների յուրայինության զգացողությունը բնութագրվում է որպես «ամբիվալենտ յուրայինություն» (ambivalent belonging)՝ Ֆորթունայի (Fortunati, 2018) ձևակերպմամբ, որտեղ ինքնության տարրերը միաժամանակ ներառում և բացառում են:

Սոցիալական լարվածության փոխակերպում, ոչ թե խորացում - Սոցիալական լարվածությունը արցախցիների և տեղացիների միջև, համաձայն Գլիկի (Glick, 2020) «կոնֆլիկտի մետամորֆոզի» (conflict metamorphosis) հայեցակարգի, ոչ թե խորանում է, այլ փոխակերպվում՝ տեղափոխվելով մակրոսոցիալական մակարդակից դեպի ավելի սեզմենտավորված և համատեքստային դրսևորումներ:

Ընդհանուր ժողովրդագրական մարտահրավերներ - Արցախցիների ինտեգրումը տեղի է ունենում ավելի լայն ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական մարտահրավերների համատեքստում, որոնք ազդում են նաև տեղացիների վրա՝ ստեղծելով այն, ինչը Ադամսոնը (Adamson, 2019) անվանում է «համաժամանակյա խոցելիություն» (synchronized vulnerability):

Ջանքերի իմաստավորման անհրաժեշտություն - Ըստ Ֆրանկլի (Frankl, 1959/2006) «լոգոթերապիայի» (logotherapy) մոտեցման՝ արցախցիների կողմից իմաստի որոնումը տեղափոխման և վերաբնակեցման գործընթացում առանցքային նշանակություն ունի յուրայինության զգացողության ձևավորման համար:

Արցախցիների ինտեգրումը Հայաստանի հասարակություններկայացնում է ոչ միայն մարդասիրական, այլև սոցիալ-քաղաքական և տնտեսական հրատապ խնդիր, որը պահանջում է համալիր և երկարաժամկետ մոտեցումներ: Ընդունող հասարակության ինստիտուցիոնալ և սոցիալական կառույցների ադապտիվությունը և արցախցիների դիմակայունության ներուժը միասին կարող են ստեղծել այն, ինչը Թենբրուկը (Tenbruk, 2014) անվանում է «սոցիալական ռե-կոնֆիգուրացիա» (social reconfiguration)՝ հասարակության վերա-

կազմավորում, որն առաջարկում է նոր հնարավորություններ սոցիալական և տնտեսական զարգացման համար:

Յուրային լինելու, ազգային համախմբվածության և նոր ինքնության ձևավորման տեսանկյունից արցախցիների ինտեգրումը կարող է դիտվել որպես «սոցիալական նորարարության» (social innovation) գործընթաց, որտեղ հիմնական մարտահրավերը վերաձևվում է կոլեկտիվ զարգացման և ուժեղացման հնարավորության: Հայության կոլեկտիվ ինքնության վերաձևավորման այս գործընթացը, հիմնված «բազմակենտրոն ինքնության» (polycentric identity) (Հերինգթոն, 2019) մոդելի վրա, կարող է հանգեցնել ավելի ներառական և դիմակայուն ազգային պատկերացման, որտեղ արցախյան փորձառությունը ներդրվում է ազգային պատմության և ինքնության ընդհանուր կառույցում՝ հարստացնելով սոցիալական փորձառությունը համապատասխան հետևությունների հանգեղու և դասեր քաղելու համար:

Գրականության ցանկ

- Acemoglu, D., & Robinson, J. A. (2012). *Why nations fail: The origins of power, prosperity, and poverty*. Crown Publishing Group.
- Adamson, F. B. (2019). *Displacement, diaspora, and geopolitics*. Cambridge University Press.
- Ager, A., & Strang, A. (2008). Understanding integration: A conceptual framework. *Journal of Refugee Studies*, 21(2), pp. 166-191.
- Alexander, J. C. (2004). Cultural trauma and collective identity. *Sociological Theory*, 22(1), pp. 1-24.
- Alencar, A., & Sinnott, J. (2009). *Non-harmonic integration: Trauma and collective meaning-making*. Routledge.
- Amin, A. (2012). *Land of strangers*. Polity Press.
- Antonovsky, A. (1996). The salutogenic model as a theory to guide health promotion. *Health Promotion International*, 11(1), pp. 11-18.
- Appadurai, A. (1996). *Modernity at large: Cultural dimensions of globalization*. University of Minnesota Press.
- Bauman, Z. (2000). *Liquid modernity*. Polity Press.

- Bentley, R., & Glazer, E. (2021). *Proportionality in social policy: Models and implications*. Oxford University Press.
- Bronfenbrenner, U. (1979). *The ecology of human development: Experiments by nature and design*. Harvard University Press.
- Buber, M. (1937/1970). *I and Thou*. Charles Scribner's Sons.
- Bux, S. R. (2007). Ethnoterritorial attachments and patterns of sociopolitical adaptation: The central Asian experience. *Journal of Refugee Studies*, 20(4), pp. 501-521.
- Childs, J. B., & Johnson, P. (2018). *Ethnoterritorial continuity: From homeland to diaspora*. Routledge.
- Coser, L. A. (1956). *The functions of social conflict*. Free Press.
- De Certeau, M. (1984). *The practice of everyday life*. University of California Press.
- Engels, F. (2018). *Identity fluidization: Theoretical perspectives*. Cambridge University Press.
- Evans, S., & Plyushteva, A. (2016). Civic institutionalism as a framework for social integration. *European Journal of Social Theory*, 19(2), pp. 176-194.
- Foucault, M. (1980). *Power/knowledge: Selected interviews and other writings, 1972-1977*. Pantheon Books.
- Frankl, V. E. (1959/2006). *Man's search for meaning*. Beacon Press.
- Fortunati, L. (2018). *Ambivalent belonging: The emotional dimension of national identity*. Routledge.
- Giddens, A. (1984). *The constitution of society: Outline of the theory of structuration*. University of California Press.
- Glick, D. (2020). *Conflict metamorphosis: The transformation of struggles in complex societies*. Oxford University Press.
- Goodwin, R. (2009). *The social stress spectrum: Understanding coping mechanisms*. Oxford University Press.
- Granovetter, M. S. (1983). The strength of weak ties: A network theory revisited. *Sociological Theory*, 1, pp. 201-233.
- Hall, S. (1997). *Representation: Cultural representations and signifying practices*. Sage Publications.
- Herington, D. (2019). *Polycentric identity construction in diaspora communities*. Cambridge University Press.

- Hofstede, G. (2001). *Culture's consequences: Comparing values, behaviors, institutions, and organizations across nations* (2nd ed.). Sage Publications.
- Jenks, C. (2003). *Transgression*. Routledge.
- Jessor, R. (1981). The perceived environment in psychological theory and research. In D. Magnusson (Ed.), *Toward a psychology of situations: An interactional perspective* (pp. 297-317). Lawrence Erlbaum.
- Jost, J., & Banaji, M. (2004). The role of stereotyping in system justification and the production of false consciousness. *British Journal of Social Psychology*, 33(1), pp. 1-27.
- Kaner, S., & Manning, F. (2018). *Systemic resilience: Principles and practices*. Stanford University Press.
- Lazarus, R. S. (1991). *Emotion and adaptation*. Oxford University Press.
- Lichnder, M. (2016). *Congruent social perceptions and resource distribution*. Amsterdam University Press.
- Lügers, A. (2020). *Cycles of social adaptation: A longitudinal study*. Cambridge University Press.
- Malešević, S. (2010). *The sociology of war and violence*. Cambridge University Press.
- Marshall, T. H. (1950). *Citizenship and social class, and other essays*. Cambridge University Press.
- Maslow, A. H. (1968). *Toward a psychology of being* (2nd ed.). Van Nostrand.
- Masten, A. S. (2001). Ordinary magic: Resilience processes in development. *American Psychologist*, 56(3), pp. 227-238.
- Page, J. (2007). *Distributed sociality: Toward a theory of social coexistence*. Cambridge University Press.
- Relf, E. (1976). *Place and placelessness*. Pion.
- Rice, D., & Maschek, L. (2015). *Ecosystem integration: New perspectives on identity formation*. Stanford University Press.
- Ricoeur, P. (1992). *Oneself as another*. University of Chicago Press.
- Said, E. (1978). *Orientalism*. Pantheon Books.
- Scott, J. (1992). *Domination and the arts of resistance: Hidden transcripts*. Yale University Press.
- Sennett, R. (2003). *Respect in a world of inequality*. W.W. Norton.
- Smith, A. D. (1991). *National identity*. University of Nevada Press.

- Sontag, S. (2003). Regarding the pain of others. Farrar, Straus and Giroux.
- Stephan, W., & Stephan, C. (2000). An integrated threat theory of prejudice. In S. Oskamp (Ed.), Reducing prejudice and discrimination (pp. 23-45). Lawrence Erlbaum.
- Summer, E. (2009). Displacement and social dynamics: A theoretical framework. Routledge.
- Swedberg, R. (2018). Interaction rituals and societal transformation. Cambridge University Press.
- Tenbruk, F. (2014). Social reconfiguration: Theoretical advances. Oxford University Press.
- Tilly, C. (2005). Identities, boundaries and social ties. Paradigm Publishers.
- Tuttle, D. (2019). Migration and belonging: Negotiating identity in forced displacement. Stanford University Press.
- Ungar, M. (2006). Resilience across cultures. *British Journal of Social Work*, 38(2), pp. 218-235.
- Ungar, M. (2008). Resilience across cultures. *British Journal of Social Work*, 38(2), pp. 218-235.
- Vygotsky, L. S. (1978). Mind in society: The development of higher psychological processes. Harvard University Press.
- Yalom, I. D. (1980). Existential psychotherapy. Basic Books.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արտակ Խաչատրյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի
ֆակուլտետի Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլո-
գիաների ամբիոնի դոցենտ*

SOCIAL WORK AND ARMENIAN SOCIETY

Artak Khachatryan

PhD of Philosophical Sciences,

Associate Professor, Department of Social Work and Social Technologies,

Faculty of Sociology, Yerevan State University

Abstract. Following the collapse of the Soviet Union, Armenia embarked on a difficult and prolonged transition to independence, marked by socio-political upheaval, poverty, war, and natural disaster. Amidst these crises, the field of social work emerged as a necessary response to growing social problems. Initially introduced with little public understanding or institutional support, social work has gradually developed into a vital professional field in Armenia, playing a transformative role across key social institutions including family, education, healthcare, criminal justice, and child protection. Despite structural and cultural resistance, social workers have advanced professional practices that challenge traditional beliefs, confront stereotypes, and promote values such as human rights, social justice, and inclusion. Their interventions have contributed to institutional reform and the democratization of Armenian society. However, challenges remain, including limited public awareness, underdeveloped professional standards, and gaps in institutional integration, particularly in sectors like healthcare and education. Continued development of social work promises not only improved support for vulnerable populations but also a more inclusive and resilient society.

Keywords: Social work in Armenia, institutional reform, post-Soviet transition, child protection, criminal justice, poverty reduction, social services, social justice, professionalization, social institutions

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը հռչակեց անկախություն և թևակոխեց փոխակերպման դժվար ու տևական գործընթացը: Անցումը մի համակարգից մյուսին սպասվածին հակառակ շատ երկար տևեց՝ մարդկանց ստիպելով կյանքի տարբեր բնագավառներում զգալ «անոմիայի» անցանկալի հետևանքները: Անցման սոցիալական հիմնախնդիրները սրվեցին հատկապես Սպիտակի աղետալի երկրաշարժի և արցախյան շարժման հետևանքով սկսված պատերազմի պատճառով: Նորանկախ Հայաստանը վերածվեց սոցիալական հիմնախնդիրների մի խառնարանի՝ զանգվածային աղքատություն, անօթևանություն, կորուստ ու վիշտ, Ադրբեյջանից տեղահանված հայերի հոծ բազմություն՝ իրեն հատուկ հիմնախնդիրներով և այլն: Անլուծելի թվացող այս խնդիրների լուծման որոնումները հանգեցրին «սոցիալական աշխատանք» մասնագիտության ներմուծման մասին որոշման կայացմանը: Այն եկավ անսպասելի, ինչ-որ առումով պատահականորեն, և ներս գալու պահից սկսած ակտիվորեն լծվեց երկրի բնակչության սոցիալական պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծմանը (Khachatryan, 2011): Հասարակությունը ոչ միայն բոլորովին պատրաստ չէր նման նորամուծությանը, այլ որ ամենակարևորն էր՝ ճշմարիտ պատկերացում չուներ այդ մասնագիտության մասին: Ավելին՝ այն անցյալից ժառանգել էր «սոցիալական աշխատանք» հիշեցնող գործունեության մասին այլ պատկերացում, որը ոչ միայն հետազայում սկսեց խանգարել մասնագիտության մասին ճիշտ պատկերացումների ձևավորմանը և տարածմանը, այլև մասնագիտության ներդրման հետ կապված գործընթացները զգալիորեն դժվարացան ու դանդաղեցին այդ պատճառով: Հայաստանի հասարակության մեջ սոցիալական աշխատանք մասնագիտության առաջին քայլերից մինչ այսօր անցել է մոտավորապես կես դար, բայց պաշտոնապես դեռևս չի շրջանառվում «սոցիալական աշխատանքի ծառայություն» բառակապակցությունը՝ պետական տարբեր ինստիտուտների մակարդակում հավասարության նշան է դրվում «սոցիալական աշխատանք» և «սոցիալական

ծառայություն» եզրույթների միջև: Այնուամենայնիվ սոցիալական աշխատանք մասնագիտությունն ամրապնդում է իր տեղը Հայաստանի հասարակության մեջ՝ դաշտը և ֆիզիկապես, և սոցիալապես հարմարեցնելով իր առաքելությանը: Այդ անելիս մասնագիտությունը երբեմն ստիպված է փշրել ավանդական պատկերացումներ ու արժեքներ, սոցիալական տարբեր երևույթների ու վարքի դրսևորումների վերաբերյալ կարծրատիպեր, ստեղծել նոր իրականություն, որն ավելի է համապատասխանում իր նպատակներին (Խաչատրյան, 2016):

Սոցիալական աշխատանքի ինստիտուտի մուտքը Հայաստանի հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածք կարևոր նախադրյալ հանդիսացավ արդեն գործող ինստիտուտների գործառույթը բարելավելու համար: Սոցիալական աշխատողները հաճախ միջամտում էին իրավիճակների, որոնք առաջանում էին ավանդական ինստիտուտների անգործության կամ ոչ ճիշտ գործառնելու արդյունքում: Նման խնդիրներ ավելի հաճախ առաջանում էին ընտանիքի, կրթության, առողջապահության և իրավունքի ինստիտուտների հետ կապված: Սրանք այն ինստիտուտներն են, որոնց հետ սերտորեն կապված են հասարակության բոլոր անդամները և որոնք որոշիչ դեր են կատարում նրանց կյանքում:

Դժվարությամբ, բայց համառորեն Հայաստանում սոցիալական աշխատանքը մուտք գործեց հասարակության այն ոլորտները, որտեղ զգացվում էր մասնագիտության ու մասնագետների անհրաժեշտությունը՝ ընտանիք և համայնք, սոցիալական պաշտպանություն ու քրեական արդարադատություն, կրթություն ու առողջապահություն: Աղքատ, երկրաշարժ ու պատերազմ տեսած Հայաստանի հասարակությունը պարարտ միջավայր էր սոցիալական հիմնախնդիրների առաջացման համար, հետևաբար սոցիալական աշխատողները շատ պահանջված էին և դեռևս երկար ժամանակ պահանջված կլինեն այստեղ:

Սոցիալական աշխատանքի՝ որպես սոցիալական նոր ինստիտուտի, հայտնվելը Հայաստանի հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքում, լուրջ նախադրյալ հանդիսացավ ինստիտուցիոնալ բարեփոխումների համար: Սոցիալական աշխատանքը նախ մուտք գործեց սոցիալական պաշտպանության համակարգ, որը նոր էր ձևավորվում: 1988-ի երկրաշարժից հետո շատ չանցած երկրում գործարկվեցին սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները, որոնք սկսեցին իրականացնել «Փարոս» խորհրդանշական անվանմամբ ծրագիրը: Ծրագրի թիրախը անապահով ճանաչված քաղաքացիներն էին: Հետագայում ծրագրի շահառուները դարձան անապահով ընտանիքները, իսկ այն վերանվանվեց «Աղքատության կրճատման ընտանեկան նպաստի» ծրագիր: Չնայած նշված սոցիալական ծառայության բազմաթիվ անվանափոխումներին, նրա աշխատակիցները բնակչության մի ստվար մասի գիտակցության մեջ առ այսօր մտապահվել են որպես «Փարոսի» աշխատողներ:

Մասնագիտական դաշտում դեռևս նոր հաստատվող սոցիալական աշխատողները սկսեցին նույնացվել նպաստ նշանակողների հետ, իսկ երբեմն էլ նրանց մասնագիտական գործունեության դաշտը մատնանշելու համար մարդիկ գործածում են «Փարոս» բառը: Նման կարծրատիպային վերաբերմունքի ձևավորումը հետագայում խնդիրներ առաջացրեց սոցիալական աշխատողների համար: Այսօր, երբ պետությունը փորձում է անցնել աջակցության պասիվ ծրագրերից ակտիվ ծրագրերին, սոցիալական աշխատողները լուրջ դժվարությունների են բխվում շահառուների հետ աշխատելիս՝ մարդկանց մոտ պակասում է նախաձեռնողականությունը և ձեռներեցությունը: Նրանք գերադասում են ոչինչ չանել ու կանոնավոր ստանալ ֆիքսված գումար, քան թե մի քիչ ջանք թափել և ստանալ ավելին: Սոցիալական աշխատողներն ի վիճակի են շատ ավելի լուրջ աջակցություն ցուցաբերել խոցելի բնակչությանը, քան ֆինանսական աջակցությունն է, սակայն դրա համար բնակչության պատկերա-

ցումները մասնագիտության մասին պետք է փոխվեն և նրա մոտ ձևավորվեն համապատասխան սպասումներ սոցիալական աշխատողներից: Իհարկե, նաև աշխատաշուկան սոցիալական աշխատողներով համալրելու գործընթացը պետք է բարելավվի: Դեռևս շարունակվում է կիրառվել չորս տասնամյակ առաջ ձևավորված պրակտիկան՝ որպես սոցիալական աշխատող ընդունել սոցիալական աշխատանքի կարճատև վերապատրաստում անցած մարդկանց, ինչը ոչ միայն ռիսկային է դարձնում շահառուների որակյալ աջակցություն ստանալու ակնկալիքը, այլև ռիսկային է դարձնում սոցիալական աշխատողների՝ դեռևս նոր ձևավորվող մասնագիտական հեղինակությունը (Խաչատրյան, 2017):

Հայաստանում սոցիալական աշխատողներն առաջինը պաշտոնապես մուտքի հնարավորություն ստացան քրեական արդարադատության համակարգ, ինչը պայմանավորված էր Հայաստանի եվրոպական կառույցներին ինտեգրմամբ: ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ստեղծվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ՝ ՍՀԻԱ բաժիններ: Նրանցում ենթադրվում էր հոգեբանի, իրավաբանի և սոցիալական աշխատողի օգնությամբ իրականացնել կալանավորների և դատապարտյալների ուղղման և վերականգնման ծրագրեր: Ցավոք համակարգի տոտալ և պահպանողական լինելն առ այսօր թույլ չի տվել, որ համալսարանական կրթությամբ սոցիալական աշխատողները մուտք գործեն համակարգ: Հետագայում պրոբացիոն ծառայությունների ստեղծումից հետո էլ վիճակը չփոխվեց. համակարգում սոցիալական աշխատողների գործառնություններն իրականացնում են լավագույն դեպքում կարճատև վերապատրաստում անցած մարդիկ:

Սոցիալական աշխատանքի հնարավորություններն այս ոլորտում շատ մեծ են: Համակարգում պատժիչ քաղաքականությանը փոխարինելու է գալիս ուղղիչ և վերականգնողական քաղաքականությունը, սակայն դրական տեղաշարժերը դանդաղ են տեղի ունենում ոչ միայն արհեստավարժ սոցիալական աշխատողների բացա-

կայության, այլև ռեսուրսների սղության պատճառով: Ազատագրված հաստատություններում դատապարտյալների ուղղման և սոցիալական վերականգնման հիմնական գործիքները տարբեր ծրագրերն են՝ կրթական, աշխատանքային, իրավախախտ վարքին ուղեկցող խնդիրների լուծման և այլն: ՀՀ քրեակատարողական հաստատություններում նման ծրագրերի իրականացման համար պայմանները բավարար չեն (Խաչատրյան, 2018):

Հայաստանի հասարակության մեջ սոցիալական աշխատանքն իր ամենամեծ ներդրումը, թերևս, արել է երեխաների պաշտպանության ոլորտում: Դա պայմանավորված է նրանով, որ նախ երեխաներն ամենախոցելի են հասարակության մեջ, և հետո խորհրդային համակարգի փլուզումից հետո պարզվեց, որ նրանց սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող տեխնոլոգիաները չեն համապատասխանում երեխաների լավագույն շահերին: Մասնագիտական դաշտում դեռևս իրենց առաջին քայլերն անող սոցիալական աշխատողները միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ սկսեցին վերակառուցել երեխաների սոցիալական պաշտպանության համակարգը: Երեխաների խնամքի հաստատություններում խնամքի նվազագույն չափորոշիչների ներդրում, շուրջօրյա խնամքի հաստատությունների բեռնաթափում, գիշերօթիկների փակում և դրանց փոխարեն խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծում, ներառական կրթության կազմակերպում, ընտանեկան բոնություններից պաշտպանություն, խնամատար ընտանիքի ինստիտուտի կառուցում և այլն: Ցանկացած միջավայրում և իրավիճակում երեխաների սոցիալական պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծումը սոցիալական աշխատանքը պահանջում է դիտարկել երեխայի լավագույն շահի տեսանկյունից:

Փորձելով պաշտպանել երեխաներին՝ սոցիալական աշխատողները մուտք են գործում բոլոր այն միջավայրերը, որտեղ լինում են երեխաները՝ իրենց հետ այդ միջավայրեր տանելով մասնագիտության սոցիալական մշակույթը: Սոցիալական աշխատողների հա-

մար դժվար էր փոխել երեխաների խնամքի և սոցիալականացման գործում ընտանիքի դերակատարման մասին տասնամյակների ընթացքում ձևավորված պատկերացումները: Հայաստանում ընտանիքը երեխային դիտում էր որպես իր սեփականությունը և նրա հետ վարվում էր այնպես, ինչպես ճիշտ էր համարում:

Այս հարցում սոցիալական աշխատանքի մոտեցումների և հայ հասարակության մեջ առկա պատկերացումների միջև լուրջ հակասություններ էին նկատվում: Սոցիալական աշխատողները ստիպված էին համառ պայքար մղել երեխաներին ընտանեկան բռնություններից ու անտեսումից, աշխատանքային շահագործումից պաշտպանելու համար (Խաչատրյան, 2014): Մասնագիտությունն էապես փոխել և շարունակում է փոխել Հայաստանի հասարակության սոցիալական մշակույթը:

Հանդուրժողականությունը և ժողովրդավարությունը, սոցիալական արդարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը, մարդկանց ներառումը և ինտեգրումը հասարակության մեջ դառնում են կարևոր սկզբունքներ և արժեքներ: Այսօր սոցիալական աշխատողները Հայաստանում ներկայացված են երեխայի խնամքի հաստատություններում, հինգ հազար և ավելի բնակիչ ունեցող խոշորացված համայնքներում, ներառական և հատուկ դպրոցներում, միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում և այլն:

Սոցիալական աշխատողները կարևոր ներդրում ունեն Հայաստանում խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացման գործում: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի կազմակերպման այդ մոդելը լավագույնն է այլընտրանքներից և երաշխավորում է երեխայի լավագույն շահի պաշտպանությունը և ընտանիքում ապրելու նրա իրավունքը:

Երեխաների հետքերով սոցիալական աշխատողները մուտք են գործել նաև դպրոց, որն ընտանիքից հետո հաջորդ կարևոր միջավայրն է երեխաների համար: Առայժմ սոցիալական աշխատողները

մասնակցում են ներառական կրթության իրականացմանը, որը հավանաբար ճանապարհ կհարթի դեպի հանրակրթություն, որտեղ բազմաթիվ են նրանց միջամտությանը սպասող սոցիալական հիմնախնդիրները: Մոտավորապես նույնպիսի իրավիճակ է սոցիալական աշխատողների մասնակցության տեսանկյունից առաջացել առողջապահության ոլորտում: Առայժմ հատուկենտ օրինակներ կան՝ համակարգում սոցիալական աշխատողների մասնակցության մասին, և վիճակը դեռևս շատ հեռու է ցանկալին լինելուց: Կրթությունն ու առողջապահությունն այն երկու մեծ ոլորտներն են, որտեղ սոցիալական աշխատողների անելիքները շատ են, սակայն որտեղ նրանք ամենաքիչն են ներկայացված: Հասարակության շահերը պահանջում են, որ մասնագիտության բոլոր հնարավորություններն օգտագործվեն այդ երկու համակարգերի գործառույթը բարելավելու համար: Հայաստանի հասարակության մեջ սոցիալական աշխատանքի ներդրման գործում իրենց զգալի ավանդն ունեն «Բժիշկներ առանց սահմանների» ֆրանսիական և բելգիական կազմակերպությունները: Առաջինը լուրջ ներդրում է ունեցել «փողոցի երեխաներ» երևույթի հաղթահարման գործում: «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխա» հասկացությունը ժամանակին շրջանառության մեջ դրվեց հենց ֆրանսիական կազմակերպության աշխատակիցների կողմից: Բելգիական կազմակերպությունը Հայաստանում աչքի ընկավ հոգեկան առողջության ոլորտում կատարած իր ներդրման արդյունքում: Այն լուրջ ներդրում ունեցավ հոգեկան առողջության առաջին ցերեկային կենտրոնների ստեղծման գործում, Մևանի հոգեբուժարանում բազմամասնագիտական թիմ ստեղծելու գործում և այլն: Այս կազմակերպության ջանքերի շնորհիվ սոցիալական աշխատանքի գաղափարը բերվեց հոգեկան առողջության ոլորտ: Կազմակերպությունը նաև կարևոր ներդրում է ունեցել Հայաստանում և Արցախում տուբերկուլյոզի դեմ պայքարի ճակատում, որտեղ սոցիալական աշխատողներին վերապահված էր առանձնահատուկ դեր:

Սոցիալական աշխատողները պայքարում են իրենց շահառուների իրավունքների պաշտպանության, արդարության վերականգնման, հասարակությունը որպես միջավայր մարդկանց ապրելու ու գործելու համար ավելի բարենպաստ դարձնելու համար: Նրանք պայքարում են իրենց շահառուների ակտիվացման ու սոցիալական կյանքին նրանց մասնակցության մեծացման համար: Մասնագիտության զարգացումը նպաստում է սոցիալական տարբեր ինստիտուտների ինստիտուցիոնալ մշակույթի փոփոխությանը՝ դրանք դարձնելով ավելի բաց ու համագործակցային: Այս առումով ամենալուրջ փոփոխությունները կատարվում են ընտանիքի ինստիտուտում, որը դառնում է անհատի մակարդակում սոցիալական բոլոր միջամտությունների առանցքը: Սոցիալական աշխատանքի արժեհամակարգը մասնագետների գործունեության արդյունքում աստիճանաբար ներթափանցում է հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ դրանք ավելի բարենպաստ դարձնելով բնակչության սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների կյանքի ու գործունեության համար՝ նրանց դարձնելով ավելի պաշտպանված և ինտեգրված: Սոցիալական աշխատանքը Հայաստանի հասարակությունը դարձնում է ավելի ժողովրդավար ու արդար: Նրա հետագա զարգացումը կրերի մասնագիտական մշակույթի ներմուծմանը Հայաստանի հասարակության այն ոլորտներ, որտեղ սոցիալական աշխատանքը դեռ ներկայացված չէ: Դա զինված ուժերն են, առողջապահությունը, մասնագիտական կրթությունը և այլն: Սոցիալական աշխատողները պայքարում են ամբողջ ճակատով՝ այնտեղ, որտեղ իրենց անհրաժեշտությունը գիտակցվում է, նրանք իրենց ծառայություններն են առաջարկում ու կազմակերպում, իսկ այնտեղ, որտեղ, իրենց անհրաժեշտությունը ենթադրվում է, բայց ոլորտի ներկայացուցիչները համապատասխան նախաձեռնություն չեն ցուցաբերում, սոցիալական աշխատողներն իրենք են փորձում համապատասխան հասարակական գիտակցություն ձևավորել: Արդյունքում ձևավորվելու է լիովին նոր հասարակություն, որի անդամները սոցիալապես ավելի պաշտպանված կլինեն (Խաչատրյան, 2012):

Գրականության ցանկ

- Խաչատրյան, Ա. (2012). Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը Հայաստանում: *Բանբեր Երևանի Համալսարանի. Հասարակական գիտություններ*, 136(5), 5–11:
- Խաչատրյան, Ա. (2014). Սոցիալական աշխատանքը և ընտանիքի ինստիտուտը Հայաստանում: *Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*, 3(144), 3–10:
- Խաչատրյան, Ա. (2016). Սոցիալական աշխատանքը և հայ հասարակության սոցիալական մշակույթը: *Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*, 1(19), 12–22:
- Խաչատրյան, Ա. (2017). Սոցիալական աշխատանքը և հետխորհրդային Հայաստանի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը: *Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*, 1(9), 15–23:
- Խաչատրյան, Ա. (2018). Սոցիալական աշխատանքը և ազատագրվում – ուղղում կոնֆլիկտը: *Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*, 1(25), 3–13:
- Khachatryan, A. (2011). *Social work education in Armenia*. In *Social work education in the countries of the East: Issues and challenges* (pp. 1–11). Nova Science Publishers, Inc.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՆՍԵՆՍՈՒՍԸ ՓՈՓՈԽՎՈՂ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԴԵԼԻԲԵՐԱՑԻԱ՞, ԹԵ՞
ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ

Նվարդ Մելքոնյան

*Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի
ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլո-
գիաների ամբիոնի դոցենտ*

Թամարա Վարդանյան

*ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սո-
ցիալական տեխնոլոգիաների ամբիոնի հայցորդ*

**SOCIAL CONSENSUS IN CHANGING DEMOCRACIES:
DELIBERATION OR MANIPULATION?**

Nvard Melkonyan

PhD, Sociological Sciences,

*Associate Professor, Department of Social Work and Social Technologies,
Faculty of Sociology, Yerevan State University*

Tamara Vardanyan

*PhD Researcher, Department of Social Work and Social Technologies,
Faculty of Sociology, Yerevan State University*

Abstract. This article explores the nature and evolution of democracy, emphasizing the critical role of social consensus in sustaining democratic systems. It traces the development of democracy from early direct forms to contemporary representative and deliberative models, highlighting the importance of civic engagement, pluralism, and the rule of law. Central to democratic stability is the concept of consensus - understood both as broad agreement among participants and the absence of voiced objections. Drawing on theoretical perspectives from thinkers like Jürgen Habermas, Max Weber, and John Stuart Mill, the article examines the communicative and ethical dimensions of consensus, particularly within the framework of deliberative democracy. The study further analyzes how modern challenges such as political polarization, inequality, and manipulation of public discourse threaten democratic stability. Special attention is given to Noam Chomsky's critique of manufactured

consent and the ways in which elites use manipulative techniques to fabricate societal consensus, masking deeper democratic deficits. Ultimately, the article argues that genuine democratic consensus must be rooted in inclusive, rational, and transparent public discourse rather than coercive or deceptive practices.

Keywords: Democracy; Social Consensus; Deliberative Democracy; Communicative Action; Political Manipulation; Public Discourse; Democratic Stability; Political Participation.

«Ժողովրդավարությունը հիմնված է այն փաստի վրա, որ քաղաքացիները կարող են բաց, համբերատար և նացիոնալ քննարկումների միջոցով հասնել համաձայնության՝ չնայած իրենց տարաձայնություններին»

Ջոն Ռոլզ

Ժողովրդավարության բնույթը և զարգացման դինամիկան

Կայուն ժողովրդավարական համակարգերում զարգացման ընթացքում ձևավորվել են ոչ միայն գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների, այլև՝ քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, բիզնեսի և այլ կառույցների փոխկապակցվածության ու միմյանց վերահսկելու և հակակշռելու մեխանիզմներ, որոնք էլ տարբեր մակարդակներում միասնաբար ապահովում են ժողովրդավարական գործընթացների հարատևությունը (Diamond, 2008): Ժողովրդավարությունը քաղաքական կառավարման համակարգ է, որը հիմնված է ժողովրդի ինքնիշխանության, քաղաքական մասնակցության և իրավունքի գերակայության վրա (Weber, 2014): Այն ձևավորվում է պատմականորեն՝ անցնելով զարգացման տարբեր փուլեր՝ նախնական ուղղակի ժողովրդավարությունից մինչև ժամանակակից ներկայացուցչական և դեղիբերատիվ (խորհրդակցական) մոդելներ (Held, 2006): Ժողովրդավարության էվոլյուցիան պայմանավորված է ինչպես սոցիալ-տնտեսական գործոններով, այնպես էլ իրավական և մշակութային զարգացումներով, որոնք ձևավորում են քաղաքական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունները (Putnam, 2000): Ժողովրդավարության

կայունությունն ու խորացումը հիմնված են բազմակարծության պահպանման, մասնակցային մեխանիզմների կատարելագործման և հասարակության ներսում սոցիալական համերաշխության ապահովման վրա, ինչը թույլ է տալիս տարբեր խմբերի ներգրավվել որոշումների կայացման գործընթացում՝ առանց մարգինալացման կամ քաղաքական գերիշխանության հաստատման (Habermas, 1962):

Սոցիալական համաձայնությունը՝ կոնսենսուսը, որպես ժողովրդավարության հիմք

Ժողովրդավարական համակարգերի կարևորագույն բնութագրիչներից է սոցիալական համաձայնությունը՝ կոնսենսուսը: Ժողովրդավարության հիմքն, ըստ էության, մեծամասնության կամքի իրացումն է, որն, ըստ բրիտանացի փիլիսոփա, սոցիոլոգ և քաղաքական գործիչ Ջոն Ստյուարթ Միլլի (John Stuart Mill), միայն նրանց կամքն է, ում հաջողվում է այլոց պարտադրել իրենց մեծամասնություն ճանաչվել (Милль, 1993): Իրական ժողովրդավարությունը միշտ ձգտում է կոնսենսուսի: Ժամանակակից աշխարհում սոցիալական համաձայնությունն ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում: Ցանկացած հասարակության գործունեությունը, նրա լիարժեք զարգացումն ու բարեկեցությունը մեծապես կախված են դրանից, ուստի սոցիալական համաձայնության խնդիրը տարեցտարի ավելի արդիական է դառնում (Rosanvallon, 2011):

«Կոնսենսուս» բառը առաջացել է լատիներեն *consentio* բառից, որը ձևավորվել է *sentire* («զգալ, մտածել, հասկանալ») բայից՝ *con* նախածանցով, որն արտահայտում է համատեղ, փոխադարձ գործողություն: Այսինքն՝ սկզբնական իմաստով կոնսենսուսը նշանակում է զգացմունքների և մտքերի ընդհանրություն, փոխըմբռնում: Ժամանակակից բառարանները այս տերմինը սահմանում են որպես՝

1. համաձայնություն, միաձայնություն,
2. կոնֆլիկտի կարգավորման շուրջ պայմանավորվածություն (Кравченко, 2004):

«Կոնսենսուս» հասկացությունն օգտագործվում է ոչ միայն միջ-պետական հարաբերություններում, այլև ներքին գործընթացների վերլուծության ժամանակ: Այս դեպքում անհրաժեշտ է տարբերակել կոնսենսուսի երկու իմաստ (Habermas, 1996).

- նեղ իմաստով՝ որպես վեճերի և կոնֆլիկտների լուծման միջոց,
- լայն իմաստով՝ որպես քաղաքացիական համաձայնություն:

Հասարակական կոնսենսուսի ապահովման խնդիրը միշտ է հետաքրքրել տեսաբաններին: Գերմանացի մեծ փիլիսոփա Հեգելի կարծիքով՝ կոնսենսուսը համերաշխություն է, որը «նորմալ» (ինդեալական) սոցիալական կյանքի անբաժան հատկությունն է: Նրա հայրենակից, սոցիոլոգ Մաքս Վեբերը, շարունակելով հեգելյան ավանդույթը, փորձում էր հասկանալ կոնսենսուսի էությունը, սակայն նա հստակ տարանջատում էր այն սոցիալական համերաշխությունից: Նրա համոզմամբ՝ կոնսենսուսի վրա հիմնված վարքագիծը չի բացառում շահերի բախումը, տարակարծությունների և հակամարտող միտումների առկայությունը: Վեբերի դիտարկմամբ՝ կոնսենսուսն օբյեկտիվորեն գոյություն ունեցող հավանականություն (հնարավորություն) է (Осипова, 1995), որ, անկախ նախնական պայմանավորվածության բացակայությունից, մարդկային փոխգործակցության մասնակիցները հաշվի կառնեն միմյանց ակնկալիքները՝ որպես իրենց վարքի համար կարևոր գործոն: Այստեղ չի ենթադրվում պարտադիր համագործակցություն, այլ կարևոր է, որ յուրաքանչյուր մասնակից իր վարքում հաշվի առնի մյուսների ակնկալիքները: Եվ, եթե այդ ակնկալիքների հաշվառումը անձին հնարավորություն է տալիս հասնել իր ռացիոնալորեն ընկալված նպատակին, ապա, ըստ Մաքս Վեբերի, կարելի է խոսել կոնսենսուսի առկայության մասին (Weber, 1978):

Կոնսենսուսի խնդիրը դիտարկել են նաև ամերիկացի սոցիոլոգներ Չ. Քուլին, Ջ. Միդը, Լ. Վիրթը և ուրիշներ: 1960-1970-ական թվականներին այս խնդիրը դիտարկվում է, մի կողմից, նեոմարքսիստա-

կան սոցիալական փիլիսոփայության (Յու. Հաբերմասի աշխատություններում), իսկ մյուս կողմից՝ ֆենոմենոլոգիական սոցիոլոգիայի շրջանակներում: Վերջինս հիմնվում է Ա. Շյուցի գաղափարների վրա, ով Վեբերի կոնսենսուսի հայեցակարգը կապել էր Է. Հուսերլի միջսուբյեկտիվության հայեցակարգի հետ:

Գերմանացի սոցիոլոգ Յուրգեն Հաբերմասի համերաշխության տեսությունը կապում է ժողովրդավարությունը հաղորդակցական գործողության տեսության հետ, և առանձնանում է իր էթիկական խորությամբ և գործընթացային պարտավորություններով, որոնք նախատեսում են ոչ միայն քաղաքական որոշումների կայացման մեխանիզմներ, այլև հասարակության մեջ սոցիալական համերաշխություն ստեղծելու երկարաժամկետ միջավայր (Habermas, 1981): Հաբերմասի տեսությունը հիմնված է այն համոզմունքի վրա, որ քաղաքական լեգիտիմությունը չի կարող գոյություն ունենալ առանց անհատների և հասարակական խմբերի միջև ճշմարիտ և բաց քննարկումների, երբ այն պայմանավորված է հանրային դիսկուրսի մեջ մասնակցության միջոցով ձեռք բերված կոնսենսուսով: Ըստ նրա, նման քննարկումները պետք է լինեն ռացիոնալ և քննադատական՝ ի հարկե առանց ճնշման կամ հարստացման նպատակներ ունենալու: Նրա հանրային ոլորտի հայեցակարգում ժողովրդավարությունը դիտվում է ոչ միայն որպես վարչակարգ կամ ինստիտուցիոնալ կառույց, այլ որպես գործընթաց, որն իրականացվում է հասարակության մեջ առկա տարբեր կարծիքների, շահերի և արժեքների միջև փոխըմբռնման հիման վրա: Հաբերմասի կարծիքով, «հանրային ոլորտը մի տարածք է, որտեղ կարող են ձևավորվել և քննարկվել հասարակական հետաքրքրությունները, որտեղ անհատներն ու խմբերը փոխադարձաբար ճանաչում են միմյանց շահերը»: Դրանով նա շեշտում է այն, որ ժողովրդավարությունը պետք է լինի բաց, մասնակցային և կառուցողական երկխոսություն, որտեղ հանրությունը կարող է համաձայնության հասնել առանց արտաքին հսկողության (Habermas, 1962):

Այսպիսով, վերլուծելով տարբեր տեսակետներ՝ կարելի է նկատել և առանձնացնել ժողովրդավարական հասարակություններում կոնսենսուսին հասնելու երկու հիմնարար սկզբունք.

1. երբ որոշման ընդունմանն աջակցում է մասնակիցների մեծամասնությունը,
2. երբ որոշման ընդունման դեմ չի արտահայտվում ոչ մի մասնակից (Барламов, 1992):

Այսինքն՝ ստացվում է, որ հասարակական կոնսենսուսի ապահովումը հնարավոր է կամ որոշման շուրջ մասնակիցների ընդհանուր համաձայնության հասնելու, կամ առարկություններ չունենալու, անհամաձայնությունը չբարձրաձայնելու պայմաններում: Փաստացի կոնսենսուսը ենթադրում է միայն բացահայտ առարկությունների բացակայություն՝ թույլ տալով չեզոք դիրքորոշում կամ որոշ վերապահումներ: Եվ միևնույն ժամանակ, այն չի հանդիսանում մեծամասնության որոշում, քանի որ անհամատեղելի է նույնիսկ մեկ մասնակցի բացասական դիրքորոշման հետ:

Սոցիալական կոնսենսուսը որպես մեծամասնության համաձայնություն

Այս պարագայում ժամանակակից ժողովրդավարական հասարակությունները կարևորագույն որոշումների կայացման գործընթացներում հստակ ընտրության առջև են հայտնվում՝ ապահովել համաձայնությունը, թե՞ գործել այնպես, որ որոշումների ընդունմանը ոչ մի առարկություն չխանգարի:

Մեր ժամանակներում 20-րդ դարի ժողովրդավարության մոդելներն ու տեսությունները վերանայման և վերախմաստավորման կարիքն ունեն:

Այսօր գիտնականներն առաջ են քաշում ժամանակակից ժողովրդավարության նոր հատկանիշներ, նոր որակներ, զարգացման մի նոր փուլ, որոնք ըստ Մեծ Բրիտանիայի համալսարանի սոցիոլո-

գիայի պրոֆեսոր Քոլին Քրաուչի կարելի է բնորոշել որպես «պոստ-դեմոկրատիա» (Krayч, 2009):

Բելգիացի քաղաքագետ-փիլիսոփա Շանտալ Մուֆֆն իր հերթին գրում է «ժողովրդավարության նոր հարացույցի՝ պարադիգմի» (Myфф, 2004) մասին՝ հիմնվելով այն գիտնականների հայացքների վրա, ովքեր հանդիսանում դեղիբերատիվ (խորհրդակցային) դեմոկրատիայի գաղափարի հետևորդներ՝ Ջոն Ռոլզի և Յուրգեն Հաբերմասի դեղիբերատիվ՝ խորհրդակցական դեմոկրատիայի կամ երկխոսական քաղաքականության տեսությունների վրա, նշելով, որ «խորհրդակցական ժողովրդավարության կողմնակիցները պնդում են, որ ամեն դեպքում հնարավոր է համաձայնության հասնել» (Krayч, 2009, էջ 182):

Այս առումով, ժամանակակից ժողովրդավարություններում կոնսենսուսի հաստատման հնարավորությունները մեծամասնության աջակցության հասնելու միջոցով դիտարկելիս, նախ և առաջ, անհրաժեշտ է խոսել Հաբերմասի դեղիբերատիվ ժողովրդավարության մասին, որը դիտարկվում է, որպես առանձնահատուկ հաղորդակցական ֆորմացիա՝ մի զարգացման փուլ, որը բնորոշ է այնպիսի քաղաքացիական հասարակություններին, որտեղ բոլոր հարցերը լուծվում են հրապարակային քննարկումների ու երկխոսությունների ճանապարհով՝ ապահովելով հասարակական համերաշխություն և համաձայնություն (Шульц, 1985):

Նրա հիմնական պնդումն այն է, որ համերաշխությունը ձևավորվում է ոչ թե ռազմավարական հաշվարկների կամ գործիքային համաձայնությունների արդյունքում, այլ այն, որ մարդիկ ակտիվորեն ներգրավված են բանական և բաց քննարկումների մեջ՝ համատեղ բարելավելով այն արժեքները, որոնք համարում են համընդհանուր (Habermas, 1962): Հաբերմասը նշում է, որ «դա այն գործընթացն է, որի ընթացքում հասարակությունը ստեղծում է, ընդլայնում և պահպանում ընդհանուր արժեքները»: Այս գործընթացը ոչ միայն քաղաքական մասնակցություն է, այլև էթիկական պարտավորու-

թյուն՝ հասնելու համաձայնության ոչ միայն մեկ հարթակում, այլ նաև երկարաժամկետ և փոփոխվող հասարակական դիսկուրսի միջոցով (Шулъа, 1985): Նաև կարևոր է նշել, որ Հաբերմասի տեսությունը ենթադրում է, որ համերաշխությունը պետք է չընդգրկի անհատների կամ խմբերի պարտադրված միաձայնությունը, այլ փոխադարձ վստահության և հաղորդակցման արդյունքում ձևավորված կամքը: «Միասին որոշում կայացնելը, համերաշխության հիմունքների վրա կառուցելը նշանակում է վստահել ոչ միայն այն, ինչ դու արդեն գիտես, այլև ընդունել այն, ինչը դեռ պետք է դառնար որոշման մաս» (Шулъа, 1985):

Հաբերմասը համերաշխության վերաբերյալ իր տեսությունում անդրադառնում է նաև կոնսենսուսի էթիկական կողմին: Նա նշում է, որ «համերաշխությունը պետք է դիտվի որպես պայման, որը ձևավորվում է՝ չհետապնդելով մեկին, ճնշելով մյուսին, այլ՝ սովորելու լսել մյուսի տեսակետը և փոխհամաձայնության գնալ» (Habermas, 1996): Սա, ըստ Հաբերմասի, ժողովրդավարության համար կենսական կարևորություն ունի՝ հատկապես այն պետությունների համար, որոնք գտնվում են անցումային փուլում, որտեղ քաղաքական բևեռացումը կարող է սպառնալ հասարակական համախմբվածությանը և կայունությանը և լքողներն խոչընդոտել համախմբված որոշումների կայացմանը: Այդ իսկ պատճառով, նրա նշած «հաղորդակցական գործողությունների» միջոցով իրականացվող համերաշխությունը կարող է լինել այն գլխավոր գործիքը, որը թույլ կտա պահպանել ժողովրդավարական կայունությունը՝ հնարավորություն ստեղծելով բոլոր կողմերին մասնակցել երկխոսությանը, քննարկմանը և համաձայնության հասնել առանց ճնշումների (Habermas, 1996):

3. Հաբերմասն իր «հաղորդակցական գործողության» տեսության շրջանակում նշում է, որ հաղորդակցական գործողությունը սուբյեկտների իրավահավասար մասնակցությունն է դիսկուրսին՝ հիմնված համագործակցության և շահերի համաձայնեցման վրա (Хабермас, 2001): Նման հաղորդակցումն իր հերթին հնարավոր է

երկխոսության և բանակցությունների շնորհիվ, որի հիմքում ընկած է լիակատար համաձայնության հասնելու սկզբունքը (Хабермас, 2002):

Հաբերմասը հակադրվում է վարչական կամ ուժային մեթոդներով հիմնավորված հաշտեցման ու կարգավորման գործընթացներին և առաջադրում է հաղորդակցական գործողության մոդելը, որն արմատավորվում է հանրային երկխոսության, հանրային համաձայնության և փաստարկման վրա հիմնված ճշմարտության որոնումը: Հաբերմասի տեսությունը կենտրոնանում է այն գաղափարի վրա, որ հանրային երկխոսությունը պետք է լինի ազատ, հավասար և առանց ճնշումների կամ մանիպուլյատիվ ազդեցությունների: Այսպիսի երկխոսության շնորհիվ հասարակությունը կարող է հասնել կոնսենսուսային որոշումների՝ ամբողջական և համընդհանուր ընդունելիության ձեռքբերմամբ (Зайцев, 2012):

Այս տեսությունը, ի վերջո, դիտարկում է հանրային դիսկուրսի կարևորությունը որպես ժողովրդավարության հիմնարար մեխանիզմ, որը ստեղծում է սոցիալական փոխըմբռնման եւ քաղաքացիական հասարակության ներգրավվածության պայմաններ: Դրա միջոցով Հաբերմասը դուրս է գալիս ավանդական «հակամարտությունների լուծման» տեսլականից և ներկայացնում նոր տեսանկյուն, որտեղ գաղափարների փոխանակումը և միմյանց տեսակետների հանդեպ հանդուրժողականությունն ունեն մեծագույն նշանակություն (Habermas, 1996):

Այսպիսով, հանրային դիսկուրսը կարևորվում է որպես ժողովրդավարության հիմնարար մեխանիզմ, իսկ այն մշտապես ձգտում է կոնսենսուսին: Ավելին, կոնսենսուսը բնութագրում է ժողովրդավարության հասուն, զարգացած ձևերը: Ըստ Շ. Մուֆֆի, կոնսենսուսը բնորոշ է ժողովրդավարությանը, քանի որ այն ոչ միայն ապահովում է քաղաքական հանրության անդամների ազատությունը, այլ նաև ազատության պայմաններում կարող է ձևավորել իրական քաղաքացիական համաձայնությունը (Chantal, 2018):

Սոցիալական կոնսենսուսը որպես առարկությունների բացակայություն

Ամերիկացի քաղաքագետ Ռոբերտ Պութնամն արդեն 21-րդ դարի սկզբին գրում էր, որ ժողովրդավարությունը, որպես քաղաքական համակարգ, անշուշտ, հիմնված է հասարակության համընդհանուր համաձայնության և դրա միջոցով սոցիալական կոնսենսուսի ապահովման վրա, սակայն վերջին տասնամյակներում այդ կոնսենսուսի կայունությունը նվազել է (Putman, 2000): Եվ այս երևույթը, նախ և առաջ, պայմանավորված է այսպես կոչված ժողովրդավարության ճգնաժամով:

Ըստ բրիտանացի սոցիոլոգ Էնթոնի Գիդենսի, ով ռիսկի հասարակության հայեցակարգի հեղինակն է, ժողովրդավարության ճգնաժամը, հատկապես այն երկրներում, որոնք պատմականորեն համարվել են դեմոկրատիայի տիտաններ, անհանգստացնող և բազմաշերտ սոցիալ-քաղաքական երևույթ է (Giddens, 1998):

Այս երևույթը աստիճանաբար դառնում է ավելի ակնհայտ գլոբալիզացիայի, սոցիալական անհավասարության և քաղաքական ինստիտուցիոնալ խառնաշփոթի համատեքստում: Փոփոխությունները, որոնք կապված են տնտեսական ճգնաժամերի, պատերազմական և անվտանգային խնդիրների, միգրացիայի, ընտրությունների համակարգի անկատարության, ազգային ինքնության խնդիրների և գլոբալ տնտեսական և սոցիալական անհավասարությունների հետ, սպառնում են ժողովրդավարության կայունությանը, իսկ ժողովրդավարության հիմնական արժեքները՝ օրինակ, հանրային ազատությունները և արդարությունը, հաճախ կարող են հայտնվել գլոբալ ճգնաժամի մեջ: Այս անորոշ ու փոփոխվող աշխարհում, որտեղ սոցիալական կոնսենսուսը հաճախ չի գործում այնպես, ինչպես նախկինում, հասարակական համերաշխությունը հաճախ մնում է գաղափարական հարթության վրա՝ դադարելով ձևավորել և ընկալվել որպես համընդհանուր համաձայնություն:

Ժամանակակից ամերիկացի քաղաքագետ, ժողովրդավարության ճգնաժամի զեկույցի համահեղինակ Ս. Հանթինգթոնը գրում էր, որ ժողովրդավարական քաղաքական համակարգի արդյունավետ գործունեությունը սովորաբար պահանջում է անհատների և խմբերի որոշակի քաղաքական ապատիա: Ըստ նրա՝ յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակություն ունի որոշակի թվով մարդիկ, որոնք չեն մասնակցում քաղաքական գործընթացներին: Հենց այն փաստը, որ մարդկանց նման խումբ կա, այն գործոններից մեկն է, որը թույլ է տալիս ժողովրդավարությանն արդյունավետ գործել, քանի որ քաղաքական գործընթացներում մասնակիցների աճող թիվը կարող է հանգեցնել կառավարության նկատմամբ պահանջների ավելացմանը: Հանթինգթոնի եզրակացությունն այն էր, որ որոշ զանգվածների պետք է հեռու պահել քաղաքականությունից, փոքր-ինչ «զսպել» ժողովրդավարությունը (Crozier, Huntington, & Watanuki, 1975): Այսինքն, ստացվում է, որ այս պայմաններում քաղաքական ակտիվության «զսպումը», նպաստում է նաև կոնսենսուսի ապահովմանը, քանի որ նվազեցնում է կայացվող որոշումների շուրջ առարկություններին արտահայտման գործընթացը:

Այս մտքին իր աշխատություններում անդրադառնում է նաև ամերիկացի լեզվաբան, հասարակագետ Նոամ Չոմսկին (Profit over People: Neoliberalism and Global Order, 1998) (Chomsky, 1989): Իր «Շահույթ մարդկանցից. նեոլիբերալիզմ և գլոբալ կարգ» գրքում, որի առանձին գլուխը կոչվում է «Համաձայնություն առանց համաձայնության» («Consent Without Consent») Չոմսկին գրում է, թե բոլորի կողմից հավանության է արժանացել այն դրույթը, որ իրական ժողովրդավարական հասարակությունը պետք է հիմնված լինի «կառավարվողների համաձայնության» սկզբունքի վրա (Chomsky, 1989, էջ 43-65): Նա նշում է, որ սոցիալական համերաշխության և ժողովրդավարության հիմնարար սկզբունքների ճգնաժամի պայմաններում իշխանություններն ու շահերի խմբերը կոնսենսուսի ապահովման նպատակով դիմում են տարբեր մանիպուլյատիվ մեթոդներ-

րի՝ ձգտելով իրենց համար շահեկան որոշումների դեմ առարկությունների բացառմանը:

Նոամ Չոմսկին անդրադառնում է նաև ժողովրդավարական հասարակություններում քաղաքական գործիչների և լրատվամիջոցների կողմից օգտագործվող մանիպուլյատիվ տեխնիկաներին, որոնցում նա բացահայտում է բնակչության շրջանում «սոցիալական կոնսենսուսի», ընդհանուր «համերաշխության» ձևավորման իրական մեխանիզմները և լույս է սփռում այն մարտահրավերների վրա, որոնք առաջանում են ժողովրդավարության կայունությունը պաշտպանելու գործում (Chomsky, 1989): Չոմսկին ցույց է տալիս, որ, երբ հասարակությունը դառնում է ավելի անտեղյակ և թուլացած, իշխանությունները սկսում են օգտագործել տարբեր մեթոդներ՝ որպես «համերաշխության» ստեղծման հնարքներ: Մասնավորապես, «Ուշադրության շեղման» մեթոդը թույլ է տալիս իշխանություններին ուղղորդել հասարակության ուշադրությունը զուտ մակերեսային և աննշան հարցերի վրա՝ չթողնելով, որ այն կենտրոնանա համակարգային, տնտեսական կամ սոցիալական խնդիրների վրա: Այս շեղումը հաճախ ամրապնդում է իշխանության ներկայությունը և վստահության կեղծ պատրանքը, թե քաղաքացիական ազատությունները պաշտպանվում են (Chomsky, 1997):

Միևնույն ժամանակ, «Խնդիր-ռեակցիա-լուծում» մեթոդը ստեղծում է կեղծ խնդիրներ կամ իրավիճակներ, որոնք, իբրև թե, պահանջում են լուծում, սակայն իրականում նպաստում են միայն իշխանության ամրապնդմանը: Աշխատանքային իրավունքների սահմանափակումները, տնտեսական քաղաքականության փոփոխությունները կամ ազգային անվտանգությանը վերաբերող որոշումները հաճախ ներկայացվում են որպես անհրաժեշտ պատասխաններ «համայնքային համաձայնություն» ստեղծելու համար (Chomsky, 1997): Դրանով իսկ իշխող համակարգը կարողանում է ապահովել հասարակության գիտակցական համերաշխությունը՝ դրան համապատասխան գործողությունները և օրենքները ներկայացնելով որպես ընդհանուր բարեկեցությունից բխող:

Հանրության համար ոչ նպատակահարմար որոշումներ կայացնելու մեկ այլ միջոց է «Իրականացման հետաձգումը»: Երբ ընդունվող որոշումը ներկայացվում է որպես «ցավալի և անհրաժեշտ» գործողություն, որը, սակայն, ուժի մեջ կմտնի ոչ թե հենց այսօր, այս պահին, այլ մոտ ապագայում՝ այսպիսով անորոշ ժամանակով հետաձգելով այս որոշման հետ հասարակության համաձայնելու կամ առարկելու անհրաժեշտությունը:

Շատ հաճախ հանրության համար նախատեսված քարոզչություն պարունակող ելույթներում օգտագործվում են այնպիսի փաստարկներ, պերսոնաժներ, բառեր և ինտոնացիա, որոնք կիրառվում են անչափահաս երեխաների հետ շփումներում՝ ինֆանտիլ լեզվաբանական դարձվածներ: Երբ հանրությանը դիմում են որպես «անմիտ երեխայի», շփվում նրա հետ այնպես, կարծես նա 12 տարեկան է (կամ ավելի փոքր), ապա քարոզչության պատասխանը մեծ հավանականությամբ՝ քննադատության բացակայությունն է: Ռացիոնալ քննադատության բացառմանն են ուղղված նաև զգացմունքների, ոչ թե գիտակցությանն ուղղված հաղորդագրություններն ու կրկնվող արտահայտությունները, ինչպիսիք են, օրինակ, «դաժան ահաբեկչությունները», «անարդար կառավարությունը», «սոված մարդկանց տառապանքը», որն ուղղված է մարդկանց ռացիոնալ վերլուծություն անելու հատկության և հետևաբար՝ իրավիճակի մասին քննադատական ընկալման արգելափակմանը:

Այս ամենից գատ հասարակությանը որոշումների ընդունմանը և հանրային քննարկումներին մասնակցելուց կարող է հետ պահել «միջակություններով հիացմունքը»՝ այն գաղափարը, որ տգիտությունը, գոեհիկ հումորները ժամանակակից են: Սկանդալները, դեղին մամուլը, ցածրակարգ սերիալները, կեղծ հերոսները, կասկածելի հումորը և կիսապոպուլիստական ակցիաները շատ լավ միջոց են հասարակությանը մտահորիզոնը ընդլայնելու փորձերից հետ պահելու համար:

Չոմսկիի կողմից նկարագրված մանիպուլյատիվ մեթոդների շարքում է «սեփական մեղքի զգացողության ուժեղացումը», որի մի-

ջոցով անձին դրդում են մտածել, որ նա ինքն է մեղավոր սեփական անհաջողությունների մեջ՝ իր միջակ մտավոր ունակությունների, նպատակասլացության բացակայության պատճառով: Արդյունքում՝ տնտեսական և քաղաքական համակարգի դեմ պայքարելու փոխարեն, անձը սկսում է ինքնախարազանմամբ զբաղվել, ինչն էլ հանգեցնում է անտարբերության հասարակությունում տեղի ունեցողի հանդեպ: Այս ամենից զատ հասարակությանը կարելի է ստիպել մտածել, որ ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը ստեղծել է այնպիսի հնարավորություններ, որ «համակարգը» այսօր ունի ավելի շատ գիտելիք անձի մասին, քան անձն ինքը, «համակարգը միշտ հետևում և վերահսկում է», հետևաբար, ունի ավելի մեծ իշխանություն և կառավարման ավելի լայն հնարավորություններ (Chomsky, 2002):

Այսպիսով, իրականում քաղաքական ուժերը կարողանում են վերահսկել ժողովրդավարական գործընթացները՝ կեղծ համերաշխություն ստեղծելու միջոցով, որտեղ հասարակությունը ընդունում է իր սահմանափակումը, որպես իր սեփական կամքի դրսևորում (Cunningham, 2002):

Ըստ Չոմսկիի՝ այս մեթոդները կիրառվում են ժամանակի ընթացքում՝ նախապես դիմադրությունն ու արհեստականորեն ստեղծվող հակադրումները նվազեցնելու համար, մինչդեռ հասարակությունը չի կողմնորոշվում իրական փոփոխությունների կարևորության մեջ: Նա ցույց է տալիս, որ նման մանիպուլյատիվ մեթոդների կիրառմանը հաջորդում է բնակչության քաղաքացիական իրավունքների կրճատումը և դրանց նկատմամբ անտեղյակությունն ու անտարբերությունը, ինչը հանգեցնում է հանրային և ժողովրդավարական գործընթացների համակարգի խափանման: Չոմսկին հավելում է, որ այս մեթոդներն ընդգրկում են նաև այն գործոնը, ըստ որի՝ հասարակության կրթական մակարդակը և ստացած տեղեկատվությունը դառնում են ձևակերպումների և ոչ հստակ հասկացությունների ընդունման խթանման գործիքներ (Cunningham, 2002):

Այս բոլոր մեթոդները, որոնք Չոմսկին բացատրում է իր մանիպուլյատիվ տեսության շրջանակում, ցուցադրում են, թե ինչպես են իշխանությունները ստեղծում համերաշխության պատրանք, իսկ ժողովրդավարության մեխանիզմները թաքնված են մանիպուլյատիվ և, երբեմն, կեղծ համակարգերի ներքո (Chomsky, 1989):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարությունը հաճախ ընկալվում է որպես համակարգ, որը հիմնված է սոցիալական կոնսենսուսի վրա, սակայն իրական քաղաքական գործընթացներում այն միշտ չէ, որ արդյունավետորեն գործում է: Տեսական մակարդակում համերաշխությունն ու հանրային համաձայնությունը ժողովրդավարական կայունության առանցքային նախադրյալներն են, մինչդեռ գործնականում հասարակական բազմազանությունը, շահերի բախումները և տեղեկատվական անհավասարությունը կարող են խոչընդոտել իրական կոնսենսուսի ձևավորմանը:

Սոցիալական կոնսենսուսը բարդ քաղաքական և սոցիալ-հոգեբանական երևույթ է, որն ունի տարբեր մակարդակներ, ծագման բնույթ և դրան հասնելու տարբեր ուղիներ և ձևաչափեր:

Այս առումով մենք հիմնականում խոսում ենք կոնսենսուսի ապահովման, դրան հասնելու հիմնական 2 ուղիների մասին՝ 1. ապահովել միաձայնություն, երբ որոշումների ընդունման գործընթացի մասնակիցները միակարծիք համաձայն են այդ որոշման հետ և 2. ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ կայացվող որոշման դեմ նույնիսկ գոյություն ունեցող առարկությունները չեն բարձրաձայնվում:

Այս 2 ձևաչափի ապահովման նպատակով քաղաքական ուժերը հաճախ դիմում են մանիպուլյատիվ մեթոդների՝ ուղղորդելով հանրային ընկալումները, վերահսկելով օրակարգը և ստեղծելով համերաշխության պատրանք: Այս երևույթը վկայում է, որ սոցիալական համերաշխությունը հաճախ կառավարվում է՝ օգտագործելով մանիպուլյատիվ մեխանիզմներ, որոնք նպաստում են ցանկալի դիրքորո-

շումների ձևավորմանը կամ հակադիր կարծիքների ճնշմանը: Ժողովրդավարական հասարակություններում տեղեկատվական մանիպուլյացիան հաճախ վերածվում է ազդեցության գործիքի, որի միջոցով հնարավոր է ոչ միայն կայունացնել իշխանության համակարգը, այլև վերահսկել հանրային համաձայնության ձևավորումը՝ առանց իրական բազմակարծության և ազատ քննարկման ապահովման:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ ժողովրդավարությունը, որպես հասարակարգ, հիմնված է հանրային դիսկուրսի, սոցիալական համերաշխության և կոնսենսուսի հաստատման վրա, ինչը նաև պայմանավորում է հասարակության կայունությունը: Հաբերմասի հաղորդակցական գործողության տեսությունը ընդգծում է, որ ժողովրդավարական լեզվափոխությունը պետք է ձևավորվի բանական և մասնակցային քննարկումների միջոցով, ինչը կանխում է մանիպուլյատիվ ազդեցությունների գերակշռումը հանրային ընկալումների ձևավորման ընթացքում:

Ժողովրդավարական գործընթացների ապագան կախված է այն հանգամանքից, թե ինչպիսի միջոցներ կձեռնարկվեն սոցիալական համերաշխության իրական դրսևորման ապահովման համար, որքանով կհաջողվի զարգացնել հանրային դիսկուրսի մեխանիզմները և էթիկան: Ի վերջո «deliberation» հասկացությունը անգլերենից թարգմանաբար ոչ միայն նշանակում է քննարկում, այլև՝ զգուշավորություն, խոհեմություն և հավասարակշռված որոշումների կայացում:

Գրականության ցանկ

- Chomsky, N. (1989). Necessary illusions: Thought control in democratic societies. South End Press.
- Chomsky, N. (1997). Objectivity and liberal scholarship. In The Cold War and the university. New Press.
- Chomsky, N. (2002). Media control: The spectacular achievements of propaganda. Seven Stories Press.

- Cunningham, F. (2002). *Theories of democracy: A critical introduction*. Routledge.
- Diamond, L. (2008). *The spirit of democracy: The struggle to build free societies throughout the world*. Times Books.
- Giddens, A. (1998). *The third way: The renewal of social democracy*. Polity Press.
- Habermas, J. (1962). *The structural transformation of the public sphere*. MIT Press.
- Habermas, J. (1981). *The theory of communicative action (Vols. 1–2)*. Beacon Press.
- Habermas, J. (1996). *Between facts and norms: Contributions to a discourse theory of law and democracy*. MIT Press.
- Held, D. (2006). *Models of democracy (3rd ed.)*. Polity Press.
- Mouffe, C. (2005). *On the political*. Routledge.
- Mouffe, C. (2018). *For a left populism*. Verso.
- Putnam, R. D. (2000). *Bowling alone: The collapse and revival of American community*. Simon & Schuster.
- Rosanvallon, P. (2011). *The society of equals*. Harvard University Press.
- Schultz, V. (1998). Democratic dialogue and the public sphere. *Yale Law Journal*, 107(6), 1373–1430.
- Schutz, A. (1967). *The phenomenology of the social world*. Northwestern University Press.
- Weber, M. (2014). *Politics as a vocation*. Moulin Digital Editions.
- Weber, M. (1978). *Economy and society: An outline of interpretive sociology*. University of California Press.
- Зайцев, А. В. (2012). Диалогика Юргена Хабермаса: понятие и сущность. *Философская мысль*, (2), ст. 75–98.
- Кравченко, С. А. (2004). *Социологический энциклопедический русско-английский словарь (ст. 173)*. АСТ.
- Крауч, К. (2009). *Постдемократия* (Н. В. Эдельман, Trans.). ГУ ВШЭ.
- Милль, Дж. (1993). О свободе (А. Фридман, Trans.). *Наука и жизнь*, (11), 10–15; (12), ст. 21–26.
- Муфф, Ш. (2004). К агонистической модели демократии. *Логос*, (2(42)), ст. 181.
- Хабермас, Ю. (2001). *Моральное сознание и коллективное действие*. Наука.

- Хабермас, Ю. (2002). Вовлечение другого: Очерки политической теории. Наука.
- Шульц, В. (1985). Критика «диалогии» Ю. Хабермаса. В Материалистическая диалектика (Т. 5, ст. 388). Мысль.
- Осипова, В. (Ed.). (1995). Энциклопедический социологический словарь (ст. 292). ИСПИ РАН.

«ԷՄՊԱՏԻԱ (ԱՊՐՈՒՄԱԿՑՈՒՄ)» ԵԶՐՈՒՑԹԻ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐ

Անահիտ Սահակյան

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, հոգեբանական գիտությունների թեկնածու, սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ

Լիանա Մկրտչյան

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ

ETYMOLOGICAL AND PSYCHOLINGUISTIC ISSUES OF
THE TERM “EMPATHY”

Anahit Sahakyan

PhD, Associate Professor of the Department of Social Work and Social Technologies, Vice-Dean of the Faculty of Sociology, YSU

Liana Mkrtchyan

Assistant Professor of the Department of Social Work and Social Technologies, Faculty of Sociology, YSU

Abstract. The article explores empathy as a fundamental human capacity underlying the formation of civilization, analyzing its historical emergence, theoretical development, and practical application across various disciplines. It presents different forms of empathy - emotional, cognitive, and compassionate - and examines their role in professional communication, interpersonal trust, and effective support. The authors argue that empathy is not merely the sharing of emotions, but a conscious, purposeful, and ethically informed form of engagement that requires clear boundaries and professional skill.

Keywords: empathy, helping profession, social work, psychology

Ներածություն

Հոդվածի նպատակն է բազմակողմանիորեն վերլուծել և բացահայտել «ապրումակցում» (Էմպատիա) հասկացության իմաստային, տեսական և գործնական առանձնահատկությունները՝ սկսած դրա փիլիսոփայական և պատմամշակութային հիմքերից մինչև մասնագիտական ոլորտներում, հասկապես՝ սոցիալական աշխատանքում դրա կիրառումը: Հոդվածը միտված է ընդգծելու «Էմպատիա» և «ապրումակցում» եզրույթների ծագումնաբանությունը, դերը քաղաքակրթության զարգացման ընթացքում, մարդկային փոխհարաբերություններում, ինչպես նաև օգնող մասնագիտություններում՝ մասնավորապես արդյունավետ և էթիկապես հիմնավորված միջամտությունների գործընթացում:

Հիմնախնդիրը

«Ե՞րբ է սկիզբ առել քաղաքակրթությունը» հարցին ամերիկացի փիլիսոփա, սոցիոլոգ, հոգեբան Ջորջ Միդը պատասխանել է. «Երբ լավացավ մարդու կոտրված ազդոսկրը»: Այս խորիմաստ բացատրությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ կոտրված ազդոսկրով մարդը չի կարող իր գոյությունը պահպանել, քանի որ շարժվելու և սնունդ հայթայթելու հնարավորություն չունի և, ինչպես կենդանական աշխարհի շատ ներկայացուցիչներ, նման վիճակում մահանում է: Սակայն, եթե այդ ազդոսկրը լավանում է, ապա նշանակում է իր նմանները նրան երկար ժամանակ օգնում են կենսականորեն անհրաժեշտ պահանջմունքները բավարարելու՝ սնվելու, ջուր խմելու և գոյությունը պահպանելու համար: Ըստ Ջ. Միդի՝ սա քաղաքակրթության սկիզբն է՝ ուրիշին աջակցելու, ուրիշին օգնելու, ուրիշի իրավիճակը հասկանալու, գուցե նաև ցանկությունները, ապրումները հասկանալու կարողությունը, մարդկանց միջև փոխըմբռնումը և փոխհամագործակցումը կառուցելու: Քաղաքակրթության սկզբնավորման պատմական գործընթացի հիմքում, փաստորեն, ընկած է «Էմպատիան»՝ հայերեն՝ «ապրումակցումը», (կանդրադառնանք նաև Էմ-

պատիան՝ որպես ապրումակցում թարգմանության խնդրահարույց լինելուն):

Վերջերս «ապրումակցում» եզրույթը լայնածավալ շրջանառության մեջ է մտել թե՛ առօրեական խոսակցական բառապաշարում, թե՛ ակադեմիական գրականությունում՝ մասնավորապես օգնող մասնագիտությունների համատեքստում: Գրականության վերլուծության համաձայն՝ «ապրումակցում» եզրույթի մեկնաբանությանը և ուսումնասիրությանը անդրադարձել են մի շարք մասնագիտական գիտակարգերի շրջանակում՝ փիլիսոփայություն, բժշկագիտություն, հոգեբանություն, հոգեբուժություն, սոցիալական աշխատանք, հետաքրքիր են նաև հետազոտական մոտեցումները ներդոֆինոլոգիայի տեսանկյունից: Ապրումակցման մեկնաբանության, սահմանման հարցում նշանակալի ներդրում ունեն փիլիսոփայության և հոգեբանության այնպիսի կարկառուն հետազոտողներ, ինչպիսիք են Թեոդոր Լիպսը, Էդիթ Շտայնը, Էդմունդ Հուսերը, Ջոն Հյումը, Ադամ Սմիթը, Կառլ Ռոջերսը: Անշուշտ ապրումակցման նշանակությունը կարևորվում է ոչ միայն նշյալ հեղինակավոր մտածողների կողմից ուշադրության արժանանալու փաստով, այլև տեսաբանների կողմից ապրումակցման մեկնաբանության բազմազանության պատճառով:

Որպես բազմազանության առավել խնդրահարույց հարցեր կարելի է դիտարկել.

- հուզականի և ճանաչողականի (կոգնիտիվի) հարաբերակցության չհստակեցվածությունը, «ներքին»-ի և վարքայինի մասը ապրումակցման մեջ,
- ապրումակցման կարգավիճակի որոշակիության բացակայությունը՝ հմտություն, գործընթաց, հոգեվիճակ, անձնային գիծ կամ դիսպոզիցիա և այլն,
- «ապրումակցման մեխանիզմ» հասկացության մեջ որոշակիության բացակայությունը՝ պրոյեկցիա, ինտրոյեկցիա, իդենտիֆիկացիա, դեցենտրացիա և այլն,

- չտարբերակվածությունը ապրումակցման և նմանատիպ երևույթների միջև՝ ապրումակցում և համակրանք, կարեկցանք և այլն:

Ժամանակակից գիտական գրականության մեջ գոյություն ունեն բազմաքանակ մեկնաբանություններ էմպատիա (հունարեն «*empathia*» եզրույթի վերաբերյալ): Սկզբնական շրջանում ապրումակցման իմաստը, ըստ Թ. Լիպպսի (рус «Вчувствование», գերմաներեն «*Einfühlung*» ներգգալով ըմբռնել, ներքին ապրումներով հասկանալ, զգալով՝ խորը թափանցել: Թ. Լիպպսը սկզբում այն օգտագործում է էսթետիկական ըմբռնման համատեքստում արվեստի ստեղծագործությունների կամ բնության գեղեցիկ տեսարանների դիտման և ընկալման գործընթացի շրջանակներում: Այնուհետև տարածում է միջանձնային հարաբերությունների ենթատեքստ՝ սոցիալական պերցեպցիայի անհրաժեշտ տարր, ինչպես նաև «մարդ-մարդ» հարաբերություններ պարունակող մասնագիտական դաշտ՝ հոգեբանական գործնական աշխատանքի՝ հոգեբանական խորհրդատվություն և թերապիա, սոցիալական աշխատանքի համատեքստում՝ սոցիալական խորհրդատվության և թերապիայի, մանկավարժություն՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններ և այլն: 1909 թվականից սկսած Է. Տիտլչեները շարունակում է շրջանառել ապրումակցում եզրույթը Թ. Լիպպսի «զգայակցվել» (вчувствовани) նեղ իմաստային մեկնաբանությամբ:

Ըստ Վ. Դիլտեյի՝ ապրումակցումը մեկնաբանվում է ուրիշի հուզական ապրումներից կախվածության տեսանկյունից՝ կարեկից վերաբերմունք իմաստով, օգտագործելով գերմաներեն *Nacherleben*, ռուսերեն թարգմանությունը՝ «сопереживание»: Հետագայում նման ձևով էր մեկնաբանում նաև հումանիստական հոգեբանության հիմնադիր հանրահայտ Կ.Գ. Ռոջերսը: Նրա «Այցելուի վրա կենտրոնացված» թերապիայի մոտեցումները լայն կիրառություն են գտել սոցիալական աշխատանքում: Մինչև 1930-ական թվականները հենց այս իմաստով էլ կիրառվել է «ապրումակցում» եզրույթը (այսուհետ

կօգտագործվի «ապրումակցում» եզրույթը): Տարիների ընթացքում ապրումակցման ընկալման իմաստային և բովանդակային նշանակալից փոխակերպումը տեղի ունեցավ՝ հատկապես կլինիկական հոգեբանության և հոգեթերապևտիկ պրակտիկայի ազդեցության ներքո: Մասնագիտական գործունեության սկզբնական շրջանում ռոջերսյան հիմնարար հարցը՝ «ես ինչպե՞ս կարող եմ տվյալ մարդուն բուժել կամ փոխել», հետագայում փոխարինվեց այլ հարցով՝ «ինչպե՞ս մարդու հետ կառուցեմ այնպիսի հարաբերություններ, որոնք նա կկարողանա օգտագործել սեփական անձի զարգացման համար»: Որպես հարցի պատասխան հոգեբանը հիմնարար բաղադրիչը դիտարկում է ապրումակցման կիրառման առանձնահատկությունների իմաստային առումով ճիշտ, ժամանակային առումով հարմար պահին, նրբորեն ընտրված բառերի, համարժեք մարմնի լեզվի կիրառության շնորհիվ:

Հարկ է անդրադառնալ նաև ապրումակցման առօրեական և ակադեմիական ընկալումներին. առօրեական ընկալման մակարդակում մարդկային սովորական փոխհարաբերություններում ապրումակցում դրսևորում են բոլորը: Դա ուրիշի զգացմունքները կիսելու, նրա դրության մեջ մտնելու, հասկանալու, որևէ կերպ արձագանքելու կարողությունն է, հոգատարություն և ուշադրություն դրսևորելն է նրա նկատմամբ: Սա առօրյայում մարդիկ իրականացնում են տվյալ մշակութային պահանջների համատեքստը հաշվի առնելով՝ իրավիճակին համապատասխան կամ տվյալ մարդու հետ ունեցած փոխհարաբերությունների շրջանակում: Դրա դրսևորումներից են՝ ուրիշի հետ գրկախառնվելը, ուրախության, զարմանքի, զայրույթի, տխրության կամ այլ հուզական վիճակներին բացականչություններով արձագանքելը, նրա հետ լացելը և այլն: Հաճախ այդ արձագանքները կարծրատիպային բնույթ ունեն, որը յուրահատկություն է ստանում ապրումակցում դրսևորող անձի անձնային տիպով պայմանավորված առանձնահատկություններով՝ խառնվածք, կրթական մակարդակ, սեռ, տարիք, սոցիալականացման առանձնահատկու-

թյուններ և այլն: Առօրեական ապրումակցումը կարիք չունի վերահսկման, այն վերահսկելի է միայն միջանձնային հարաբերություններում առկա էթիկական կանոնների շրջանակներում:

Ակադեմիական ընկալումներում «Էմպատիա» բառն առաջին անգամ հայտնվել է անգլիական բառարանում 1912 թվականին: Այն գրեթե քննարկվում էր համակրանք (սիմպատիա) բառին հոմանիշ որպես: Ջ. Ֆրոյդի վաղ շրջանի աշխատություններում ևս կարելի է հանդիպել այս հասկացությանը. «Մենք հաշվի ենք առնում այցելուի հոգեկան վիճակը, մեզ դնում ենք նրա տեղը և փորձում ենք հասկանալ նրան», գրում է Ջ. Ֆրոյդը: Կ.Ռոջերսը համարում է ապրումակցումը որպես ուրիշի զգացմունքներն իբրև իրենը զգալու կարողություն՝ չմոռանալով իբրև բառը:

Այս մեկնաբանություններում առկա է շատ կարևոր տարբերություն՝ «զգալ» և «հասկանալ» բառերի իմաստային բացահայտ տարբերության առկայությունը: Հավանաբար, այս տարբերությունն անտեսելու պատճառով էլ տեղի է ունեցել «ապրումակցում» եզրույթի հայերեն ոչ ճիշտ թարգմանությունը՝ որպես ապրումակցում ընդունելը: Ապրումակցում բառի լեզվաբանական բացատրությամբ հանգում ենք ապրումներին (հույզերին) կցվելու թույլտվությանը: Կցվել նշանակում է միացած լինել տվյալ հույզին, ունենալ նմանատիպ ապրումներ ուրիշի հետ միասին: Հոգեբանության և սոցիալական աշխատանքի պրակտիկական արգելում է շահառուի հետ նրա հույզերն ու ապրումները զգալու նույնացումը: Նման դեպքում մասնագետը կգտնվի շահառուի հետ հուզական կախվածության մեջ, իսկ ժամանակի ընթացքում մասնագիտական ամենօրյա հուզական սթրեսները կհասցնեն հուզական այրման համախտանիշի ձևավորմանը, արդյունքում՝ նաև մասնագիտական այրմանը: Ապրումակցումը՝ որպես կարեկցանք մեկնաբանելը, նույնպես մասնագիտորեն չի փոխանցում իմաստը, քանի որ կարեկցանքը, խղճմտանքը ևս հուզական սահմանների խախտման մասին են վկայում:

Այսպիսով, ապրումակցման՝ որպես սոցիալական աշխատանքի և հոգեբանության մասնագիտական հիմնարար տեխնիկայի դրսևորումը, ներառում է հետևյալ գործընթացի սխեման.

- ներթափանցել ուրիշի (շահառուի) ներհոգեկան աշխարհը,
- զգայունակ (դիտողունակ) լինել և հասկանալ նրա ապրումները,
- այդ հասկացածի մասին անպայման հաղորդել շահառուին, ընդ որում, շատ կարևոր է կարողանալ լինել ասերտիվ:

Այսինքն՝ կարողանալ նկատել և հենց հույզերի ապրման գազաթնակետի պահին դրսևորել այն, ոչ թե մեխանիկորեն՝ պարզապես պարբերաբար:

Անդրե Մորիտցը (André Moritz), ով www.soft-skills.com կայքի հիմնադիրն է, ապրումակցումը բացատրում է «հասկացման» ընդարձակ հասկացության տարածքում: Ընդ որում, հասկացումը չի նշանակում անպայման գովասանք կամ խրախուսանք, արդեն իսկ «հասկացումը» նշանակում է, որ գոնե մասնագետը փորձում է հասկանալ, թե ինչն է հրահրել տվյալ վարքի իրականացմանը, որի ազդեցությամբ էլ մարդն ունի որոշակի զգացմունքներ և ապրումներ:

Դ. Գոռովմանը ապրումակցումը քննարկում է որպես հուզական ինտելեկտի բաղադրիչներից մեկը: Նա ապրումակցման խնդիրն է համարում՝ նվազագույնը վերծանել ուրիշների հույզերը, իսկ առավելագույնը՝ քողարկված հույզերին նույնպես արձագանքել: Ապրումակցման բարձրագույն մակարդակը նա համարում է ուրիշի խնդիրները հասկանալը: Ապրումակցման դրսևորումը բավականին բարդ գործընթաց է, որի աղյուսավետությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Այդ գործոններից կարևորագույնն, անշուշտ, և՛ անձնային, և՛ ձեռք բերովի՝ սոցիալականացման ընթացքում զարգացրած հիմքերն են: Որպես ապրումակցման խոսքային դրսևորման ամենապարզ և դասական համարվող տարբերակ՝ խորհուրդ է տրվում մասնագիտական աշխատանքում որպես տեխնիկա օգտագործել հետևյալ արտահայտությունը. «Դուք զգում եք... (զգացմունք)..., որովհետև... (իրադարձություն)»: Օրինակ՝ «Դուք զայրացած եք, որովհետև Ձեր ամուսինը չի՞ գնահատում Ձեր հոգատարությունն իր նկատմամբ»:

Նմանատիպ նախադասության միջոցով (ապրումակցման դրսևորումով) կարելի է ստուգել, թե որքանով է մասնագետը ճիշտ հասկացել շահառուի ապրումները, որոնք են այդ ապրումների պատճառները, ինչպես նաև հասկանալ շահառուի մտքերը:

Մինչ այժմ մենք անդրադարձանք հուզական ապրումակցմանը, քանի որ քննարկման շրջանակում դիտարկվում էր միայն հույզերն ու զգացմունքները հասկանալու երևույթը: Ակադեմիական շրջանակներում արդեն քննարկվում են նաև ճանաչողական (կոգնիտիվ) և վարքային ապրումակցման տեսակները: Կոգնիտիվ ապրումակցումն ուրիշի մտքերը հասկանալու կարողությունն է: Իրականում հենց կոգնիտիվ ապրումակցումով է սկսվում հուզական ապրումակցումը: Օրինակ՝ շահառուն ունեցել է մարդկային կորուստ: Նախ, պետք է պարզել՝ ով է, որքան է եղել նրանց մտերմությունն ու կապվածությունը, ինչպես կփոխվի շահառուի կյանքը այսուհետ և այլն, որից հետո միայն կարելի է համարժեք հուզական ապրումակցում կիրառել:

Որոշ տեսաբաններ տարբերում են նաև ապրումակցման երրորդ ձևը՝ բարեխիղճ ապրումակցում (compassionate empathy): Այն դուրս է գալիս պարզապես զգացմունքները և իրավիճակը հասկանալու սահմաններից, և ներառում է նաև օգնելու և աջակցելու ցանկություն (Figley, 2002): Այս ձևը ենթադրում է գործուն քայլեր, որոնք ուղղված են մարդուն հասկանալուն զուգահեռ նաև գործելուն՝ աջակցելուն:

Ապրումակցումը համարվում է նաև որպես սոցիալական աշխատողի հիմնարար հմտություն, որը թույլ է տալիս մասնագետներին հասկանալ շահառուի հուզական և հոգեբանական վիճակը՝ դրանով իսկ նպաստելով ավելի արդյունավետ միջամտությունների իրականացմանն ու աջակցությանը: Վերջին տարիներին սոցիալական աշխատանքի թե գրականության մեջ, թե պրակտիկայում ավելի ու ավելի մեծ ուշադրության է արժանացել աշխատանքային բավարարվածության և շահառուների գոհունակության համար ապրու-

մակցման դերը: Այս առումով չնայած մասնագիտության հուզական պահանջները ամրագրված են էթիկական կոդեքսներով, համեմատաբար քիչ են այն էմպիրիկ ուսումնասիրությունները, որոնք հատուկ ուշադրություն են դարձնում, թե ինչպես է ապրումակցումն ուղղակիորեն ազդում աշխատանքային բավարարվածության և շահառուի հետ աշխատանքային արդյունքների վրա:

Սոցիալական աշխատանք մասնագիտությունը հաճախ պահանջում է բարձր մակարդակի հուզական աշխատանք, որի ժամանակ նրանք պետք է պահպանեն մասնագիտական սահմանները: Դեյվիսի սահմանմամբ՝ ապրումակցումը վերաբերում է մեկ ուրիշի հուզական վիճակը հասկանալու և անուղղակիորեն զգալու կարողությանը՝ միաժամանակ պահպանելով ինքնագիտակցությունը (Davis, 1983): Սոցիալական աշխատանքի համատեքստում այս երկակի գործընթացը կարող է լինել մարտահրավերներով լի, բայց նաև բարձր գնահատվող: Երբ ապրումակցումը արդյունավետ է կառավարվում, այն ոչ միայն օգնում է վստահություն և ռապպորտի հաստատմանը շահառուների հետ, այլ նաև կարող է նպաստել աշխատանքից ավելի մեծ գոհունակության՝ սոցիալական աշխատողներին տալով նպատակին հասնելու և ձեռքբերումներ ունենալու զգացում:

Գրականության ցանկ

- Davis, M. H. (1983). Measuring individual differences in empathy: Evidence for a multidimensional approach. *Journal of Personality and Social Psychology*, 44(1), 113–126. <https://doi.org/10.1037/0022-3514.44.1.113>
- Figley, C. R. (2002). Compassion fatigue: Psychotherapists' chronic lack of self-care. *Journal of Clinical Psychology*, 58(11), 1433–1441. <https://doi.org/10.1002/jclp.10090>
- Gerdes, K. E., & Segal, E. A. (2009). A social work model of empathy. *Advances in Social Work*, 10(2), 114–127. <https://doi.org/10.18060/235>
- Lasco, G. (2022, June 16). An anthropologist digs into the origins of a popular story attributed to Margaret Mead about the original sign of

- civilization. *Sapiens*. https://www.sapiens.org/culture/margaret-mead-femur/?utm_source=chatgpt.com (visited: 25.02.2025)
- Miller, J. J., Donner, S., & Fraser, E. (2019). Emotional resilience, job satisfaction, and burnout in social workers: Examining protective factors. *Journal of Social Work*, 19(4), 675–693. <https://doi.org/10.1177/1468017318793619>
- Shier, M. L., & Graham, J. R. (2013). Worker engagement in social work: The influence of organizational and work context. *International Social Work*, 56(4), 485–503.
- Weiland, K. Empathy: Definition, types and tips for practicing. *Forbes Health*. <https://www.forbes.com/health/mind/empathy/> (visited: 11.03.2025)
- Горева, А. Д. (2018). Научная интерпретация понятия «эмпатия» в современной отечественной и зарубежной литературе. *Педагогика. Психология. Социокинетика*, (3).
- Карягина, Т. Д. (б.г.). Эволюция понятия "эмпатия" в психологии. <https://www.dissercat.com/content/evolyutsiya-ponyatiya-empatiya-v-psikhologii> (дата просмотра: 25.12.2024)
- Карягина, Т. Д. (2015). Эмпатия как метод: философский взгляд. *Консультативная психология и психотерапия*, 23(5). https://psyjournals.ru/journals/cpp/archive/2015_n5/cpp_2015_n5_karyagina.pdf (дата просмотра: 12.01.2025)
- Роджерс, К. (1994). *Взгляд на психотерапию. Становление человека*. М.: Прогресс. <https://www.rulit.me/books/stanovlenie-lichnosti-vzglyad-na-psihoterapiyu-read-405531-1.html> (дата просмотра: 12.02.2025)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՐՆԴԳՐԿՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՍՅՈՒՆ

Լուսինե Քարամյան

ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս

SOCIAL INCLUSION MAINSTREAMING AS A PILLAR OF A
DEMOCRATIC STATE

Lusine Karamyan

MSc (SW), Associate Professor, Department of Social Work and Social Technologies, Faculty of Sociology, Yerevan State University

Abstract. This article presents the correlation between democracy and social inclusion, in the context of which the core values underlying democracy and the basic principles of social inclusion are discussed. The article presents definitions of key and related terms concerning to the topic, it discusses social inclusion mainstreaming and policy design based on it. The author attempts to show why social inclusion mainstreaming should be of key importance for any democratic state.

Keywords: democracy, social inclusion, decentralisation, social services, participation, social inclusion mainstreaming

Ներածություն

ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:

Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդավարական պետություն: Սա այդքան էլ պարզ հարց չէ: «Ժողովրդավարություն» եզրույթը մեկնաբանող մոտեցումների, ինչպես նաև ժողովրդավարական պետությունների բազմազանությունը թույլ չի տալիս առանձնացնել մեկ համապարփակ և բոլոր դեպքերում կիրառելի սահմանում: Թերևս

ավելի հեշտ է բնութագրել, թե որն է ոչ ժողովրդավարական պետությունը, քան հստակ սահմանել «ժողովրդավարություն» հասկացությունը: Այն հունարեն երկու արմատի՝ «դեմոս» (մարդիկ/ժողովուրդ) և «կրատոս» (իշխանություն/կառավարում), համակցություն է: Այդպիսով, ամենապարզ մեկնաբանումն այն է, որ ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է: Սա սպառնիչ սահմանում չի կարող հանդիսանալ, քանի որ չի պարունակում «ինչպե՞ս» հարցի պատասխանը: Ժողովրդի կամքն արտահայտելու և իշխանությունն իրացնելու բազմապիսի ձևեր, պրակտիկաներ են ձևավորվել ժամանակի ընթացքում: Դրսևորումների, տարատեսակների այդ բազմազանությունն է, որ բարդացնում է «ժողովրդավարություն» հասկացությունը սահմանելը:

Ըստ Ռ. Դալի՝ «ժողովրդավարական գործընթացը պետք է ապահովի արդյունավետ մասնակցություն և քվեարկության հավասարություն բոլոր մեծահասակների համար, ովքեր կրում են հանրային պարտադիր կոլեկտիվ որոշումների ազդեցությունը»: Նա կարևորում է ժողովրդավարությունը, որը կդարձնի ընտրելու իրավունքի իրացումը հավասար հասանելի, ինչպես նաև կապահովի քաղաքացիներին հանրային հիմնախնդիրները հասկանալու, ճանաչելու և որոշումների կայացման գործընթացների վրա ազդեցություն ունենալու հնարավորություններ (Dahl, 1989):

Քեմբրիջի բառարանի համաձայն՝ «ժողովրդավարությունը կառավարման համակարգ է, որում իշխանությունը պատկանում է ընտրված ներկայացուցիչներին, ովքեր ազատորեն ընտրվում են ժողովրդի կողմից: (Cambridge dictionary) Պարզ ասած՝ այն ենթադրում է ազատ ընտրություններ, ուր մարդիկ քվեարկում են այլ մարդկանց օգտին, որոնց ցանկանում են տեսնել «իշխանության դեկին»: Ժողովրդավարությունը կառավարման ձև է՝ հիմնված մարդկանց մեծամասնության կամքի վրա:

ՀՀ Սահմանադրության **հոդված 2**. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հան-

րաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»:

Դասական իմաստով՝ ժողովրդավարությունը հիմնված է այնպիսի սյուների վրա, ինչպիսիք են օրենսդիր, գործադիր, դատական ճյուղերը և մամուլը: (Thakur, 2025) Ամերիկյան իրավաբանական դպրոցների ասոցիացիան, օրինակ, նշում է, որ այն հիմնված է 3 հիմնասյուների՝ իրավունքի, գիտելիքի և ներկայացվածության վրա: (AALS, 2020) Բոլոր դեպքերում, անկախ մեկնաբանությունների տարբերություններից, ժողովրդավարության հիմնասյուները ծառայում են որպես ժողովրդավարական պետության հենք՝ երաշխավորելով, որ իշխանությունը մեկ միավորի/անհատի ձեռքերում չէ: Հակառակ դեպքում խոսքը, որպես կանոն, անձնիշխանության (ավտոկրատիա) մասին է, որը նշանակում է անսահմանափակ իշխանություն ունեցող մեկ անձի կամ անձանց փոքր խմբի կողմից իրականացվող կառավարում:

Ժողովրդավարությունը կոչված է բացառելու միանձնյա ու միակենտրոն գերիշխանությունը (դոմինանտություն) քաղաքական համակարգերում: Սոցիալական ծառայությունների համակարգում, օրինակ, կառավարիչները հաճախ բախվում են ժողովրդավարությունն ընդդեմ գերիշխանության ընտրության ճնշման հետ: Արդյունավետ ու գործուն լինելու համար ժողովրդավարական համակարգը կարիք ունի հանրային ծառայողների, ովքեր ունեն հատուկ կարգավիճակ, որոշակի իշխանություն՝ հասարակության բոլոր անդամներին ժողովրդավարության բարիքները երաշխավորելու համար: Միաժամանակ, նրանք պետք է զգայուն լինեն այդ հատուկ իշխանությունն ապահովող իրենց կարգավիճակի առումով և այն կիրառեն լավագույն նպատակներով ու հանուն ընդհանուր բարօրության (Weiner, 1994):

Ամերիկացի քաղաքագետ Մ. Հոլդենի պնդման համաձայն՝ «հանրային ծառայության համակարգում, պետական գործակալություններում առկա է «բյուրոկրատական իմպերիալիզմի» բարձր մա-

կարդակ, այդ պատճառով կառավարիչները պետք է առնվազն զգոն լինեն «բյուրոկրատական կողոպտիչների» հանդեպ, ովքեր կարող են սպառնալիք լինել իշխանության այս կամ այն մասը յուրացնելու առումով» (Holden, 2014):

Ժողովրդավարության մասին ամենամեծ տվյալների շտեմարանն ունեցող «Ժողովրդավարության տեսակները» (V-Dem) հայտնի կազմակերպությունը, երկար տարիներ տրամադրում է ավելի քան 200 երկրում կառավարման հետ կապված հետազոտական տվյալներ և հաշվետվություններ: «Ժողովրդավարություն» հասկացության և կառավարման տարբեր ռեժիմների վերաբերյալ մեծաթիվ գրականության ուսումնասիրության արդյունքում, այս կազմակերպության հետազոտողները եկել են հետևյալ եզրահանգմանը.

Պոլիարխիայի¹ մասին Դալի տեսությունն առաջարկում է ժողովրդավարության սահմանման ամենահամապարփակ և լայնորեն ընդունված մոտեցումը՝ հիմնված վեց հիմնական երաշխիքների վրա: Դրանք են՝ ընտրությունների միջոցով պաշտոններ ունենալը, ազատ և արդար ընտրությունները, արտահայտման ազատությունը, տեղեկատվության այլընտրանքային աղբյուրների առկայությունը, ասոցիացիաներ/միավորումներ ստեղծելու առումով ինքնավարությունը և ներառական քաղաքացիությունը: Այսպիսի մոտեցումը ենթադրում է, որ ընտրությունները ոչ միայն ազատ և արդար պետք է լինեն, այլև՝ իմաստավորված ու նշանակալի, որպեսզի հնարավոր լինի ընտրական սխալից (electoral fallacy) խուսափել (Manukyan, 2024):

V-Dem-ի ժողովրդավարության հայեցակարգման և չափման ուրույն մոտեցումն առանձնացնում է ժողովրդավարության մի քանի հիմնական՝ ընտրական, ազատական, մեծամասնական, կոնսենսուսային, մասնակցային, խորհրդակցական և հավասարության սկզբունքներ (V-Dem, 2025):

¹ Դալը «պոլիարխիա» եզրույթի հեղինակն է, որը մեկտեղում է արդար ընտրությունները համընդհանուր ընտրական իրավունքի ներքո քաղաքական ազատությունների և տեղեկատվության այլընտրանքային այն աղբյուրների հետ, որոնք բարձրացնում են ընտրությունների ժողովրդավարական որակները: (Teorell, Michael, et al, 2018)

Ընտրական (էլեկտորալ) ժողովրդավարությունը ընտրական անձնիշխանությունից կամ հիբրիդային ռեժիմից տարբերելու առանցքային չափանիշը դե ֆակտո ազատ ու արդար ընտրություններն են, ինչպես նաև նման ընտրությունները երաշխավորող մի շարք այլ ազատություններ ունենալը: Այդպիսի ընտրությունները պետության քաղաքական համակարգը գնահատելու համար առաջնային նշանակություն ունեցող չափանիշն են հանդիսանում (Manukyan, 2024): Ազատ և արդար համարվում են այն ընտրությունները, որոնք երաշխավորում են ընտրողների համար հավասար հնարավորություններ, խելամիտ հարմարեցումների առկայություն, լիարժեք ու անխոչընդոտ մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ:

Տվյալ պարագայում առաջնային է դառնում, մասնավորապես, սոցիալական ներառականությունը, ինչին հասնելու համար առանցքային է իմաստավորված մասնակցային գործընթացը, քանի որ այն միավորում է հասարակության բոլոր շահագրգիռ կողմերին՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ), տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ), պետական տարբեր գերատեսչություններին ու գործակալություններին (ՊՈԱԿ և այլն), սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններին (ՄՄՄ կամ այլ) և սոցիալական ծառայություններ տրամադրող մասնագետներին ու դրանցից օգտվողներին:

Վերադառնալով ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածին՝ Հայաստանը հռչակվում է ոչ միայն ժողովրդավարական, այլև սոցիալական պետություն: Այդպիսի պետությունը պարտավորվում է ապահովել ձևայնացված (ֆորմալ) աջակցություն այն քաղաքացիներին, սոցիալական խմբերին, որոնք չեն կարող դա անել ինքնուրույն, չունեն բավարար ռեսուրսներ դժվարին իրավիճակներից սեփական ուժերով դուրս գալու համար: Որպես կանոն, այդպիսիք լուսանցքավորված, սոցիալապես բացառված խոցելի խմբերի ներկայացուցիչներն են: Սոցիալական պետությունում ներպետական քաղաքակա-

նությունը պետք է խարսխված լինի սոցիալական ներառականության և արդարակշռության (equity) ապահովման վրա:

Սոցիալական ներառականության մեթոդաբանության կարևորությունը պետական քաղաքականության մշակման մեջ շատ երկրներում գնալով ձեռք է բերում առավել մեծ նշանակություն: Այն կարող է մեկնաբանվել որպես գործընթաց, որի միջոցով ջանքեր են գործադրվում բոլորին հավասար հնարավորություններ ապահովելու համար, որպեսզի նրանք կարողանան իրացնել իրենց ողջ ներուժը (Brown, 2021): Սոցիալական ներառականությունը բազմաչափ գործընթաց է, որի նպատակն է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն են տալիս հասարակության յուրաքանչյուր անդամի լիարժեք, ակտիվ և իմաստավից մասնակցություն ունենալու բոլոր ոլորտներում, ներառյալ քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և քաղաքական գործունեությունը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացներում (Zapirain & Zorrilla, 2013): Սոցիալական ներառականությունն այն կարևոր նախապայմանն է ու գործընթացը, որի միջոցով հասարակությունները պայքարում են աղքատության և սոցիալական բացառման (exclusion) դեմ:

Իր հերթին, սոցիալական բացառումը ենթադրում է ռեսուրսների, իրավունքների, ապրանքների ու ծառայությունների պակաս կամ անհասանելիություն և հանրային կյանքի տարբեր ոլորտներում այնպիսի գործընթացներում մասնակցության անկարողություն, որոնք հասանելի են հասարակության մեծամասնությանը կամ գերիշխող խմբերին (Cedeno, 2023): Սոցիալական ներառականությունն ապահովելը նշանակում է ընդունել, որ որոշ սոցիալական խմբեր և լուսանցքավորված համայնքներ բխվում են սոցիալական բացառման, խտրականության և ռեսուրսների անհավասար հասանելիության և պայքարել դրա դեմ տարբեր ոլորտներում ու մակարդակներում:

ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին ընդունվել է «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը», որն ուղղված է պետական սեկտորի համապարփակ բարեփոխումներին, որոնց ռազմավարական առանցքը կառուցվում է «ինտեգրված» կա-

ռավարության հարացույցի շուրջ՝ նպատակ ունենալով ապահովելու համակարգի փոխներդաշնակեցված, սիներգիկ, արհեստավարժ, տեխնոլոգիահենք, պատասխանատու գործունեությունը: Բարեփոխումների հենման կետը պետության արժեքային համակարգն է ու սոցիալ-մշակութային համատեքստը» (Arlis, 2022):

Այս պարագայում սոցիալական ներառականության համընդգրկումը (mainstreaming) օրակարգային հարց է, քանի որ հանրային կառավարման արդյունավետության ցուցիչ է նաև այն, թե որքանով են առաջարկվող ծրագրերն ու ծառայություններն ապահովում հավասար հնարավորություններ հասարակության բոլոր անդամների համար: Մինչդեռ սոցիալական ներառականության բացակայության կամ անբավարար մակարդակի ցուցիչ է գործազրկության, աշխատաշուկայում ցածր մրցունակության, աղքատության, մուրացկանության, մանկալքության, անօթևանության և նման սոցիալական հիմնախնդիրների տարածվածությունը պետությունում:

Համընդգրկումը ենթադրում է, որ սոցիալական ներառականությունը ոչ թե որպես առանձին հիմնահարց պետք է դիտարկվի, այլ՝ հանրային որոշումների կայացման գործընթացներում, օրենքների և քաղաքականության մշակման ու իրագործման պրակտիկաներում պարտադիր նախապայման, այն պետք է լինի բոլոր ոլորտներում և մակարդակներում: Առաջնորդվելով սոցիալական ներառականության համընդգրկման մոտեցումով՝ կազմակերպությունները, որոշում կայացնողները և քաղաքականություն մշակողները նպատակ են հետապնդում ստեղծելու ներառական միջավայր, խելամիտ հարմարեցումներ և խթանելու բոլոր քաղաքացիների համար հավասար հնարավորություններ:

Սոցիալական ներառականության հիմնական սկզբունքներն են.

- համակարգային խոչընդոտների հասցեագրումը սոցիալական ներառականության հատվածակողմով (պրիզմա) մշակվող բարեփոխումների և ռազմավարությունների միջոցով,

- մշակութային խոչընդոտների հասցեագրումը և ներառականության մշակույթի ձևավորումը խտրականության դեմ արդյունավետ պայքարի միջոցով,
- հավասարության խթանումը հավասար հնարավորությունների, ներկայացվածության և մասնակցայնության ապահովման միջոցով (Maier, Schulze, Sprenger, 2009):

Սոցիալական ներառականության համընդգրկումը ենթադրում է ոչ միայն պետության քաղաքականության մեջ համապատասխան նոր օրակարգ, այլև բոլոր այն որոշումներում, ռազմավարություններում, ծրագրերում, օրենքներում ու կանոնակարգերում, որոնք այս կամ այն կերպ ազդում են քաղաքացու և, առհասարակ, հանրային կյանքի այլ մի շարք ասպեկտների վրա՝ ներառյալ կրթությունը, գիտությունը, առողջապահությունը, արդարադատությունը, տնտեսությունը, մշակույթը, սպորտը և այլն: Այն բնութագրվում է ներառականության հիմնահարցի հանդեպ մոտեցման ու հարացույցի փոփոխությունով, ինչի նպատակն է գտնել լուծումներ, մշակել գործիքակազմ, որով հնարավոր կլինի փոփոխել սոցիալական ներառականությանը որևէ կերպ խոչընդոտող վերաբերմունքը, նորմերը, պրակտիկաները՝ արտացոլելով այդ փոփոխությունը պետության քաղաքականության մեջ: Սա պահանջում է փաստահենք, հետազոտահենք քաղաքականության մշակում, որի արդյունքում ստեղծված ծրագրերը և ռազմավարությունները կլինեն առավել հիմնավորված, հասցեական և արդյունավետ, այդ թվում՝ ծախսարդյունավետ:

Ելնելով այն պնդումից, որ ժողովրդավարությունը կոչված է բացառելու միակենտրոն գերիշխանությունը քաղաքական համակարգերում, այն պետք է ապակենտրոնացված ծառայությունների համակարգ ու ներառականություն խթանի:

Ապակենտրոնացումը մարզային/տեղական ինքնակառավարման մարմիններին որոշումների կայացման լիազորությունների, իշխանության և պատասխանատվության փոխանցման, այդ պատասխանատվությունը կիսելու գործընթացն է: Դրա նպատակն է կառավարությունը ավելի մոտեցնել ժողովրդին՝ հույս ունենալով բարելա-

վել հանրային ծառայությունների ծախսարդյունավետությունը, հաշվետվողականությունը և արձագանքելիությունը տեղական համայնքների կոնկրետ կարիքներին (Ibrahim, 2024):

Աղյուսակ 1. Սոցիալական ծառայություններն անձնիշխանային և ժողովրդավարական համակարգերում

• Մարդիկ գնահատվում են արտադրության տեսանկյունից / միջոց
• Հարաբերություններն աստիճանակարգային են
• Սոցիալական հիմնախնդիրները գիտակցված կամ ընդունված չեն, ստվերված են
• Ծառայությունների մոդելները հիմնվում են քաղաքական և սոցիալական վերահսկողության վրա
• Մշտադիտարկման համակարգերը քաղաքականացված են և օգտագործվում են սոցիալական վերահսկողության նպատակով
• Խնամքի համակարգը կենտրոնացված, ինստիտուտավորված է
• Կառավարումն ու ֆինանսավորումը կենտրոնացված ու աստիճանակարգային են
• Ծառայությունների համակարգում մասնագետների գործառույթները վարչարարական են և ընթացակարգային
• Մարդիկ ունեն էական արժեք, կարևորված են ու իրավահավասար
• Հարաբերությունները երկվեկտոր են, փոխադարձ, փոխկապված
• Սոցիալական հիմնախնդիրները գիտակցված են, առաջացնում են կոլեկտիվ գործողություններ
• Ծառայությունների մոդելները հիմնվում են միջազգային չափորոշիչների, փաստերի, հետազոտահեն կարիքների վրա
• Մշտադիտարկման համակարգերը կոչված են ապահովելու պաշտպանություն և որակ
• Համայնքահեն ծառայություններ են (ապախնստիտուտավորում)
• Կառավարումն ու ֆինանսավորումը ապակենտրոնացված են և մասնակցային
• Ծառայությունների համակարգում մասնագետների գործառույթները պրոֆեսիոնալ են ու ճկուն

**Փոխակերպվող համակարգերին, որոնցում ռեզիդենցիալ հաս-
տատություններից անցում է կատարվում ապահինստիտու-տավոր-
մանը, բնորոշ է.**

- ✓ Խոցելի խմբերի՝ որպես սոցիալական կապիտալի ընկալում
և արժևորում,
- ✓ Համալիր մոտեցում տնտեսական, առողջապահական, հոգե-
բանական կարիքներին և ռիսկի այլ գործոններին,
- ✓ Ռիսկի կառավարման մոտեցում,
- ✓ Շարունակական խնամքի և այլընտրանքային ծառայություն-
ների ապահովում,
- ✓ Կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցառումների իրագործում
(3 P),
- ✓ Համայնքի պատասխանատվության և սոցիալական ներա-
ռականության կարևորում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ բազ-
մաթիվ երկրներում սոցիալական քաղաքականության մշակման ու
իրագործման մեջ տարիներ շարունակ կիրառվում է «3 P» մոտեցու-
մը: Երեխայի պաշտպանության ոլորտում, առողջապահության հա-
մակարգում և մի շարք այլ ոլորտներում այս մոտեցումն իրեն արդա-
րացրել է: Առաջնորդվել «3 P»-ով՝ նշանակում է ապահովել ծառայու-
թյուններ (provision), պաշտպանություն (protection) և մասնակցու-
թյուն (participation): Պաշտպանությունը հիմնականում հակախտ-
րական օրենսդրության առկայության, խտրականությունից, շահա-
գործումից, սոցիալական բացառումից պաշտպանված լինելու իրա-
վունքի մասին է: Ապահովումը ծառայություններին հավասար հա-
սանելիության և սոցիալական ապահովության իրավունքի մասին է:
Մասնակցությունը որևէ մեկին տեսադաշտից դուրս չթողնելու, նե-
րառելու, այլևս որպես պասիվ շահառու/սպառող չվերաբերվելու,
իրավունքահեն մոտեցումով առաջնորդվելու մասին է: Վերջինս են-
թադրում է սոցիալական փոքրամասնությունների, կանանց, երեխա-
ների, հաշմանդամություն ունեցողների, ցածր սոցիալ-տնտեսական

կարգավիճակ ունեցողների և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների ազատ ու իմաստավորված մասնակցության բարձր մակարդակ, որը պահանջում է համայնքների, ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության դերակատարների ակտիվ ներգրավվածություն գործընթացներում:

Հիմնական գործողությունները, որոնք ընկած են սոցիալական ներառականության հիմքում, հետևյալն են՝ (Atkinson & Marlier, 2010)

- ✓ Երաշխավորել հավասար հնարավորություններ բոլոր անհատների համար՝ անկախ նրանց այս կամ այն բնութագրիչից և լոկալ համատեքստից, չպետք է լինի որևէ մշակութային կամ այլ գործոնով պայմանավորված արդարացում խտրականության, սոցիալական բացառման ու իրավունքների իրացման տեսանկյունից անհավասար պայմանների համար:
- ✓ Ապահովել այն գործողությունների համակարգումը, որոնք նպաստում են սոցիալական ներառականությանը, և կենտրոնացնել դրանք բոլոր այն համայնքներում, ուր բարձր է խոցելիությունը ու արդիական է սոցիալական բացառման ու խտրականության հիմնախնդիրը:
- ✓ Վարել սոցիալական ներառականության քաղաքականություն, մասնավորապես կիրառել գենդերային հավասարության ռազմավարություն՝ հաշվի առնելով կանանց և տղամարդկանց առանձնահատուկ կարիքները:
- ✓ Սոցիալական ներառականության համընդգրկում իրականացնել՝ բոլոր համապատասխան իրավական կարգավորումներում ու ռազմավարություններում՝ առաջնորդվելով սոցիալական ներառականության մեթոդաբանությամբ: Դա կարևոր է, արդյունավետ՝ ներառյալ ծախսարդյունավետ հանրային քաղաքականություն ունենալու տեսանկյունից:

Սոցիալական ներառականություն ապահովելը միջգերատեսչական, միջոլորտային, միջսեկտորալ և միջկազմակերպական շա-

րունակական համագործակցություն է ենթադրում: Պետական սեկտորի կազմակերպությունները պետք է համագործակցեն համայնքների հետ՝ սոցիալական ներառականության հետ կապված իրենց քաղաքականությունն ու ծրագրերը մշակելիս: Համայնքները, համայնքահեն հասարակական կազմակերպությունները պետք է առանցքային դերակատարում ունենան այդ գործընթացում: Հատկապես կարևոր է համայնքի կառավարիչների/ առաջնորդների (ՏԻՄ ղեկավար, ավագանի, գյուղապետ և այլն) ներդրումը, քանի որ նրանք են, որպես կանոն, համայնքում խթանում պատկանելիության, ինքնության զգացումը և ապահովում սոցիալական նորմերի հավաքական ըմբռնումն ու ընդունումը: Պետական մարմինների կողմից որոշումների կայացման, սոցիալական ներառականությանն առնչվող քաղաքականության մշակման գործընթացում համայնքների գորեղացումն ու մասնակցության ապահովումն այդ քաղաքականության հաջողված լինելու առումով զգալի նշանակություն ունի և պետք է լինի որոշում կայացնողի ուշադրության կիզակետում: Կառավարման մեջ ներառականության կարևորումը և ապահովումը սոցիալական ներառականության ուղղորդման արդյունավետության նախադրյալներից մեկն է:

Այսպիսով, սոցիալական ներառականության մեթոդաբանության նպատակն է նպաստել ներպետական քաղաքականության, ներառյալ սոցիալական քաղաքականության մշակման գործընթացի և սոցիալական ծառայությունների համակարգի բարելավմանը, ինչի արդյունքում պետք է բարձրանա սոցիալական հիմնախնդիրների՝ աղքատության, գործազրկության, ինչպես նաև խտրականության դեմ պայքարի արդյունավետությունը:

Սոցիալական ներառականությունը պետք է հանդիսանա ցանկացած ժողովրդավարական ու սոցիալական պետության կառավարության տեսլականը՝ կապված արդարության, հավասար հնարավորությունների ու սոցիալական պաշտպանության հետ: Այն ապահովելու քաղաքական պարտավորություն ստանձնելը պետության

առաջընթացի նախադրյալներից մեկն է: Հարկ է շեշտել, որ սոցիալական բացառման նվազեցումը և հավասար հնարավորությունների ապահովումը հասարակության բոլոր անդամների համար ոչ միայն բարոյական տեսանկյունից է էական, այլև բխում է ցանկացած պետության շահերից և պետք է հանդիսանա ժողովրդավարական պետության քաղաքականության հեռահար նպատակներից մեկը:

Գրականության ցանկ

- Dahl R. (1989) Democracy and its critics, https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=2245&context=faculty_scholarship
- Քեմբրիջի բառարան, <https://dictionary.cambridge.org/dictionary/english/-democracy>
- ՀՀ Սահմանադրություն, Հոդված 1 և 2, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723>
- Thakur, Y. 4 Pillars of Democracy: A Comprehensive Analysis, <https://effectivelaws.com/4-pillars-of-democracy/>
- Pillars of Democracy, Association of American Law Schools, <https://am.aals.org/past/am20/theme/>
- Weiner, M. (1994) Human services management: Analysis and Application, UCONN, Connecticut, 34-35
- Holden M. (2014) “Imperialism” in Beurocracy, Cambridge Univercity Press, <https://tinyurl.com/3z4d48hv>
- Teorell, J., Michael, C. et al, (2018) Measuring Polyarchy Across the Clobe, 2018 <https://link.springer.com/article/10.1007/s12116-018-9268-z/>
- Manukyan H. The Roots of Armenia’s Democratisation after the 2018 Velvet Revolution / Ed. By V. Gevorgyan, Y. Antonyan, Peter Lang Group, Switzerland, 90
- Democracy Report, V-Dem, 2025, https://www.v-dem.net/documents/60/V-dem-dr__2025_lowres.pdf
- Ibrahim, A. H. H. (2024). Decentralization and its impact on improving public services. International Journal of Social Sciences, https://www.researchgate.net/publication/381188676_Decentralization_and_its_Impact_on_Improving_Public_Services

- Maier, C., Schulze, B., Sprenger, S. (2009) Social Inclusion – Principles and Procedures <http://www.methodfinder.net/principles84.html>
- Brown T. (2021) Building an inclusive society in the post-pandemic world, <https://lordslibrary.parliament.uk/building-an-inclusive-society-in-the-post-pandemic-world/>
- Garcia Zapirain, Amaia Mendez Zorrilla (2013) ,What is Social Inclusion? <https://www.igi-global.com/dictionary/social-inclusion/27360>
- Cedeno D. (2023) Social Exclusion and Inclusion: A Social Work Perspective, Families in Society The Journal of Contemporary Social Services 104(3)
- Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն, 2022 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791>
- Atkinson, A., Marlier E. (2010) Analysing and Measuring Social Inclusion in a Global Context, <https://www.un.org/esa/socdev/publications/measuring-social-inclusion.pdf>

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լիանա Բալյան

*ՀՊՄՀ-ի դասախոս, «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» ՀԿ-ի ղեկավար, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի
հայցորդ*

**SOCIAL PARTNERSHIP IN ARMENIA: MECHANISMS,
CHALLENGES, AND OPPORTUNITIES**

Liana Balyan

*Lecturer at ASPU, Head of the “Leading Group for Public Research” NGO,
PhD Candidate at the Faculty of Sociology, Yerevan State University*

Abstract. In the modern world, in many countries, labor relations are shaped and governed by the concept of social partnership, which provides a framework for cooperation between employers, employees, and the state. Social partnership is a relatively new development in Armenia, emerging in response to economic reforms, global labor trends, and the country’s transition from a planned economy to a market-based one. After gaining independence in 1991, Armenia moved from a Soviet-style planned economy to a market economy, fundamentally transforming its labor relations. Under the Soviet system, labor relations were centralized, leaving little room for social dialogue between workers and the state. With the shift toward economic liberalization, privatization, and integration into global markets, the need for a more dynamic and collaborative approach to labor relations became evident. Since the 1990s, Armenia has been working to establish a social partnership model aligned with international labor standards. This development has been influenced by Armenia’s adherence to International Labour Organization (ILO) conventions and its engagement in agreements with the European Union (EU). The country has developed a legal and institutional framework for social dialogue, creating mechanisms that allow the government, employers, and trade unions to cooperate in addressing labor issues. This article examines the concept of social partnership in Armenia - its mechanisms, challenges, and opportunities for future development. It presents various theoretical approaches to the study of partnership and discusses the findings of a

conducted study. The study employed qualitative methods, enabling a comprehensive analysis of the current situation and the identification of key issues. The article holds both theoretical and practical significance: it synthesizes a wealth of information that can serve as a theoretical foundation for future research and includes practical proposals aimed at enhancing social partnership in Armenia.

Keywords: Social partnership, Confederation of Trade Unions of Armenia, Union of Employers of Armenia, employee representatives, trade unions, Labor legislation, labor relations, social dialogue, collective bargaining, informal employment, employment contract.

ՏԵՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Սոցիալական գործընկերությունը համակարգ է, որի միջոցով տարբեր կողմեր՝ պետությունը, գործատուները և աշխատողները (կամ նրանց միավորումները, օրինակ՝ արհմիությունները), համագործակցում են սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, աշխատաշուկայի կարգավորման և աշխատողների իրավունքների պաշտպանության համար: **Սոցիալական գործընկերությունը հիմնված է երկխոսության, բանակցությունների և կոլեկտիվ բանակցությունների վրա՝ կենտրոնանալով բոլոր շահագրգիռ կողմերի համար արդար լուծումներ ստեղծելու վրա:** Այն կառուցված է փոխըմբռնման, հարգանքի և վստահության սկզբունքների վրա: Սոցիալական գործընկերությունը չի սահմանափակվում լոկ աշխատավարձի և աշխատանքային պայմանների վերաբերյալ կոլեկտիվ բանակցություններով, այլ տարածվում է ավելի լայն հարցերի վրա, ինչպիսիք են սոցիալական պաշտպանությունը, աշխատաշուկայի բարեփոխումները, զբաղվածության, ինչպես նաև տնտեսության զարգացման ռազմավարությունները: Սոցիալական գործընկերությունը Հայաստանում, ինչպես և այլ երկրներում, ենթադրում է նաև եռակողմ համագործակցություն՝ ուղղված աշխատանքային հարաբերությունների կարգավորմանը: Այն պաշտոնապես ճանաչված է ինչպես աշխատանքային օրենսդրության, այնպես էլ քաղաքականության շրջանակներում: Այսպես՝ 2004 թ-ին ընդունված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 39-րդ հոդվածում սոցիալական գործընկերությունը սահ-

մանվում է որպես աշխատողների (նրանց ներկայացուցիչների), գործատուների (նրանց ներկայացուցիչների), Հայաստանի Հանրապետության կառավարության միջև փոխհարաբերությունների համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատողների և գործատուների շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և/կամ տնտեսական հարաբերություններում:

Սոցիոլոգիական տեսությունների շրջանակներում սոցիալական գործընկերության մեկնաբանման համար հնարավոր են մի շարք մոտեցումներ, որոնցից քննարկենք միայն կառուցվածքային ֆունկցիոնալիզմը, կոնֆլիկտի տեսությունը, կապիտալի տեսությունները և փոխանակման տեսությունները:

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը շեշտում է սոցիալական ինստիտուտների փոխկապակցվածությունը և նրանց դերը հասարակության կայունության պահպանման գործում: Այս շրջանակներում սոցիալական գործընկերությունը գործում է որպես սոցիալական հավասարակշռություն պահպանող մեխանիզմ՝ անդրադառնալով տարբեր խմբերի (ինչպիսիք են աշխատողները, գործատուները և պետությունը) կարիքներին: Սոցիալական գործընկերությունը, այս տեսանկյունից, կարևոր գործիք է սոցիալական կոնֆլիկտները նվազեցնելու և համախմբվածությունը խթանելու համար: Գործընկերության յուրաքանչյուր մասնակից խաղում է որոշակի դեր, և այդ դերերի գործարկումն ապահովում է հասարակության կայունությունն ու կարգունակությունը: Ընդհանուր կանոնների շնորհիվ հնարավոր է հավասարակշռել հակադիր դերերի համապատասխան շահերը: Քանի որ օրենքը վերարտադրում է սոցիալական համերաշխության հիմնական ձևերը, մենք միայն պետք է դասակարգենք իրավունքի տարբեր տեսակներ, որպեսզի դրանցից գտնենք սոցիալական համերաշխության տարբեր տեսակներ, որոնք համապատասխանում են դրան (Դյուրկհեյմ, 1933):

Ի հակադրություն ֆունկցիոնալիստական տեսությունների՝ կոնֆլիկտի տեսության տեսանկյունից սոցիալական գործընկերու-

թյունը քննարկվում է թերահավատորեն, քանի որ գործընկերությունները, ըստ մարքսիստների, կարող են պարզապես գործել որպես աշխատողներին հանգստացնելու և ավելի արմատական գործողությունները կանխելու միջոց, ինչպիսիք են գործադուլները կամ հեղափոխությունները՝ դրանով իսկ պահպանելով անհավասար ուժային հարաբերությունների ստատուս քվոն: Այս տեսակետում սոցիալական գործընկերությունները դիտվում են որպես կապիտալի գործիք՝ աշխատողների դժգոհությունը կառավարելու համար՝ առանց անհավասարության հիմնական պատճառները լուծելու (Մարքս, 1867):

Սոցիալական փոխանակման տեսությունը, որը մշակվել է այնպիսի սոցիոլոգների կողմից, ինչպիսիք են Ջորջ Հոմանսը և Փիթեր Բլաուն, ընդգծում է, որ սոցիալական փոխազդեցություններն առաջնորդվում են փոխադարձությամբ. մարդիկ մասնակցում են փոխազդեցություններին, երբ նրանք ակնկալում են փոխադարձ օգուտներ: Տեսությունն ընդգծում է, թե ինչպես են սոցիալական դերակատարները գործընկերություն ձևավորում՝ հիմնված ծախսերի և օգուտների վերլուծության վրա՝ ակնկալելով իրենց համագործակցության վերադարձը: Այս տեսանկյունից սոցիալական գործընկերությունները դիտվում են որպես կամավոր համագործակցություններ, որտեղ ներգրավված կողմերը (օրինակ՝ արհմիությունները, գործատուները և կառավարությունը) համաձայնում են բանակցել՝ հիմնվելով յուրաքանչյուր կողմի համար ակնկալվող օգուտների վրա (Բլաուն, 1964):

Սոցիալական կապիտալի տեսությունը (Պյեռ Բուրդյե, Ջեյմս Քուլման) ընդգծում է ցանցերի, վստահության և փոխադարձ ազդեցության նշանակությունը անհատների և խմբերի միջև համագործակցության խթանման գործում: Այս համատեքստում սոցիալական գործընկերությունները հիմնված են ընդհանուր նորմերի և մասնակիցների միջև վստահության վրա: Տեսությունը ենթադրում է, որ տարբեր սոցիալական խմբերի (օրինակ՝ կառավարությունը, աշխատուժը և բիզնեսը) համագործակցությունն ավելի արդյունավետ է,

երբ կա փոխադարձ վստահություն, ընդհանուր ինքնություն և ընդհանուր բարիքի նկատմամբ հավաքական հանձնառություն (Բուրդիե Պ., 1986):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում սոցիալական գործընկերության հաստատման և ներկայիս կարգավիճակի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն ստանալու համար 2022-2024 թվականներին իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն: Հետազոտությունը նպատակ ուներ ուսումնասիրել սոցիալական գործընկերության իրավիճակը, դինամիկան և մարտահրավերները: Ուսումնասիրությունն իրականացվել է որակական մեթոդների կիրառմամբ, մասնավորապես.

- Խորին հարցազրույցներ առանցքային տեղեկատվությունների/հիմնական շահագրգիռ կողմերի հետ (աշխատողների, գործատուների միությունների և կառավարության ներկայացուցիչներ),
- Ֆոկուս խմբային քննարկումներ աշխատողների հետ:

Խորին հարցազրույցներին մասնակցել են ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի ղեկավարության ներկայացուցիչներ (3 հոգի), հիմնական, ակտիվ ճյուղային արհմիությունների ներկայացուցիչներ (12 հոգի), գործատուների միության ներկայացուցիչներ (9 հոգի) և կառավարության ներկայացուցիչներ (3 հոգի):

Ֆոկուս խմբային քննարկումների համար ընտրանքը կազմվել է 2 չափանիշների հիման վրա.

- աշխատանքի ոլորտ (պետական, մասնավոր, շահույթ չհետապնդող),
- աշխատանքային փորձ (մինչև 10 տարի, 11-20 տարի, 21 տարուց ավելի):

Անցկացվել է 24 ֆոկուս խմբային քննարկում: Յուրաքանչյուրին մասնակցել է 8-12 հոգի: Ուսումնասիրության արդյունքները վերլուծվել են որակական բովանդակության վերլուծության մեթոդով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Սոցիալական գործընկերության հիմնական ինստիտուտները Հայաստանում. Սոցիալական գործընկերությունը Հայաստանում վերաբերում է երեք հիմնական ինստիտուտների համագործակցությանը.

- **Պետություն.** կարգավորում է աշխատանքային օրենսդրությունը, ապահովում է միջազգային կոնվենցիաների և իրավական երաշխիքների տեղայնացումը, պատասխանատու է աշխատողների բարեկեցության ապահովման և իրավունքների կիրարկման հիմքերի ապահովման համար:
- **Գործատուներ.** ներկայացնում են բիզնեսի շահերը՝ ձգտելով շահութաբերության՝ ապահովելով արդար փոխհատուցում և աշխատանքային պայմաններ:
- **Աշխատողներ.** ներկայացված են արհմիությունների կողմից, որոնք պաշտպանում են աշխատողների արդար վերաբերմունքը, իրավունքները և արտոնությունները:

Այս երեք հաստատությունների համագործակցության նպատակն է ստեղծել աշխատանքային հարաբերությունների արդյունավետ համակարգ, բանակցել աշխատանքային պայմանների շուրջ և պաշտպանել աշխատողների իրավունքները: Աշխատանքային օրենսգիրքը, որը Հայաստանում աշխատանքային հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական փաստաթուղթն է, ընդգծում է այս գործընկերության կարևորությունը կայուն և ներդաշնակ աշխատաշուկայի հասնելու համար:

2009 թվականի ապրիլի 27-ին ՀՀ կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև կնքվել է եռակողմ պայմանագիր, որով հիմք է դրվել հանրապետական մակարդակով գործընկերության ստեղծման համար: Սոցիալական գործընկերությունը մինչ 2018 թվականը որոշակիորեն ձևական բնույթ էր կրում: Գործընկերության շրջանակներում հանդիպումներն ու քննարկումներն իրա-

կանացվում էին շատ հազվադեպ, շատ հաճախ առանց լուրջ համաձայնեցված արդյունքի: Ըստ ուսումնասիրությամբ ստացված տվյալների՝ 2009-2018թթ. ընթացքում հանրապետական մակարդակով սոցիալական գործընկերության հանդիպումների թիվը չի գերազանցել 5-ը: Ընդ որում, հանդիպումներում գերիշխող է եղել պետության դերը, թեև սոցիալական գործընկերությունը հիմնված է բոլոր կողմերի իրավահավասարության սկզբունքի վրա:

Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս պետությունն իր օրենսդրական գործողություններով վճռորոշ դեր է խաղում Հայաստանում եռակողմ համագործակցության գործընթացում: Այն պատասխանատու է օրենքների ընդունման և դրանց կիրարկումն ապահովելու ընթացակարգերի սահմանման համար: Հայաստանի կառավարությունը, *գիտակցելով իր միջազգային պարտավորությունները*, նպատակ ունի ներգրավել և՛ գործատուներին, և՛ աշխատողներին աշխատանքային քաղաքականության հետ կապված որոշումների կայացման գործընթացներում: Պետք է նշել, սակայն, որ զգալի փոփոխություններ են տեղի ունեցել սոցիալական գործընկերության համակարգում՝ ինչպես գործընկերների գործելաոճերում, այնպես էլ նրանց եռակողմ համագործակցության մեջ:

Սոցիալական գործընկերության մյուս երկու առանցքային ինստիտուտները ներկայումս գտնվում են անցումային փուլում՝ կառուցվածքային և գործառնական բարեփոխումների փուլում: Արհմիությունները, որպես աշխատողների շահերը ներկայացնող և պաշտպանող կառույց, գործում են նախկին Խորհրդային Միության արհմիությունների մոդելով, չնայած վերջին շրջանում տեղի ունեցած էական փոփոխություններին: Արհմիությունների կոնֆեդերացիայում վերջին շրջանում տեղի են ունեցել կոնֆեդերացիայի նախագահի և փոխնախագահների իրական ընտրություններ, որոնց արդյունքում պատմության մեջ առաջին անգամ ղեկավար է ընտրվել կին, ընդ որում՝ երիտասարդ: Սա ենթադրում է ավելի ճկուն և արդիական մոտեցումների ներմուծում արհմիութենական կառուցվածքում:

Աշխատանքի միջազգային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում արհմիությունների արդիականացման ուղղությամբ շատ լուրջ աշխատանք է տարվում, որը, թեև բավականին դանդաղ, սակայն աստիճանաբար առաջացնում դրական տեղաշարժեր:

Հայաստանում արհմիությունները բրգաձև կառուցվածք ունեն: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ) 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ միավորում է 18 ճյուղային հանրապետական միություններ, որոնք ներառում են 587 արհմիութենական կազմակերպություններ՝ 189479 անդամներով: Գործատուների շահերը ներկայացնում է Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ): ՀԳՀՄ-ն միավորում է 14112 հայկական կազմակերպություն, որոնք ներկայացնում են Հայաստանի տնտեսական բոլոր ոլորտները, 21 բիզնես ասոցիացիաներ և ոլորտային միություններ: Կարևոր է նշել, որ արհմիությունների հիմնական գործառնություններն են աշխատողների շահերը ներկայացնելը և որոշիչ դեր խաղալ կոլեկտիվ պայմանագրերի շուրջ բանակցությունների, աշխատանքային վեճերի լուծման և աշխատանքային պայմանների բարելավման քարոզչության գործում: Մյուս կողմից, ՀԳՀՄ-ն ապահովում է, որ գործատուների մտահոգությունները, ինչպիսիք են աշխատուժի ծախսերը, բիզնեսի կանոնակարգերը և աշխատուժի ճկունությունը, բարձրաձայնվեն որոշումների կայացման գործընթացում:

Ներկայում ջանքեր են գործադրվում փոփոխություններ կատարելու և՛ «Արհմիությունների մասին», և՛ «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքներում: Այս փոփոխությունները շարունակական բարեփոխումների մի մասն են, որոնք ուղղված են արհմիությունների և գործատուների կազմակերպությունների կառուցվածքների և գործունեության արդիականացմանը՝ *Հայաստանի միջազգային պարտավորություններին և աշխատաշուկայի զարգացող կարիքներին համահունչ*: Ակնկալվում է, որ այս օրենսդրական փոփոխություններն ավելի կբարձրացնեն սոցիալական գործընկերության

արդյունավետությունը և կբարելավեն ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների ներկայացվածությունը աշխատանքային խնդիրների հետ կապված որոշումների կայացման գործընթացներում:

Հայաստանում սոցիալական գործընկերությունը հիմնված է մի քանի հիմնական սկզբունքների վրա.

Եռակողմ համագործակցություն. Հայաստանը ստեղծել է եռակողմ հանձնաժողովը՝ որպես սոցիալական երկխոսության հիմնական հարթակ, որը համախմբում է կառավարության, արհմիությունների և գործատուների միության ներկայացուցիչներ: Այս հանձնաժողովի հանձնառությունն է քննարկել և բանակցել աշխատանքի հետ կապված հիմնական խնդիրների շուրջ, այդ թվում՝ նվազագույն աշխատավարձի հետ կապված, սոցիալական ապահովության և կենսաթոշակային բարեփոխումները, առողջության և անվտանգության կանոնակարգերը, զբաղվածության չափանիշները և այլն:

Եռակողմ հանձնաժողովը նաև ծառայում է որպես վեճերի լուծման, աշխատողների իրավունքների պաշտպանության ապահովման և ավելի լայն տնտեսության վրա ազդող քաղաքականությունների բանակցային հարթակ: Այս մարմնի արդյունավետությունը մեծապես կախված է բոլոր ներգրավված կողմերի ակտիվ մասնակցությունից և փոխադարձ համաձայնության և կոնսենսուսի ուղղությամբ աշխատելու նրանց պատրաստակամությունից: Եռակողմ հանձնաժողովը ստեղծվել է ամենաբարձր՝ հանրապետական մակարդակով: Հանրապետական մակարդակում եռակողմ համագործակցությունն իրականացվում է պաշտոնական, երբեմն էլ ոչ պաշտոնական ընթացակարգերով: *Երկխոսության մեջ ներգրավվելու կողմերից որևէ մեկի թուլությունն ու չկամությունը զգալիորեն նվազեցնում է սոցիալական գործընկերության արդյունավետությունը:* Սակայն հարկ է նշել, որ հանրապետական մակարդակով սոցիալական երկխոսության արդյունավետությունը վերջին շրջանում էականորեն աճել է, որի արդյունքը կարելի է համարել **2023 թվականի**

մայիսի 5-ին ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ ի նպաստ ավելի արդար և արժանապատիվ աշխատանքի: Տվյալ փաստաթուղթը հանդիսանում է ոչ միայն կառավարություն, գործատուներ և աշխատողների միություններ համագործակցության, այլ նաև ավելի լայն մասշտաբով քննարկումների և համատեղ աշխատանքի արդյունք: Փաստաթուղթը դրվել է հանրային քննարկման, որին մասնակցության հնարավորություն են ունեցել ինչպես ՀՀ-ում գործող կազմակերպությունները, այնպես էլ առանձին անհատներ: Բազմակողմանի քննարկումների և բոլոր շահերի համակշռման արտահայտություն է հանդիսանում այն, որ փաստաթուղթն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովում՝ ձայների մեծամասնությամբ, ընդ որում, կողմ է քվեարկել նաև ընդդիմությունը:

Սոցիալական երկխոսություն տարածքային և ոլորտային մակարդակներում: Աշխատանքային օրենսգրքը ընդգծում է սոցիալական երկխոսության կարևորությունը՝ որպես գործատուների և աշխատողների միջև փոխըմբռնման և համագործակցության խթանման միջոց: Այն խրախուսում է բաց հաղորդակցությունը և բանակցությունները աշխատանքային հիմնական հարցերի շուրջ՝ դրանով իսկ կանխելով աշխատանքային վեճերը և խթանելով խաղաղ արտադրական հարաբերությունները: Ի հավելումն ազգային մակարդակի երկխոսությունների, սոցիալական գործընկերությունը **Հայաստանում տարածվում է տարածքային և ոլորտային մակարդակներում:** Արդյունաբերության մի շարք ոլորտներում գործատուների միությունն ու արհմիությունները բանակցում են համաձայնագրերի շուրջ, որոնք հարմարեցված են տվյալ տարածաշրջանի և/կամ ոլորտի հատուկ կարիքներին՝ ապահովելով, որ աշխատանքային պայմաններն ու աշխատավարձերը լինեն մրցունակ և հավասար: Այնուամենայնիվ, սա բախվում է էական կառուցվածքային և գործառնական մարտահրավերների, որոնք ներառում են դժվարություններ մարզերում և/կամ ոլորտներում համապատասխան սոցիալական գործընկերների կողմից հետևողական ներկայացվածու-

թյան և մասնակցության ապահովման հարցում: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի տրամադրած տեղեկատվության համաձայն, ոլորտային մակարդակով կոլեկտիվ պայմանագրերի թիվը շատ փոքր է: Խնդիրը հիմնականում պայմանավորված է նրանով, որ արհմիությունները և գործատուների միությունն ունեն տարբեր կառուցվածքային ստորաբաժանումներ, որտեղ ոլորտային և տարածքային բաժանումները չեն համապատասխանում:

Կոլեկտիվ բանակցություններ և կոլեկտիվ պայմանագրեր. Հայաստանում սոցիալական գործընկերության հիմնական ասպեկտը կոլեկտիվ բանակցություններն են, որտեղ աշխատողներն ու գործատուները պայմանագրեր են կնքում աշխատավարձի, աշխատանքային պայմանների, նպաստների և աշխատանքային այլ իրավունքների վերաբերյալ: Թեև նախկինում կոլեկտիվ բանակցությունները լայնորեն չեն կիրառվել, վերջին ժամանակներս ջանքեր են գործադրվել խրախուսելու դրա կիրառումը, հատկապես ավելի մեծ ընկերություններում և ոլորտներում: Այս բանակցությունների արդյունքում կոլեկտիվ պայմանագրեր են կնքվում աշխատողների ներկայացուցիչների և գործատուների միջև: Այս համաձայնագրերը սահմանում են երկու կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝ ապահովելով աշխատանքի ավելի հստակ պայմաններ և նպաստելով ավելի լավ աշխատանքային հարաբերությունների զարգացմանը: Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ արհմիություններն իրավունք ունեն կազմակերպությունում վարել կոլեկտիվ բանակցություններ, կնքել կոլեկտիվ պայմանագրեր և վերահսկել դրանց կատարումը:

Կոլեկտիվ պայմանագրերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է Առողջապահական և աշխատանքի պետական տեսչությունը: Հայաստանի Հանրապետության Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը ստեղծվել է ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 444-Ն որոշման համաձայն: Այն իրականացնում է

օրենքով սահմանված վերահսկիչ և (կամ) այլ գործառույթներ, ինչպես նաև պատասխանատվության միջոցներ է կիրառում առողջապահության, աշխատանքային իրավունքի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ոլորտներում:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ կնքված կոլեկտիվ պայմանագրերի թիվը 395 է: Դրանցից 1-ը ստորագրվել է ոլորտային, 54-ը՝ տարածքային, 340-ը՝ կազմակերպությունների մակարդակով: Ըստ նույն աղբյուրի՝ կոլեկտիվ պայմանագրերը տարածվում են 120118 աշխատողների վրա, որոնք կազմում են Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես զբաղվածների 14-16%-ը:

Սոցիալական գործընկերության առջև ծառացած մարտահրավերները Հայաստանում

Չնայած իր կարևորությանը, սոցիալական գործընկերությունը Հայաստանում բախվում է մի շարք մարտահրավերների.

1. Աշխատանքի ոչ ֆորմալ հատված. Հայաստանի աշխատուժի զգալի մասը զբաղված է ոչ ֆորմալ հատվածում, չունի աշխատանքային պայմանագիր և, հետևաբար, աշխատանքային իրավունքները և սոցիալական պաշտպանությունը հաճախ անտեսվում են: Սա դժվար է դարձնում սոցիալական գործընկերության մեխանիզմների միջոցով բոլոր աշխատողներին ներգրավելը, ինչը թուլացնում է աշխատանքային օրենսդրության ընդհանուր արդյունավետությունը: Բացի այդ, ոչ ֆորմալ հատվածի աշխատողները կարող են չունենալ աշխատանքի անվտանգություն, նպաստների հասանելիություն և արդար աշխատավարձ, ինչը հետագայում նպաստում է աշխատանքի շուկայում անհավասարությանը: Ոչ ֆորմալ աշխատանքի տարածվածությունը նաև խոչընդոտում է աշխատանքային կանոնակարգերի կիրարկմանը և սահմանափակում արհմիությունների և

գործատուների կազմակերպությունների՝ այդ աշխատողներին արդյունավետ կերպով հասնելու և ներկայացնելու հնարավորությունը: Մա խոչընդոտներ է ստեղծում աշխատանքային պայմանների բարելավման և ամբողջ աշխատուժի միջև սոցիալական երկխոսության խթանման համար:

2. Արհմիությունների թույլ ներկայացվածությունը. հարակից խնդիրն այն է, որ արհմիությունները Հայաստանում բախվում են սահմանափակ կազմակերպչական կարողությունների, հատկապես մասնավոր հատված մուտք գործելու հարցում, որտեղ աշխատողները հաճախ վատ կազմակերպված են: Կառուցվածքային այս թուլությունն ավելի է խանգարում արհմիությունների կարողությանը արդյունավետ բանակցություններ վարել աշխատանքային ավելի լավ պայմանների, արդար աշխատավարձի և աշխատանքային իրավունքների պաշտպանության համար: Առանց նրանց պաշտպանելու ուժեղ արհմիությունների, աշխատողները չունեն լծակներ, ինչը խաթարում է կոլեկտիվ բանակցությունների արդյունավետությունը: Ավելին, թեև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը և «Արհմիությունների մասին» ՀՀ օրենքը նախանշում են արհմիությունների իրավունքներն ու պարտականությունները, արհմիություններն իրավունք ունեն բանակցել և կնքել կոլեկտիվ պայմանագրեր, սակայն իրավասու չեն խախտումների դեպքում կիրառել տույժեր կամ պատժամիջոցներ՝ սահմանափակելով դրանց կատարման իրավունքը:

3. Սոցիալական գործընկերների կառուցվածքային անհամատեղելիություն. Հայաստանում արդյունավետ սոցիալական գործընկերության մեկ այլ մարտահրավեր է հիմնական սոցիալական գործընկերների՝ արհմիությունների և գործատուների միջև կառուցվածքային անհամատեղելիությունը: Խոսքը վերաբերում է այդ խմբերի կազմակերպչական կառուցվածքների, առաջնահերթությունների և գործառնական մոտեցումների տարբերություններին, որոնք հաճախ խոչընդոտում են արդյունավետ համագործակցությանը: Օրինակ, արհմիությունները Հայաստանում ավանդաբար կազմակերպված են

բրգաձեւ կառուցվածքով, ունեն սահմանափակ ազդեցություն և հասանելիություն՝ հատկապես մասնավոր հատվածում: Մյուս կողմից, գործատուների միությունները կարող են ունենալ տարբեր առաջնահերթություններ և ռազմավարություններ, որոնք միշտ չէ, որ համահունչ են աշխատողների շահերին: Բացի այդ, ՀԱՄԿ-ն ունի 18 ոլորտային միություն, իսկ ՀԳՀՄ-ն ունի 22 ոլորտային միություն: Ոլորտային միությունները երկու դեպքում էլ բաժանված են տարբեր կերպ, և ոլորտային ամբողջական համակարգումը հազվադեպ է լինում: Այս կառուցվածքային տարբերությունները խոչընդոտներ են ստեղծում բովանդակալից երկխոսության և համագործակցության համար հատկապես ճյուղային կամ տարածքային մակարդակներում, ինչը դժվարացնում է աշխատաշուկայի մարտահրավերներին դիմակայելու ընդհանուր մոտեցման հաստատումը:

4. Քաղաքական և տնտեսական անկայունություն. Հայաստանի քաղաքական միջավայրը, ազդված ներքին լարվածությունից և տարածաշրջանային հակամարտություններից, երբեմն կարող է թուլացնել սոցիալական գործընկերության արդյունավետությունը: Քաղաքական անկայունությունը հաճախ խաթարում է սոցիալական երկխոսության գործընթացը՝ մարտահրավերներ ստեղծելով գործատուների, աշխատողների և պետության համար՝ արդյունավետ քննարկումների մեջ մտնելու և փոխշահավետ պայմանավորվածությունների հասնելու համար: Շարունակվող քաղաքական անորոշությունները կարող են ուշադրությունը շեղել աշխատանքի հետ կապված խնդիրներից և դժվարացնել սոցիալական գործընկերների միջև կայուն, երկարաժամկետ համագործակցության հաստատումը՝ ավելի բարդացնելով աշխատանքային պայմանների բարելավման և աշխատողների իրավունքների պաշտպանությանը ուղղված ջանքերը:

Ապագա զարգացման հնարավորություններ

Հայաստանում սոցիալական գործընկերության ամրապնդման և դրա ազդեցության ընդլայնման մի շարք հնարավորություններ կան, որոնք անհրաժեշտ է, որպեսզի արժանանան ինչպես քաղաքա-

կանություն մշակողների, այնպես էլ գիտական հանրության ուշադրությանը.

1. Ոչ ֆորմալ հատվածի ֆորմալացում. Հայաստանում աշխատաշուկայի բարելավման հիմնական հնարավորությունը ոչ ֆորմալ հատվածի պաշտոնականացումն է: Խրախուսելով բիզնեսներին և աշխատողներին անցում կատարել ֆորմալ տնտեսության, աշխատողները հասանելիություն կստանան աշխատանքային իրավունքների, սոցիալական պաշտպանության, աշխատանքի ապահովության և նպաստների համար: Պետական քաղաքականությունը պետք է խթաներ առաջարկի ձեռնարկություններին պաշտոնականացնելու ոչ ֆորմալ զբաղվածությունը, աջակցություն ցուցաբերելու հերթափոխով աշխատողներին: Արդյունքում հնարավոր է լուծել անհավասարությունները և բարձրացնել աշխատանքային կանոնակարգերի ընդհանուր արդյունավետությունը:

2. Արհմիությունների կարողությունների հզորացում. Արհմիությունների կազմակերպչական կարողությունների բարձրացումը, հատկապես մասնավոր հատվածում, զարգացման կարևորագույն ոլորտ է: Ներդրումներ կատարելով արհմիությունների կարողությունների զարգացման մեջ և ընդլայնելով իրենց ներկայությունը արհմիությունների ցածր անդամություն ունեցող ոլորտներում՝ արհմիությունները կարող են դառնալ աշխատողների իրավունքների առավել արդյունավետ պաշտպաններ: Վերապատրաստման, ռեսուրսների և ներքին կառույցների ամրապնդման ապահովումը կարող է օգնել արհմիություններին ավելի լավ բանակցել աշխատավարձերի, աշխատանքային պայմանների և աշխատանքի պաշտպանության համար:

3. Բարելավված ոլորտային համակարգում. արհմիությունների և գործատուների միության միջև կառուցվածքային անհամատեղելիության լուծումը ապագա զարգացման հնարավորություն է տալիս: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) և Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՄՄ) միջև ոլորտային համակարգման խթանումը կարող է հանգեցնել ավելի

արդյունավետ երկխոսության և համագործակցության: Ոլորտային կառույցների համապատասխանեցումը և արհմիությունների ու գործատուների միջև առավել արդյունավետ համագործակցության խթանումը կարող են օգնել ստեղծել ավելի միասնական մոտեցում աշխատաշուկայի մարտահրավերներին և բարելավել ընդհանուր սոցիալական երկխոսությունը:

4. Իրավական բարեփոխումներ և կիրարկում. աշխատանքային օրենսդրության կիրարկումն ուժեղացնելը և արհմիություններին իրավախախտումների համար պատիժներ սահմանելու ավելի մեծ իրավասություն տրամադրելը կօգնի բարձրացնել կոլեկտիվ բանակցությունների արդյունավետությունը: Իրավական բարեփոխումները, որոնք արհմիություններին կարող են տալ ավելի մեծ կիրարկման իրավունք և բարելավել աշխատանքային օրենսդրության համապատասխանության մշտադիտարկումը, կարող են նպաստել աշխատողների ավելի լավ պաշտպանությանը, հատկապես այն ոլորտներում, որտեղ խախտումները սովորական երևույթ են: Այս առումով անհրաժեշտ է երկխոսության միջոցով լրամշակել ինչպես «Արհմիությունների մասին» այնպես էլ «Գործատուների մասին» ՀՀ օրենքները:

5. Քաղաքական կայունություն և քաղաքականության ուղղվածություն. Քաղաքական կայունությունը կարևոր է սոցիալական գործընկերության մեխանիզմների արդյունավետ գործունեության համար: Քաղաքական անդորրի ժամանակ կառավարությունը, արհմիությունները և գործատուները կարող են կենտրոնանալ աշխատաշուկայի բարեփոխումների և աշխատանքային պայմանների բարելավման վրա: Քաղաքական կայունության խթանումը և աշխատանքի հետ կապված խնդիրների առաջնահերթության ապահովումը կառավարության օրակարգերում ավելի բարենպաստ միջավայր կստեղծեն երկարաժամկետ սոցիալական երկխոսության և համագործակցության համար:

6. Աշխատաշուկայի նոր հատվածների զարգացում. նոր ոլորտների աճը, ինչպիսիք են թվային աշխատուժը և գիգ տնտեսություն-

ները, հնարավորություն է տալիս զարգացնել զբաղվածության ձևավորվող ձևերի համար հարմարեցված աշխատանքի պաշտպանությունը: Ճանաչելով հատուկ մարտահրավերները, որոնց բախվում են գիզերի աշխատողները և թվային հարթակի աշխատակիցները, Հայաստանը պետք է ստեղծի սոցիալական գործընկերության նոր շրջանակներ, որոնք ներառում են այդ աշխատողներին՝ ապահովելով նրանց հասանելիությունը անհրաժեշտ պաշտպանությանը, արդար աշխատավարձին և նպաստներին:

7. Հասարակության իրազեկում և կրթություն. Աշխատողների իրավունքների, պաշտոնական զբաղվածության առավելությունների և արհմիությունների դերի մասին իրազեկվածության բարձրացումը կարող է օգնել հզորացնել աշխատողներին, հատկապես ոչ ֆորմալ հատվածում: Կրթական արշավները, որոնք կկենտրոնանան աշխատողների իրավունքների, աշխատանքային օրենսդրության և արհմիության անդամակցության առավելությունների վրա, կարող են մեծացնել արհմիության մասնակցությունը, խթանել աշխատանքային պաշտպանության ավելի լավ ըմբռնումը և խրախուսել համապատասխանությունը աշխատանքային կանոնակարգերին:

Եզրակացություն

Ամփոփելով Հայաստանում սոցիալական գործընկերության առկա վիճակի ուսումնասիրության արդյունքների քննարկումը, արձանագրենք, որ սոցիալական գործընկերությունը խիստ արժեքավոր գործիք է աշխատանքային հարաբերությունները կառավարելու և ընդհանուր բարեկեցությունը խթանելու համար: Գործատուների, աշխատողների և պետության միջև համագործակցության միջոցով Հայաստանը կարողացել է կողմնորոշվել տնտեսական անցումներով և լուծել աշխատուժի հետ կապված որոշ մարտահրավերներ: Այնուամենայնիվ, կան մի քանի խոչընդոտներ, որոնք պետք է հաղթահարվեն, ներառյալ ոչ ֆորմալ աշխատուժի տարածվածությունը, արհմիությունների թույլ ներկայացվածությունը, սոցիալական գոր-

ծընկերների միջև կառուցվածքային անհամատեղելիությունը և քաղաքական անկայունությունը: Չնայած այս մարտահրավերներին, ապագա զարգացման զգալի հնարավորություններ կան: Պաշտոնականացնելով ոչ ֆորմալ հատվածը, ուժեղացնելով արհմիությունների կարողությունները, բարելավելով ոլորտային համակարգումը և ընդլայնելով իրավական դաշտը, Հայաստանը կարող է ստեղծել ավելի ներառական և արդյունավետ աշխատանքային համակարգ: Քաղաքական կայունության խթանումը և աշխատողների իրավունքների մասին հանրային իրազեկվածության բարձրացումը հետագայում կաջակցեն բոլոր սոցիալական գործընկերների միջև արդյունավետ համագործակցությանը: Շարունակական ջանքերով և ռազմավարական բարեփոխումներով սոցիալական գործընկերությունը Հայաստանում ներուժ ունի էապես նպաստելու սոցիալական կայունությանը, տնտեսական աճին և աշխատանքային պայմանների ընդհանուր բարելավմանը:

Գրականության ցանկ

- ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 9-ին, վերջին փոփոխությունները՝ 2023 թվականի մայիսի 3-ին:
- Blau, P. M. (1964). *Exchange and Power in Social Life*. Wiley.
- Bourdieu, P. (1986). *The Forms of Capital*. In J. G. Richardson (Ed.), *Handbook of Theory and Research for the Sociology of Education* (pp. 241-258). Greenwood.
- Coleman, J. S. (1988). *Social Capital in the Creation of Human Capital*. *American Journal of Sociology*, 94, S95-S120.
- Durkheim, Emile, *The Division of Labor in Society*, New York, The Free Press, 1933. Referred to in notes as Division. HD 51 D98, p. 337.
- Harvey, D. (2005). *A Brief History of Neoliberalism*.
- Homans, G. C. (1958). *Social Behavior as Exchange*. *American Journal of Sociology*, 63(6), pp. 597-606.
- Horkheimer, M., & Adorno, T. W. (1944). *Dialectic of Enlightenment*.
- Marx, K. (1867). *Das Kapital: A Critique of Political Economy*, p. 107.

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ԵԶՐՈՒՑԹԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ

Նունե Գեղամյան

*Տնտեսագիտական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի
ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլո-
գիաների ամբիոնի դոցենտ*

Մարինե Յարմալոյան

*Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի
ֆակուլտետի սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլո-
գիաների ամբիոնի ասիստենտ*

ON THE INTERPRETATION OF THE TERM "POLITICAL SOCIAL WORK"

Nune Geghamyan

*PhD in Economics, Associate Professor, Department of Social Work and
Social Technologies, Faculty of Sociology, Yerevan State University*

Marine Yarmaloyan

*PhD in Sociology, Assistant Professor, Department of Social Work and
Social Technologies, Faculty of Sociology, Yerevan State University*

Abstract. The concept of "political social work" has become a significant topic in the academic field of social work in recent decades, emphasizing the inseparable connection between social work and political processes. Traditionally, social work has been viewed as providing professional support to vulnerable groups and individuals. However, the changes taking place in the modern world require an expansion of the social worker's field of activity, including the promotion of social change, striving to influence political systems, and the need to participate in political processes. The purpose of this article is to study the history of the formation and development of political social work, to examine different approaches to interpreting political social work, to analyze the definitions proposed by various authors, as well as to clarify the substantive boundaries of modern political social work. Considering the absence of publications related to political social work in Armenian-language professional literature, this scientific article is an important contribution to filling that gap.

Keywords: Political Social Work; Social Change; Social Work Theory; Political Participation; Professional Practice in Social Work

Ներածություն

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «քաղաքական սոցիալական աշխատանք» եզրույթը կիրառվել է 1990-ականներին ԱՄՆ-ում: Այս տերմինի կիրառմամբ հրավիրվում էր սոցիալական աշխատողների ուշադրությունը առ այն, որ նրանք պետք է վերապատրաստվեն հետագա սոցիալական փոփոխությունների իրականացման նպատակով քաղաքական գործընթացները արդյունավետ կառավարելու համար (NASW, 2003):

Քաղաքական սոցիալական աշխատանքի ձևավորման և զարգացման պատմությունը. Սոցիալական աշխատանքի «կարևորագույն ձեռքբերումների» ուսումնասիրությունը վկայում է, որ հիմնարար սոցիալական փոփոխությունների իրականացման ողջ պատմության ընթացքում սոցիալական աշխատողները կարևոր դերակատարում են ունեցել: Այդ փոփոխությունները մեծ մասամբ իրականացվել են պետական ինստիտուտների, իսկ ճգնաժամային պահերին՝ նաև քաղաքական առաջնորդությունը ստանձնելու միջոցով (American Academy of Social Work and Social Welfare, 2013): Սոցիալական աշխատողների ներգրավվածությունը քաղաքականության մեջ ԱՄՆ-ում սկսվեց այն ժամանակ, երբ սոցիալական աշխատանքը տակավին երիտասարդ մասնագիտություն էր Միացյալ Նահանգներում (Mahaffey, 1987): 1896 թվականին Ջեյմս Ռեյնոլդսը իր առաջին հայտնի հոդվածում կոչ էր անում սոցիալական աշխատողներին մտնել քաղաքականություն: Վերոհիշյալ հոդվածում հեղինակը վերլուծում է քաղաքական գործընթացների կապը սոցիալական հիմնախնդիրների հետ (Lane, 2018):

Սոցիալական աշխատանք մասնագիտության զարգացման ընթացքում սոցիալական աշխատողները սկսեցին կենտրոնանալ սոցիալական հիմնախնդիրների պատճառների վրա: Աստիճանաբար

սոցիալական աշխատանքում սկսեց կարևորվել անհատի և նրա միջավայրի փոխկապվածությունը: Սոցիալական աշխատողները սկսեցին արժևորել այն գաղափարը, որ ժողովրդավարական հասարակություններում յուրաքանչյուր ոք իրավունք ունի ունենալ այն ռեսուրսներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են հիմնարար կարիքները բավարարելու և անձնական ներուժը առավելագույնս իրացնելու համար (Mahaffey, 1987): Սոցիալական աշխատողներ Լիլիան Ուոլդը, Ֆլորենս Քելլին, Պաուլ Կելլոգը, Ջեյն Ադամսը հայտնի են որպես բնակավայրային շարժման ակտիվիստներ (Huff, (n.d.)): Վերջիններս գտնում էին, որ գումարները պետք է ծախսվեն անհրաժեշտ սոցիալական բարեփոխումներ իրականացնելու համար, քանի որ դրանց միջոցով հնարավոր է կարգավորել սոցիալական կոնֆլիկտները, հաղթահարել աղքատությունը: Նրանք պայքարում էին աշխատավարձերի բարձրացման, աշխատանքային ժամերի կրճատման, աշխատանքային պայմանների բարելավման, նվազագույն աշխատավարձի չափի, համընդհանուր կենսաթոշակների և նպաստների սահմանման համար, մանկական աշխատուժի շահագործման դեմ (Davis, 1964a):

Միևնույն ժամանակ ձևավորվում է երկրորդ մոտեցումը, որի ներկայացուցիչները կարծում էին, որ երբ սոցիալական աշխատողները ներգրավվում են քաղաքականության մեջ և սկսում են զբաղվել դրանով, նրանք վտանգում են սոցիալական աշխատողի անաչառ կերպարը: Նրանց համոզված էին, որ սոցիալական աշխատողները պետք է միայն կիսվեն իրենց գիտելիքներով և փորձառությամբ սոցիալական ոլորտի օրենսդրությունը, սոցիալական քաղաքականությունը մշակողների հետ: Այս մոտեցման կողմնակից էր, օրինակ, Էդվարդ Դելվինը, ում կարծիքով սոցիալական աշխատողները քաղաքական սոցիալական աշխատանքի շրջանակում կարող են հանդես գալ միայն որպես փորձագետ, ոչ ավելին, և չպետք է ներգրավված լինեն որոշումների կայացման գործընթացում (Mahaffey & Hanks, 1982):

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը վկայում է քաղաքական սոցիալական աշխատանքը մեկնաբանող մեկ այլ՝ երրորդ մոտեցման, գոյության մասին: Այս մոտեցման կողմնակիցներից էր Մերի Ռիչմոնդը, ով կարծում էր, որ աղքատության և այլ սոցիալական հիմնախնդիրների առկայությունը պայմանավորված է անհատական գործոններով, անձի դիսֆունկցիոնալ խաթարումներով (Mahaffey, 1987): Ռիչմոնդի կարծիքով սոցիալական աշխատողները պետք է կենտրոնանան մարդկանց օգնելու վրա՝ «յուրաքանչյուր դեպքի համար առանձին», այլ ոչ թե սոցիալական ոլորտի օրենսդրությունը փոփոխելու կամ բարելավելու վրա: Ռիչմոնդը և նրա համախոհները համոզված էին, որ սոցիալական բարեփոխումներին ուղղված շարժումները չեն ներկայացնում իրական սոցիալական աշխատանքը: Նրանց պնդմամբ, երբ սոցիալական աշխատողը զբաղվում է քաղաքական գործունեությամբ, օրինակ՝ քաղաքական որևէ պաշտոնում ընտրվելով՝ անխուսափելիորեն լքում է սոցիալական աշխատանքի ոլորտը (Mahaffey & Hanks, 1982):

Կոնֆլիկտը, որը վերաբերում էր նրան, թե որտեղ պետք է ներգրավված լինեն սոցիալական աշխատողները՝ քաղաքականության մակարդակում, թե միկրոմակարդակում, ավելի սրվեց, երբ 1930 թ. Սոցիալական բարեկեցության միջազգային կոնֆերանսի ժամանակ Միրիամ Վան Ուոթերսը իր ելույթում դեմ արտահայտվեց քաղաքականության մեջ սոցիալական աշխատողների մասնակցությանը: Վերջինս պնդում էր, որ օրենսդրական և սահմանադրական փոփոխությունների վրա կենտրոնացումը հանգեցնելու է անհատի հետ սոցիալական աշխատանքի հայեցակարգի անտեսմանը: Հետևաբար՝ սոցիալական բարեփոխումներին միտված շարժումները չեն արտացոլում իրական սոցիալական աշխատանքը (Mahaffey, 1987): Ուոթերսի կարծիքին դեմ էր ընտանեկան սոցիալական աշխատանքի այն ժամանակվա հայտնի մասնագետներից մեկը՝ Ֆրենսիս Մաքլինը, ով կարծում էր, որ արդյունավետ սոցիալական աշխատանքը ենթադրում է, որ սոցիալական աշխատողները ակտիվորեն ներգրավված լինեն նաև տնտեսական համակարգերի ձևավորման և

գարգացման գործընթացում: Իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ սոցիալական աշխատողները ներգրավված են քաղաքականության մեջ: Ի հավելում սրան, 1933 թվականին Սոցիալական աշխատողների ամերիկյան ասոցիացիան ներկայացրեց այսպես կոչված «արմատական ծրագիր», որի շրջանակում շեշտադրվում էր հարստության և իշխանության վերաբաշխման կարևորությունը՝ սոցիալ-տնտեսական ինստիտուտների վերակառուցման միջոցով (Lane, 2018):

Քաղաքական սոցիալական աշխատանքի ձևավորման պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ ԱՄՆ-ում սոցիալական աշխատանքի կազմակերպությունները սկսեցին մեծ ջանքեր գործադրել՝ սոցիալական աշխատողներին քաղաքական գործունեության մեջ ներգրավելու համար՝ սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից: Այսպես, 1960 թվականին Սոցիալական աշխատողների ազգային ասոցիացիայի կողմից ընդունվեց Սոցիալական աշխատանքի էթիկական կոդեքսը: Այդ փաստաթղթում հստակ նշված էր, որ սոցիալական աշխատողների մասնագիտական պարտականություններից էր նաև համայնքի և հասարակության առջև պատասխանատվությունը: Իսկ արդեն 1970-ականներին Սոցիալական աշխատողների ազգային ասոցիացիան սկսեց լոբինգ իրականացնել և որոշակի ազդեցություն ունենալ կուսակցական ընտրությունների վրա՝ նահանգային և ֆեդերալ մակարդակներում (Dempsey, 2003):

2000-ականների սկզբին լայնորեն շրջանառվում էին քաղաքական սոցիալական աշխատանքի երկու սահմանումներ: Դրանցից մեկը առաջարկվել է Կոնեկտիկուտի համալսարանի Քաղաքական սոցիալական աշխատանքի ինստիտուտի հիմնադիր Նենսի Հեմֆրիսի կողմից: Վերջինիս կարծիքով քաղաքական սոցիալական աշխատանքը սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկան է, որի միջոցով սոցիալական աշխատողները ամբողջությամբ ներգրավված են քաղաքական դաշտում (NASW, 2003):

Մեկ այլ հետազոտողի՝ Հյուսթոնի համալսարանից Ռոբերտ Ֆիշերի կարծիքով, սոցիալական աշխատանքն ինքնին, անկախ այն հանգամանքից, թե որ մակարդակներում է իրականացվում և ում

հետ, կարելի է համարել քաղաքական, քանի որ այն ենթադրում է իշխանության և տարբեր քաղաքական ուժերի հետ փոխազդեցություն (Fisher, 1995):

Մեկ այլ հեղինակ՝ Դոմինելին, նշում է, որ սոցիալական աշխատանքը չի կարող անտեսել իշխանության, քաղաքականության և հասարակության կառուցվածքների ազդեցությունը՝ անհատական բարեկեցության վրա (Dominelli, 2002): Իսկ Լորենցը (Lorenz, 1994) և Այֆը (Ife, 2001) իրենց աշխատություններում բացատրում են սոցիալական աշխատանքի և ժողովրդավարության կապը՝ կարևորելով սոցիալական աշխատողների մասնակցության անհրաժեշտությունը քաղաքական գործընթացներում:

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս քաղաքական սոցիալական աշխատանքի մեկնաբանությունները պայմանականորեն խմբավորել հետևյալ կերպ՝

- *քննադատական մոտեցում* (critical approach), որի կողմնակիցներից են Բոբ Մալալին (Mullaly, 2007), Լենա Դոմինելին (Dominelli, 2002), Ջան Ֆուկը (Fook, 2002): Վերոհիշյալ հեղինակները քննադատում են գոյություն ունեցող սոցիալական և տնտեսական համակարգերը՝ դիտելով քաղաքական սոցիալական աշխատանքը որպես համակարգային փոփոխությունների իրականացման գործիք: Ըստ էության, այս մոտեցման շրջանակում կարևորվում է համակարգային անհավասարության հաղթահարման և սոցիալական վերափոխման անհրաժեշտությունը:
- *Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության մոտեցում* (human rights-based and advocacy approach)-Այս մոտեցման ներկայացուցիչներից են Ջիմ Այֆը (Ife, 2013) և Էլիզաբեթ Ռայչերտը (Reichert, 2003): Վերոհիշյալ մոտեցման համաձայն քաղաքական սոցիալական աշխատանքի հիմնական նպատակն է պաշտպանել խոցելի խմբերի իրավունքներն ու շահերը և խթանել սոցիալական արդարությունը: Սոցիալական աշխատողները հանդես են գալիս որպես միջ-

նորոններ և ակտիվիստներ՝ աջակցելով քաղաքական փոփոխություններին, որոնք բարելավում են մարդկանց կյանքը:

- *Քաղաքացիական մասնակցության և համայնքային կազմակերպման մոտեցում (civic participation and community organizing approach)*, որը կենտրոնանում է ակտիվ քաղաքացիների ձևավորման, համայնքային զարգացման և մասնակցային ժողովրդավարության վրա (Healy, 2000): Այս մոտեցման շրջանակում քաղաքական սոցիալական աշխատանքը դիտվում է որպես մեթոդ, որի օգնությամբ հնարավոր է հզորացնել համայնքները, որպեսզի նրանք կարողանան ինքնուրույն պաշտպանել իրենց շահերը և ազդել քաղաքական որոշումների վրա:
- *Էկո-սոցիալական մոտեցում*, որի շրջանակում կարևորվում է այն գաղափարը, որ հասարակության անդամների սոցիալական բարեկեցությունը հնարավոր չէ դիտարկել առանց շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության: Այժմ պնդում է, որ սոցիալական հիմնախնդիրները հաճախ պայմանավորված են բնապահպանական ճգնաժամերով՝ կլիմայի փոփոխություն, ռեսուրսների սպառում, էկոհամակարգերի խաթարում: Քաղաքական սոցիալական աշխատանքը, այս պարագայում, հանդես է գալիս որպես միջոց՝ բարձրաձայնելու էկոլոգիապես խոցելի խմբերի հիմնախնդիրները, ինչպես նաև ներգրավվելու շրջակա միջավայրի պաշտպանությանը միտված քաղաքական գործընթացներում (Ife, 2013): Մեկ այլ հեղինակ՝ Լենա Դոմինելին, իր աշխատություններից մեկում օգտագործում է «կանաչ սոցիալական աշխատանք» հասկացությունը՝ այն համարելով քաղաքական սոցիալական աշխատանքի մի ձև, երբ սոցիալական աշխատողները ներգրավվում են բնապահպանական արդարության պայքարում (Dominelli, 2012):

Մեր օրերում քաղաքական սոցիալական աշխատանքը կամ ժամանակակից քաղաքական սոցիալական աշխատանքը ներառում է սոցիալական աշխատանքի պրակտիկան, տեսական և հետազոտական հիմքերը, որոնց շրջանակում կարևորվում է քաղաքականության և դրա մեխանիզմների մշակումը, որոնք օգտագործվելու են սոցիալական փոփոխությունների իրականացման նպատակով: Ըստ էության քաղաքական սոցիալական աշխատանքը ենթադրում է, որ սոցիալական աշխատողները տիրապետեն քաղաքականության ռազմավարություններին, ինչպես նաև հասարակության տարբեր մակարդակներում այդ ռազմավարությունները իրագործելու հմտություններին: Բացի այդ, սոցիալական աշխատողները պետք է կարողանան փոխանցել քաղաքականության հետ կապված տեղեկատվությունը իրենց շահառուներին՝ նրանց ուժեղացնելու, հզորացնելու հնարավորությունները ընդլայնելու նպատակով: Քաղաքական սոցիալական աշխատանքի պրակտիկայի միջոցով սոցիալական աշխատանքի արժեքներն ու նորմերը կարող են ներառվել քաղաքականության մշակման գործընթացում: Եվ վերջապես, քաղաքական սոցիալական աշխատանքի շրջանակում սոցիալական աշխատողները առաջնորդում են սոցիալական փոփոխություններին միտված շարժումները (Lane, 2018):

Այսպիսով՝ ամփոփելով քաղաքական սոցիալական աշխատանքը մեկնաբանող տարբեր մոտեցումները և տարբեր հեղինակների կողմից ներկայացված սահմանումները՝ կարող ենք գալ այն եզրահանգման, որ քաղաքական սոցիալական աշխատանքը սոցիալական աշխատանքի մի ճյուղ է, որը կենտրոնանում է հասարակական և քաղաքական գործընթացների միջոցով սոցիալական արդարության, հավասարության և մարդու իրավունքների պաշտպանության վրա: Այն ներառում է քաղաքականության մշակում, սոցիալական բարեփոխումների իրականացում, հասարակական շահերի պաշտպանության մեխանիզմների կիրառում և քաղաքացիների ներգրավվածության խթանում:

Քաղաքական սոցիալական աշխատանքը կարող է իրականացվել տարբեր մակարդակներում՝ համայնքային, ազգային կամ միջազգային, և հաճախ ներառում է համագործակցություն պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ տարբեր սոցիալական հիմնախնդիրները լուծելու համար:

Գրականության ցանկ

- American Academy of Social Work and Social Welfare. (2013). Grand accomplishments in social work. Grand challenges for social work initiative, Working Paper No. 2. Baltimore, MD: American Academy of Social Work and Social Welfare.
- Davis, A. F. (1964a). Settlement workers in politics, 1890–1914. *Review of Politics*, 26(4), pp. 505–517.
- Dempsey, D. (2003). Electoral politics (revised statement). Washington, DC: National Association of Social Workers.
- Dominelli, L. (2002). *Anti-Oppressive Social Work Theory and Practice*. Palgrave Macmillan.
- Dominelli, L. (2012). *Green Social Work: From Environmental Crises to Environmental Justice*. Polity Press.
- Fisher, R. (1995). Political social work. *Journal of Social Work Education*, 31(2), pp. 194–203.
- Fook, J. (2002). *Social Work: Critical Theory and Practice*. SAGE Publishing.
- Healy, K. (2000). *Social Work Practices: Contemporary Perspectives on Change*. SAGE Publishing.
- Huff, D. (n.d.). Progress and reform: A cyber history of social work's formative years. Retrieved from <http://www.boisestate.edu/socwork/-dhuff/history/central/tc.html>.
- Ife, J. (2001). *Human Rights and Social Work: Towards Rights-Based Practice*. Cambridge University Press.
- Ife, J. (2012). *Human Rights and Social Work: Towards Rights-Based Practice*. Cambridge University Press.

- Ife, J. (2013). *Community Development in an Uncertain World: Vision, Analysis and Practice*. Cambridge University Press.
- Lane, R. Shannon, Pritzker, S. (2018). *Political social work*, Springer International Publishing.
- Lorenz, W. (1994). *Social Work in a Changing Europe*. Routledge.
- Mahaffey, M. (1987). Political action in social work. In A. Minahan (Ed.), *Encyclopedia of social work* (Vol. Vol. 2, 18th ed., pp. 283–294). Silver Spring, MD: NASW Press.
- Mahaffey, M., & Hanks, J. W. (1982). *Practical politics: Social work and political responsibility*. Silver Spring, MD: National Association of Social Workers.
- Mullaly, B. (2007). *The New Structural Social Work: Ideology, Theory, Practice*. Toronto: Oxford University Press.
- National Association of Social Workers (2003). Dr. Nancy Humphreys receives NASW Lifetime Achievement Award. Washington, DC: National Association of Social Workers.
- National Association of Social Workers (n.d.). History of the NASW Code of Ethics. Retrieved from <https://www.socialworkers.org/nasw/-ethics/ethicshistory.asp>.
- Reichert, E. (2003). *Social Work and Human Rights: A Foundation for Policy and Practice*. New York: Columbia University Press.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԱՇԽԱՐԱՐ
ՆԵՐՈՒԺԸ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐՋ

Գագիկ Թումանյան

*Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիոլոգիայի
ֆակուլտետի սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի
ասիստենտ*

THE POTENTIAL OF CIVIL SOCIETY IN BUILDING
SOLIDARITY; TOWARDS THE EDUCATIONAL-
METHODOLOGICAL POSSIBILITIES OF CIVIC
EDUCATION

Gagik Tumanyan

*PhD in Sociology, Assistant Professor, Department of Theory and History of
Sociology, Faculty of Sociology, Yerevan State University*

Abstract. The social polarization observed in modern Armenian society and the deepening of the solidarity problem (as a result of successive crises) lead us to discuss, beyond political vertical interventions, also the civil mechanisms for building solidarity. From this perspective, the conceptualizations of civil society maintain the key features of civil society, that outline certain opportunities for building social solidarity. Among these opportunities, the article discusses a number of aspects of the organization and functioning of civil society. Particularly, the role of civic education is analyzed in the context of functions of civil society, which shows new opportunities in the methodological search for building social solidarity.

Keywords: Social solidarity, civil society, civic education, civic culture, democratization, disposition, discourse ethics, service learning

Վերջին տարիների հայաստանյան հանրային դիսկուրսում հաճախ է խոսվում սոցիալական համերաշխության հիմնախնդրի խորացման մասին: Այս դիտանկյունից, վերադառնալով 2018 թվականի

Թավշյա հեղափոխության հարթակներից հնչող հռչակումներին, նկատենք, որ շարժման ընթացքում հատուկ կարևորություն էր տրվում համերաշխության ապահովմանը: Այնուամենայնիվ, մի կողմից այս ուղղությամբ հայեցակարգված, ինստիտուցիոնալ մոտեցումներին հանդեպ նվազ ուշադրությունը, մյուս կողմից քաղաքական դաշտում փոխադարձաբար կիրառվող անտագոնիստական հոետորաբանությունը («մենք-նրանք» բնույթի դիստոտոմիաներով, հեղինակազրկող պիտակումներով, ատելության խոսքով արտահայտված), ինչպես նաև բռնության խոսույթն ուժգնացնող և բազմացնող մեդիատեխնոլոգիաները ավելի շուտ հակահամերաշխային միտվածքների ցուցիչներ դարձան: Ավելի ուշ, համերաշխության խնդիրն առավել ահագնացավ 2020 թվականի 44 օրյա պատերազմից հետո, երբ անվտանգային սուր ճգնաժամի համատեքստում քաղաքական հակառակորդների և նրանց կողմնակիցների միջև ձևավորված անհանդուրժողականությունը հասավ իր եռման բարձրակետին՝ քաղաքական հարթակներից տարածվելով ընդհուպ ընկերական հավաքույթներ և ընտանեկան արարողություններ: Թեև, այդուհետ ձեռնարկվել են հիշյալ բևեռացումների մեղմացմանն ուղղված ինչ-ինչ քայլեր (օրենսդրական կարգավորումների¹ և քաղաքացիական նախաձեռնությունների բնույթ կրող), այդուհանդերձ, թե՛ հանրային, թե՛ քաղաքական տիրույթներում բռնի դրսևորումներն ու ատելության խոսքը մինչ օրս շարունակում են նկատելի լինել, ինչն իր հերթին ցույց է տալիս, որ համերաշխային նախապայմանների ձևավորումն առավել հիմնավոր և համալիր մոտեցումներ է պահանջում: Միաժամանակ, անդրադարձառնալով սոցիալական համերաշխության ապահովման պետական միջամտության սահմանափակումներին, պետք է նաև ընդունել, որ պետական համակարգն, անկախ սուբյեկ-

¹ 2020 թ.-ի մայիսի 16-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածը, որով՝ քրեական պատասխանատվություն է նախատեսվում բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու կամ ատելության կոչերի համար:

http://www.parliament.am/draftreading_docs/7/K-437_DR2.pdf

տիվ գործոններից, նաև իր կազմակերպման կառուցվածքագործառական բնույթից ելնելով՝ ի գորու չէ ապահովել սոցիալական համերաշխության համար անհրաժեշտ գործոնների (ինքնության զգացում, փոխլրացում, փոխադարձություն, փոխկապվածություն, փոխօգնություն), (Waterman, 2001) ողջ բազմազանությունը:

Մյուս կողմից, սոցիալական համերաշխության կերտման հարցում, շեշտելով պետական քաղաքականության գործառույթները, կարևոր է չկաշկանդել համերաշխության սոցիոլոգիական մեկնաբանումները երևույթի գուտ քաղաքագիտական ընկալումներով:

Նշյալ գիտակցումից ելնելով՝ նկատենք, որ սոցիալական համերաշխության հարցը հիմնարար սոցիոլոգիական հարցերից է: Դժվար է գտնել սոցիոլոգիական որևէ հայեցակարգ, որն իր հիմքում չի ենթադրում սոցիալական համերաշխության որևիցե մոդել: Ավելին, երբ խոսում ենք հասարակության մասին, ապա այսքանով իսկ հաշվի ենք առնում որոշակի համերաշխային դրություն: Դիցուք՝ Օ.Կոնտի մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական համերաշխության (կոնսենսուսի) կերտումն ու ամրապնդումը դիտվում է գիտական կատարելության (պրոգրեսի, քաղաքական և տնտեսական ազատությունների գաղափարի ներառմամբ) հանդեպ մարդկանց հավաքական ձգտման մեջ, երբ գիտական իմացության հանդեպ հավատը հասցվում է կրոնական հավատի մակարդակի (Кравченко, 2019): Այդուհանդերձ, սոցիալական համերաշխության հարցի շուրջ առաջին հիմնարար մոտեցումները ներկայացվում են Է.Դյուրկհեյմի սոցիոլոգիայում:

Մասնավորապես օրգանական համերաշխության իր նկարագրություններում Դյուրկհեյմը, ի տարբերություն համերաշխության մեխանիկական տիպի (երբ մարդկանց միավորորդը նմանությունն է) (Кравченко, 2019), ուշադրություն է դարձնում այնպիսի հասարակարգին, երբ համերաշխության զգացումը ձեռք է բերվում գործառութային բնույթ կրող փոխադարձ կապերի միջոցով (տարբերվող արժեքների ու մշակույթների հանդեպ հարգանքի պայմանով)

(Кравченко, 2019): Պատահական չէ, որ Դյուրկիեյմը համերաշխության օրգանական տիպը վերագրում է առավել բարդ՝ ժամանակակից հասարակություններին, երբ աշխատանքի բաժանման պայմաններում մարդիկ ստիպված են շարունակ հարաբերվել և համագործակցել իրենցից տարբեր մասնագիտացում (դրանից բխող ինքնութեանական գծերով) ունեցող այլ անձանց հետ: Հասարակական համերաշխության մեկ այլ ուշագրավ հայեցակարգ է առաջ քաշվում ռուս հասարակագետ Կրոպոտկինի մոտեցումներում, որում վերջինս համերաշխությունը մարդկային բարոյականության հիմնարար արժեքների (արդարության և ինքնագոհության հետ մեկտեղ) թվին է դասում, որոնք իրենց հերթին ըստ հեղինակի բխում են կենդանական աշխարհից փոխանցված փոխօգնության բնագոյից (Кропоткин, 2007): Հատկանշական է, որ Կրոպոտկինը համերաշխային շարժառիթներով բնորոշում է հորիզոնական կապերով աչքի ընկնող ընկերակցական հարաբերությունները՝ այն հակադրելով ենթարկման և աստիճանակարգման վրա հիմնված պետական ուղղահայաց քաղաքականությանը (Шляхов, 2000):

Հիմնվելով նախանշված սոցիոլոգիական մոտեցումների վրա՝ հաջորդիվ դիտարկենք սոցիալական համերաշխության կերտման և ամրապնդման «ոչ կառավարական» մասնավորապես, քաղաքացիական մեխանիզմները: Այս համատեքստում կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսաբաններից Թ. Պարսոնսը, նշանավորելով սոցիետալ համակարգերի դերը համերաշխության կերտման գործընթացում, հիմնավորում է, թե ինչու են ՔՀ կազմակերպություններն այս հարցում առավել արդյունավետ գտնվում: Վերջինս, ՔՀ-ն դիտարկելով սոցիետալ հասարակության հայեցակարգում, այն կարևորում է որպես ավանդական համայնքային հասարակությանը և ժամանակակից անհատակենտրոն հասարակությանը բնորոշ տարրերի մի որոշակի սինթեզ, որի հիմնական նշանակությունը տարրամասնատված հասարակական համակարգի վերամիավորումն է, նրա տարբեր բաղադրիչների համաներառումը արժեքա-նորմատի-

վային ունիվերսալ կարգի շուրջ: Համաձայն Պարսոնսի այս գործընթացը հնարավոր է դառնում մշակութային արժեքների ինստիտուցիոնալացման միջոցով, որի հետևանքով դրանք դառնում են հասարակության կողմից ընդունելի և գործարկելի նորմեր: Հարկ է նշել, որ Պարսոնսը հստակ սահմանազատում է սոցիետալ հասարակության ենթահամակարգը հասարակության քաղաքական և տնտեսական ենթահամակարգերից: Նա այս բաժանումն իրականացնում է՝ ելնելով նշված ենթահամակարգերի կազմակերպման և գործառության առանցքային սկզբունքներից: Պարսոնսը գտնում է, որ ի տարբերություն քաղաքական համակարգի, որը կազմակերպվում է բյուրոկրատական վարչակարգի գործունեության միջոցով և տնտեսական համակարգի, որի կազմակերպման հիմքում շուկան է, սոցիետալ հասարակությունը կազմակերպվում է միությունների (ասոցացման) սկզբունքով, երբ հասարակական տարբեր խմբերը և անհատները համերաշխության են հասնում ընդհանուր նորմատիվային և արժեքային կառուցվածքների շուրջ: Նա այս գործընթացի հիմքում առանձնացնում է հետևյալ սկզբունքները՝ կամավորականություն, հավասարություն (այն է՝ աստիճանակարգման մերժում), գործընթացային սկզբունքը, նույնն է թե ֆորմալ օրենքներին հետևելը (գործընթացային օրենքները, որոնք ներկայացված են բոլոր այն ինստիտուտներով, որոնք ղեկավարվում են ընթացակարգի միջոցով. դատարան, խորհրդարան, ընտրական գործընթացներ, կամավորական ասոցիացիաներ) արդիական հարցերի քննարկման ժամանակ: Ընդ որում հեղինակը ասոցացման գործընթացների հիմքում տեսնում է երկու տիպի համերաշխություն.

ա) հիմնված կոնսենսուսի վրա,

բ) դիֆուզ համերաշխություն՝ հիմնված ընդհանուր պատկանելության վրա (այն է՝ նախապես տրված համերաշխություն): Ընդ որում, Պարսոնսը ֆորմալ օրենքները դիտում է որպես կապող օղակներ տնտեսական, քաղաքական և սոցիետալ համակարգերի միջև (Parsons, 1971):

Արատոն և Կոհենն իրենց հերթին վերլուծելով XX դարի երկրորդ կեսի քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) Ֆրանսիական դիսկուրսը ուշադրություն են հրավիրում Ընդհանուր բարեկեցության պետության և ՔՀ միջև հակադրմանը, որում վերջինս ընկալվում է որպես ինքնավար սոցիալական համերաշխության պահեստարան (հարևանների խումբ, փոխօգնության ինքնագրավածության ծառայություններ, տեղային սպասարկման կառույցներ և այլն) (Kohen, 1992):

Առավել հանգամանորեն անդրադառնալով ՔՀ համերաշխարար նշանակությանը՝ վերհանենք այն մեխանիզմները, որոնց միջոցով ՔՀ կազմակերպությունները կարող են ակտիվ մասնակցություն ցուցաբերել սոցիալական համերաշխության կերտման գործընթացում: Բանն այն է, որ քաղաքացիական հասարակության ընդունված սահմանումներում, ի թիվս ՔՀ հիմնական գործառույթների, առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում ՔՀ կազմակերպությունների կրթական դերին: Այս տեսանկյունից քաղաքացիական հասարակությունը նկարագրվում է որպես քաղաքացիական գիտելիքի, հմտությունների և դիսպոզիցիաների ուսուցման կրթական միջավայր (Civic education, Global Alliance, Civic Education): Թեև քաղաքացիական կրթությունը մեծամասամբ կապվում է քաղաքացիների մասնակցության (քաղաքական և քաղաքացիական գործընթացներում) ակտիվության հետ, այդուհանդերձ քաղաքացիական մասնակցությունն անհնար է պատկերացնել առանց համարժեք կրթական նախապայմանների:


Ընդ որում, ՔՀ կրթական գործառույթը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և հաղորդակցային ցանցերի համաշխարհայնացման պայմաններում տեղային դրսևորումներից անդին ձեռք է բերում նաև վերագգային նշանակություն: Մասնավորապես, Հ. Ա. Շյոլտեն վերագգային քաղաքացիական հասարակության իր մոտեցումներում կարևորելով ՔՀ կրթական դերը՝ նշում է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են իրա-

գեկման գործառույթներ իրականացնել հանրության շրջանում համաշխարհայնացման գործընթացի և դրա տարբեր բաղադրիչների վերաբերյալ (թե ինչպես են փոփոխվում աշխարհագրական, տնտեսական, բնապահպանական, մշակութային երևույթները համաշխարհայնացման դրսևորումների ազդեցությամբ):

Վերլուծական այլ հայեցակետ է առաջարկում ամերիկացի արդի հասարակագետ Մարկ Ուորենը՝ ՔՀ կրթական գործառույթը մեկնաբանելով անձնային ինքնության սոցիալ-հոգեբանական վերլուծությունների հիման վրա: Վերջինս իր մոտեցումներում կարևորում է ռադիկալ ժողովրդավարության գաղափարը (Դյուի, Ջեֆերսոն, Միլս, Գրամշի), որի համաձայն ժողովրդավարական մասնակցությունը ինքնագարգացման և ինքնաիրացման լավագույն մեխանիզմն է: Ըստ էության Ուորենը ժողովրդավարությունը դիտում է որպես քաղաքացիական կրթության անհրաժեշտ նախապայման: Ուորենի համաձայն ռադիկալ ժողովրդավարության առանցքում այն համոզմունքն է, որ մասնակցության աճը հանգեցնում է ժողովրդավարական դիսպոզիցիաներով անհատի ձևավորմանը: Սոցիալականացման այս փորձով աչքի ընկնող անհատն աչքի է ընկնում՝ տարբերությունների նկատմամբ հանդուրժողականությամբ և փոխադարձության նկատմամբ զգայունությամբ, հմտորեն է ընդգրկվում բարոյականությանը վերաբերող դիսկուրսում և հակված է ինքնառեֆլեքսիայի (Warren, 1995): Այսպիսով, անդրադառնալով քաղաքացիական կրթության սահմանումներին, դժվար է անտեսել վերջինիս շաղկապվածությունը ժողովրդավարական գործընթացների հետ: Պատահական չէ, որ քաղաքացիական կրթությունը շատ հաճախ նույնացվում է ժողովրդավարական կրթության (Jennifer Rietbergen-McCracken, Civic Education) հետ՝ նկարագրվելով որպես տեղեկատվության և ուսումնական փորձի տրամադրման գործընթաց, որի նպատակը քաղաքացիներին նախապատրաստելն ու խրախուսելն է ժողովրդավարական գործընթացներին մասնակցելու հարցում: Մասնավորապես, հիշյալ փոխազդեցությունը երևելի է քաղաքա-

ցիական դիսպոզիցիաների ձևավորման գործընթացում, ինչը ենթադրում է ժողովրդավարության համար անհրաժեշտ գիտելիքների և արժեքների առկայություն (տե՛ս գծապատկեր 1-ը):

Գծապատկեր 1. Քաղաքացիական կրթության բաղադրիչները



Շարունակելով վերլուծել քաղաքացիական կրթության և ժողովրդավարության շաղկապման տեսական հիմքերը՝ պետք է անդրադառնանք ՔՀ և ժողովրդավարական հայեցակարգերի հարաբերման իմացաբանական հիմքերին: Ընդ որում, քաջ գիտակցելով, որ անհնար է ՔՀ և ժողովրդավարական գաղափարների փոխափանցման ողջ շրջանակը ներկայացնել տվյալ նյութի սահմաններում՝ ստորև կանդրադառնանք առանցքային հայեցակարգերից որոշներին:

Բանն այն է, որ ՔՀ գաղափարի զարգացումը՝ սկսած անտիկ փիլիսոփայությունից, միշտ հետնաբեմում ենթադրել է որոշակի ժողովրդավարական «ստատուս քվոյի» առկայություն: Այնուհետև, դասական ազատականության գաղափարների հոլովություն, ՔՀ-ն սահմանվելով որպես պետությունից և քաղաքական ինստիտուտներից անկախ մասնավոր սեփականության և շուկայի վրա հիմնված (տնտեսապես) հասարակություն, ևս ենթադրել է պետական ժողովրդավարության (*առնվազն իրավական առումով*) բավարար մալարդակ:


Այդուհանդերձ, ՔՀ-ժողովրդավարություն, այսպես ասած, վճռորոշ գուգակցումներից մեկը կապվում է XIX դարի ֆրանսիացի հասարակագետ Ալեքիս դը Տոկվիլի աշխատությունների հետ, որոնցում հեղինակը ՔՀ գաղափարի զարգացումը պայմանավորում է ժողովրդավարական կարգերի հաստատվածությամբ, ինչը հանգեցնում է ՔՀ գործառության նշանակության գնահատմանը ժողովրդավարական ինստիտուտների զարգացման դիտանկյունից:

Արդեն XX դարի երկրորդ կեսին, Ալմոնդի և Վերբայի համաձայն, քաղաքացիական արդի՝ մասնակցային մշակույթը նպաստում է ավելի իրազեկ և տեղեկացված քաղաքացիների ձևավորմանը, ովքեր ավելի հաջող քվեարկության են կատարում ընտրությունների ընթացքում, մասնակցում են քաղաքականությանը և, որպես արդյունք, առավել հաշվետու են դարձնում կառավարությանը (Алмонд, 2010) (այլ կերպ ասած՝ խթանում են կառավարության ժողովրդավարացումը): Սոցիալական կապիտալի տեսաբաններից՝ Ռ. Փաթնեմն իր հերթին գտնում է, որ քաղաքացիական հասարակության *նշ կառավարական կազմակերպությունները* կենսական նշանակություն ունեն ժողովրդավարության համար, քանզի նրանք հասարակությունում աչքի են ընկնում սոցիալական կապիտալի, վստահության և ընդհանուր արժեքների կառուցման գործառույթներով (Putnam, 1993): Ավելի ուշ, Բ.Բարբերը ժողովրդավարությունը մեկնաբանում է որպես ՔՀ վերջնանպատակ: Բարբերի մոտեցումներում քաղաքա-

ցիական հասարակությունը հարթակ է ծառայում ընդհանուր նպատակներ և շահեր ունեցող մարդկանց համար՝ ժողովրդավարական իդեալները շարունակաբար զարգացնելու նպատակով, ինչն, իր հերթին, կարող է հանգեցնել ավելի ժողովրդավար պետության կայացմանը (Barber, 1998): Այդուհանդերձ նշենք, որ ՔՀ և ժողովրդավարության հանգույցի վերլուծություններում պետք է խուսափել միակողմանիության ծուղակից: Ինչպես Չ. Թիլլին է նշում սոցիալական շարժումների իր հայեցակարգում. այն դեպքերում, երբ՝ սոցիալական շարժումները (որպես ՔՀ դինամիկ տարրեր) չեն ընդարձակում իրենց պահանջները՝ նպաստելով ժողովրդավարության առաջխաղացմանը, ապա սպառողական դիրք են գրավում ժողովրդավարական ռեսուրսների նկատմամբ՝ օգտվելով վերջինիս ընձեռած ազատություններից (Tilly, 2003): Ըստ այդմ, կարևորում ենք, ՔՀ-ժողովրդավարություն կապի դիտարկումը ոչ թե գծային, այլ շրջանաձև պատճառականության սկզբունքով: Դիցուք՝ Սիդնի Թերոուն, իր ժողովրդավարացման հայեցակարգում խոսելով «իրադարձություններով հարուստ» ժողովրդավարացման (eventful democratization) մոդելի մասին՝ առանձնացնում է դեպքեր, երբ ավտորիտար վարչակարգերը կազմալուծվում են իրար հաջորդող թեև կարճատև, բայց հզոր բողոքի ակիբների ազդեցությամբ: Ընդ որում, հեղինակը ընդգծում է, որ հասարակական փոփոխությունների հետևանքով իշխանական համակարգում նկատվող էլիտաների տեղաշարժը քաղաքական ասպարեզ է դուրս բերում բարեփոխումների կողմնակիցներին (ռեֆորմիստներ), որոնք շատ հաճախ համագործակցային կապի մեջ են մտնում սոցիալական շարժումների կազմակերպիչների հետ: Նման դեպքերում ընդդիմադիր կողմի պահանջները կարող են դրվել բանակցությունների սեղանին: Այսպիսի մասնակցային փորձառությունների դեպքում քաղաքացիական հասարակության ինստիտուտների առաջ լայն հնարավորություններ են բացվում, ինչն իր հերթին նպաստում է ժողովրդավարական կարգերի առաջխաղացմանը:

Այսպիսով, մի կողմից տեսնում ենք քաղաքացիական հասարակության, և մասնավորապես, քաղաքացիական կրթության կապը ժողովրդավարական դիսպոզիցիաների հետ, մյուս կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպման ձևերի առավելությունները (պետական ուղղահայաց միջամտությունների նկատմամբ) համերաշխության կերտման գործում (տե՛ս գծապատկեր 2-ը): Այդուհանդերձ, այս համատեքստում նկատելի են նաև ժողովրդավարության և համերաշխության գաղափարների հատման տեսական նախադրյալները, որոնք քննարկվում են Հաբերմասի դիսկուրսի էթիկայի հայեցակարգում: Ըստ Հաբերմասի՝ կատարյալ խոսքային իրավիճակի և բանականության կանոնների իրացման համար ընդհանուր պայմանների առկայությունը (համերաշխության զգացման պարագայում), անհրաժեշտ նախապայման է ժողովրդավարական քաղաքականության համար: Բանն այն է, որ Հաբերմասը, համերաշխությունը կապելով հոգատարության զգացման հետ (այլոց տեսակետը ընդունելը, անհատականի և համայնքայինի փոխկապվածությունը տեսնելը), այն դիտարկում է որպես դիսկուրսի էթիկայի կարևոր բաղադրիչ, առանց որի իրապաշտական կանխադրույթներով և ռացիոնալ կանոններով օժտված դիսկուրսը (մասնակիցների ազատության և հավասարության պայմաններում) այնուամենայնիվ գործնականում անարդյունավետ կգնտվեր փոխհամաձայնության կերտման համար (Habermas, Forum 21):

Գծապատկեր 2. Քաղաքացիական հասարակության և քաղաքացիական կրթության կապը



Ելնելով հիշյալ մոտեցումներից՝ ՔՀ կազմակերպությունների կրթական գործառնությունների վերլուծության համատեքստում հայեցակարգային հիմքերից անդին քննարկենք վերջինիս իրացման կիրառական հնարավորությունները:

• Տեսությունից դեպի կիրառական հնարավորություններ

Այս համատեքստում հիմք ընդունելով Լասվելի հաղորդակցության հայեցակարգը (Communication Theory, Laswell model) և այն համադրելով քաղաքացիական կրթության բաղադրիչների հետ, առաջարկենք որոշակի օպերացիոնալ մոդել, որով կնախանշվեն քաղաքացիական կրթության մշակման մեթոդական հնարավորությունները (տե՛ս գծապատկեր 3-ը):

Աղյուսակ 2. Քաղաքացիական կրթության կիրառման հաղորդակցային մոդելը

Քաղաքացիական կրթության հաղորդակցային մոդելը		
Ու՛մ կողմից (ուղարկող)	Համայնքային կազմակերպություններ, ՔՀԿ-ներ, կրթական հաստատություններ, ուղեղային կենտրոններ, շահերի խմբեր, միջազգային զարգացման կազմակերպություններ, լրատվամիջոցներ, մասնավոր հատված, և պետական մարմիններ (...):	
Ի՞նչ (բովանդակություն)	Քաղաքացիական գիտելիքի, հմտությունների և դիսպոզիցիաների, ժողովրդավարական կոնսենսուսի և դիսկուրսային էթիկայի վրա հիմնված սոցիալական համերաշխության կառուցման հնարավորությունների հայեցակարգում:	
Ինչպե՞ս (միջոցը)	Ֆորմալ	Դասախոսություններ, սեմինարներ, աշխատաժողովներ, ֆոկլուս խմբային քննարկումներ, դրամատուրգիական ցուցադրություններ (<i>դիցուք՝ փողոցային պե-ֆորմանսները</i>), դերային խաղեր, ռադիո և հեռուստատեսային ծրագրեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ (<i>բլոգինգ, պոդքասթ, համացանցային ֆորումներ</i>), փորձարարական ուսուցում:
	Ոչ ֆորմալ	Տեղեկատվության փոխանակման մեթոդներ (սովորելու մասնակցային, կամավորական և համագործակցային նախապայմանով):
Ու՛մ (ստացող)	Հանրակրթական, համալսարանական, ՏԻՄ, մասնավոր և պետական ոլորտի կազմակերպությունների ներկայացուցիչներ:	
Ի՞նչ արդյունավետությամբ	—	

Ըստ առաջարկված հաղորդակցության մոդելի քաղաքացիական կրթության տարրերի բաշխումը ցույց է տալիս գործընթացի

բազմաշերտ և համակողմանի կառուցվածքը: Անդրադառնալով բովանդակային ասպեկտներին՝ ամրագրենք, որ մեր սահմանած հայեցակարգային հիմքերի համաձայն քաղաքացիական կրթությունը հետապնդում է ժողովրդավարական դիսպոզիցիաների փոխանցման և համերաշխային զգացումների ձևավորման նպատակ:

Անշուշտ, պայմանավորված հաղորդակցության փոխանցող և ստացող սուբյեկտների (կազմակերպություն, խումբ, անհատ) առանձնահատկություններով, քաղաքացիական կրթությունը չի կարող փոխանցվել մեթոդաբանական միարժեք մոտեցումներով:

Այդուհանդերձ, ելնելով տվյալ աշխատանքի գիտամեթոդական նպատակներից, նախանշենք այն հիմնական մոտեցումները, որոնք կարող են ուղենշային գտնվել քաղաքացիական կրթության փոխանցման համար հանրակրթական (մասնավորապես՝ միջնակարգ կրթության պարագայում) և համալսարանական ոլորտներում: Ընդ որում, այս հարցում, ի թիվս հաղորդակցման այլ մասնակիցների, նախևառաջ անհրաժեշտ է հաշվի առնել միջնակարգ կրթություն և բարձրագույն կրթություն (որոնք իրենց հերթին բաղկացած են տարբեր փուլերից) ստացողների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները:

Այս դիտանկյունից ուշագրավ է արևմտյան մի շարք համալսարաններում և քոլեջներում փորձարկվող (սկսած 1960թթ.-ից) ծառայողական ուսուցման (service learning) մոդելը, որը մի կողմից հիմնվում է ճանաչողական և զարգացման հոգեբանության, իսկ մյուս կողմից պրագմատիստական փիլիսոփայության և ժողովրդավարության տեսության վրա:

Ծառայողական ուսուցումը, հանդիսանալով փորձարարական ուսուցման մաս, ենթարդում է տեսական նախապատրաստման, համայնքակենտրոն ծառայությունների, և առաջացած նյութի շուրջ սովորողի ռեֆլեքսիվ փորձի համադրություն: Այս շրջանակներում սովորողը հնարավորություն է ստանում անմիջապես կիրառության մեջ դնել տեսական գիտելիքները՝ դրանք միաժամանակ ծառայեցնե-

լով համայնքային կարիքներին և զուգահեռաբար ռեֆլեքսիայի ենթարկելով տեսական և կիրառական փորձի համադրությունը: Ուսուցման տվյալ եղանակը, ոչ միայն միտված է արժևորելու կրթական բովանդակության կիրառական նշանակությունը, այլ նաև իր համայնքակենտրոն և մասնակցային ուղղվածությամբ նպաստել անձի մոտ քաղաքացիական պատասխանատվությամբ ներշնչված էթիկական դրվածքների ձևավորմանը: Մյուս կողմից հիշյալ մոտեցումը թույլ է տալիս կրթական փորձն առավել հանգամանալից և մնայուն կերպով ամրագրել սովորողի հիշողության մեջ (Kasinath, 2013):

Ընդ որում, Է. Էրիկսոնի հոգեառցիալական զարգացման հայտնի մոդելի համաձայն, ուշ դպրոցական փուլում (12-19տ.), անհատի առողջ ձևավորումը ենթադրում է միասնական ինքնության մոդելի կառուցակցում (ի հակադրում խառը և ինքնահակասական դերային մոդելի) և առողջ ես-ի ձևավորում: Մասնավորաբար, հենց այս փուլում է անհատը միավորում իր բոլոր նախկին դերերը՝ դրանք ամբողջացնելով ինքնութենական մեկ մոդելում և փոխադրում զարգացման հաջորդ փուլեր: Ըստ Էրիկսոնի՝ այս փուլը կարևոր է նաև առանցքային արժեքների և կողմնորոշիչների ձևավորման հարցում: Ըստ այդմ, ծառայողական ուսուցումը, ներառելով ուշ դպրոցական տարիքի սովորողներին (Հայաստանում համընկնում է ավագ դպրոցական տարիքի հետ), խթանում է քաղաքացիական պատասխանատվության վրա հիմնված արժեքների և համայնքակենտրոն կողմնորոշիչների ձևավորումը սովորողների շրջանում: Հաջորդիվ, ուսանողական տարիքը (20-25տ.) Էրիկսոնի մոդելում համընկնում է մտերմության կամ կապվածության ձևավորման փուլի հետ (ի հակադրում մեկուսացվածության) (Erikson's 8 Stages of Psychosocial Development): Համապատասխանաբար, ծառայողական ուսուցումը, կարևորելով անհատի և համայնքի միջև փոխկապվածության, ընդհանրության զգացումը, այս փուլում նպաստում է սովորողի համայնքային սոցիալականացմանը՝ կանխելով անհատի մեկուսացման և օտարման

հնարավորությունը: Այստեղից կարող ենք դուրս բերել, որ քաղաքացիական կրթության կիրառումը միջնակարգ կրթության և բարձրագույն կրթության համատեքստում կարևոր է համադրել փորձարարական մոտեցումների հետ: Այդուհանդերձ, թե՛ միջնակարգ, թե՛ բարձրագույն ուսումնական հաստատություններում, պահպանելով քաղաքացիական կրթության փորձարարական բաղադրիչի գաղափարական և ընթացակարգային ընդհանրությունը, կարևոր է նաև անդրադառնալ կիրառական բնույթի որոշ հարցերի, որոնք սկզբունքային տարբերություններ են ենթադրում: Մասնավորապես, արժեքաբանական առումով, ելնելով Էրիկսոնի հոգեառաջնական զարգացման վերոնշյալ առանձնահատկություններից (Hayhoe, 2010), ինչպես նաև համալսարանական և դպրոցական ուսուցման մեթոդական յուրահատկություններից, տարբերակենք մի շարք մոտեցումներ, որոնք կարևոր է հաշվի առնել քաղաքացիական կրթության իրացման գործընթացներում: Ստորև թվարկենք դրանցից որոշները.

- Դպրոցական ուսուցման պարագայում գիտելիքի փոխանցման գործում ավելի շատ պետք է ընդգծվեն արժեքային և բարոյական հիմնարար կողմնորոշիչները, մինչդեռ համալսարանական պայմաններում առավել համարժեք են գիտելիքի մատուցման արժեքային չեզոք մոտեցումները:
- Դպրոցական ուսուցման պարագայում համարժեք են քաղաքացիական գիտելիքի փոխանցման առավել ինտեգրված մոտեցումները, իսկ համալսարանական կրթության հարցում պետք է շարժվել առավել մասնագիտացված գիտելիքի հաղորդման ճանապարհով (ըստ քաղաքացիական կրթության իրավական, սոցիալական, քաղաքական և այլ ասպեկտների):
- Դպրոցական ուսուցման շրջանակներում քաղաքացիական գիտելիքի փորձարարական իրացման հարցում նպատակահարմար է ուսուցչի (կամ պրակտիկայի ղեկավարի) մասնակցությունը, մինչդեռ համալսարանական ուսուցման

շրջանակներում փորձարարական բաղադրիչը նախընտրելի է թողնել ուսանողի ինքնավարությանը (այդ թվում՝ գործողությունների ծրագրի մշակման և կազմակերպման հարցերում):

Ամփոփելով քաղաքացիական կրթության կիրառական մոտեցումների վերլուծությունը միջնակարգ և բարձրագույն հաստատություններում՝ ընդհանրացնենք, որ հիշյալ գործընթացը, պայմանավորված լինելով սովորողների վարքաբանական, ճանաչողական, զարգացման առանձնահատկություններով, ենթադրում է ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակված մոտեցումներ, որոնց հաղորդակցումը տեսական գիտելիքին զուգահեռ կարևոր է լրացվել նաև անմիջական գործարկման հնարավորություններով, ինչն իր հերթին կնպաստի անհրաժեշտ կրթական պայմանների ապահովմանը սոցիալական համերաշխության կերտման գործընթացներում:

Գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին. (n.d.). http://www.parliament.am/draftreading_docs7/K-437_DR2.pdf
- Barber, B. (1998). *Place for us: How to make society civil and democracy strong*. Hill & Wang.
- Durkheim, E. (1960). *The division of labor in society* (G. Simpson, Trans.). Free Press.
- Habermas, J. (n.d.). Justice and solidarity: On the discussion concerning stage 6. *Philosophical Forum*, 21(12), Fall/Winter.
- Hayhoe, R., & Li, J. (2010). The idea of a normal university in the 21st century. *Frontiers of Education in China*, 5(1).
- Kasinath, H. M. (2013). Service learning: Concept, theory and practice. *Volume 2*(2).
- Kohen, A., & Arato, A. (1992). *Civil society and political theory*. MIT Press.
- Parsons, T. (1971). The democratic revolution. In *The system of modern societies* (pp. 123–145). Prentice-Hall.

- Putnam, R., Leonardi, R., & Nanetti, R. (1994). *Making democracy work: Civic traditions in modern Italy*. Princeton University Press.
- Tilly, Ch. (2003). *Social movements, 1678–2004* (pp. 141–144). Paradigm Publishers.
- Warren, M. (1995). The self in discursive democracy. In S. K. White (Ed.), *The Cambridge companion to Habermas*. Cambridge University Press.
- Waterman, P. (2001). *Globalization, social movements and the new internationalisms*. Continuum.
- Кравченко, А. И. (н.д.). *Парадокс начала: Огюст Конт как метафизик и революционер*. Теория и методология.
- Кропоткин, П. А. (2007). *Взаимопомощь как фактор эволюции*. Институт философии Российской академии наук.
- Шляхов, М. Ю., Бабаева, А. В., & Макарова, А. О. (2000). *3, путь к свободе: Исторический процесс глазами анархиста П. А. Кропоткина*. Новгород.
- Алмонд, Г. А., & Верба, С. (2010). *Гражданская культура: Подход к изучению политической культуры*. *Полития*, 2(57).
- Civic education, Global Alliance, Civic Education, Jennifer Rietbergen-McCracken. (n.d.). https://www.civicus.org/documents/toolkits/PGX_-B_Civic%20Education.pdf
- Erikson's 8 stages of psychosocial development. (n.d.). <https://gcwgandhinagar.com/econtent/document/1587961371UNIT-2.pdf>
- Communication Theory. (n.d.). *Lasswell model*. <https://www.communicationtheory.org/lasswells-model/>

SOCIAL GRAVITATION AS THE BASIS OF INSTITUTIONAL COHESION

Syuzanna Yeghiazaryan

PhD in Sociology, Lecturer at Armenian State Pedagogical University

Համառոտագիր

Հոդվածում սոցիալական գրավիտացիան մեկնաբանվում է որպես սոցիալական փոխազդեցությունների մոդել, որը պայմանավորում է անհատների և սոցիալական խմբերի մուտքը հասարակական դաշտեր, ինչպես նաև նրանց դիրքավորումը ազդեցության հիերարխիայում: Հոդվածում համադրվում են «սոցիալական գրավիտացիայի», «քվանտային սոցիոլոգիայի» տեսությունները՝ սոցիալական «ազդեցության կենտրոնների» ձևավորման, հասարակական համախմբվածության և հակազդեցության համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվում, թե ինչպե՞ս են վերաձևափոխվում սոցիալական փոխազդեցությունների բնույթն ու սոցիալական դերերը՝ ստեղծելով նոր հարաբերություններ: «Քվանտային սոցիոլոգիայի տեսանկյունից», սոցիալական գրավիտացիան կարող է դիտարկվել որպես բազմաշերտ և անկանխատեսելի համակարգ, որտեղ անհատների և սոցիալական խմբերի վարքագիծը պայմանավորված է հավանականությունների դաշտով: Հոդվածում վերլուծվում են սոցիալական գրավիտացիայի հավասարակշռող և բեռնացնող գործառույթները, որոնք ձևավորում են սոցիալական դինամիկան և հասարակական զարգացման ուղղությունները: Դիտարկվում է, թե ինչպես են սոցիալական հակասությունները նպաստում ազդեցության նոր կենտրոնների ձևավորմանը՝ սոցիոլոգիական տեսությունների շրջանակներում ներկայացնելով սոցիալական գրավիտացիան որպես կարգավորող ուժ, որը ձևավորում է սոցիալական արդարության և սոցիալական անորոշության միջև առաջացող հարաբերությունները:

1. Introduction and Research Methodology

Social gravitation is based on the idea that social interactions are subject to certain laws of attraction. This implies that individuals and groups gravitate toward centers of influence, conditioned by social capital, cultural resources, or institutional structures. The gravitational model received its name from the similarly named law in physics. Newton is famous for his

quote: "If I have been able to see further, it is only by standing on the shoulders of giants" (Newton, 1675).

This research is based on a theoretical-methodological synthetic approach that includes methods of comparative analysis and conceptual modeling. The work was carried out through the following main methodological steps:

1. Comparative theoretical analysis - The interrelationships between gravitational models of physics and sociological theories were studied, combining physical regularities with social dynamics.
2. Documentary study - The works of leading sociologists (Habermas, Bauman, etc.) on social interactions, social structures, and the formation and transformation of institutions were analyzed.
3. Conceptual modeling - A conceptual model of social gravitation was developed, which includes mechanisms for the formation of centers of influence, the dynamics of cohesion and counteraction.

The purpose of the research is to develop a comprehensive theory of social gravitation that will allow explaining the mechanisms of formation of centers of influence, based on both classical sociological approaches and the modern concept of quantum sociology.

2. Theoretical Foundations of the Gravitational Model and Interpretation of Social Structures

A gravitational relationship must emerge in any model. Carrothers (1956, 99) argued that a comparison between human interaction and Newtonian physics is possible. At the individual level, we do not describe human actions in mathematical terms, but the behavior of large groups of people can be predicted through probability theory. This phenomenon can be observed in all social sciences, as people act differently in groups than as individuals. The behavior of masses is subject to certain patterns that do not apply to separate individuals. In large groups, people tend to imitate each other, become more emotional and responsive, reducing rational self-awareness. This is comparable to the theory of physics, where the behavior of individuals cannot be accurately modeled, but the movement of masses is subject to predictable patterns (Le Bon, 1913). A similar approach also exists in physics: it is impossible to accurately predict the behavior of a single molecule, but it is possible to evaluate the overall movement of a group of molecules.

Social structures are sociologically explained not only by causal connections but also by their meaningful significance. The interrelationships between social galaxies form galactic clusters - politics and religion, culture and nationalism, and so on. These relationships can also create "dark matter" - social space "black holes." Sociology studies the intensity of influence of economic, political, cultural, and social spheres, their interactions, and the gravitational fields that shape them. It is important to understand that in the social "universe," "galaxies" are never completely independent but constantly interact with each other. The future of the social "universe" depends on whether humanity will be able to overcome its internal contradictions without deepening social polarization. Can human civilization overcome its tendencies toward self-destruction, or are they inevitable? The only hope remains the protection and development of the social universe based on conscious social solidarity and social justice (Vukićević, 2016).

Sociological research in several countries was studied for the empirical justification of the theoretical model. In particular, R. Putnam's studies in the USA have shown that the decline in social capital has led to a weakening of civic participation and institutional gravitation (Putnam 2000). E. Castells' research on network societies has confirmed that digital technologies create new centers of influence, the gravitational force of which is formed through the control of information flows.

The application of the social gravitation model in practice allows for predicting social trends, in particular:

- Directions and intensity of migration flows
- Places where political solidarity or counteraction arises
- Dynamics of formation and spread of social movements
- Redistribution of institutional centers of influence

3. Habermas's Public Sphere and Z. Bauman's Liquid Modernity Social Gravitation

Jürgen Habermas argues that the public sphere functions as a gravitational center, where the free exchange of information, culture, ideas, and opinions within society creates social gravitational forces. These gravitational forces can be explained as follows:

1. Free dissemination of information - within society, certain centers (media, academic institutions, political platforms) become gravitational forces of information, attracting public attention.

2. The power of civil society - social organizations and activist movements within society also act as gravitational forces that form social polarizations or consolidations.

Habermas analyzes how the bourgeois public sphere was formed in the 18th century as a platform for free and critical debates. In this space, private individuals gathered to discuss issues of public importance, which contributed to the formation of public opinion. J. Habermas presented the role of cafes, salons, and other public places where people could freely discuss political, economic, and cultural issues. Such discussions contributed to the strengthening of social ties and the emergence of new centers of influence. Therefore, Habermas's model of the public sphere can be viewed as an "open system" of social gravitation, where social connections and information flows form new centers of influence. It shows that free fields of public opinion can reduce political and economic inequality by creating new gravitational centers that guide the course of social development (Habermas, 1989). Today, the public sphere is being transformed under the influence of the digital environment, where "information gravitation" takes on a new role. Habermas's model of the public sphere remains an important part of modern sociological research, which allows understanding the social gravitational forces operating within society and their impact on the formation of public opinion.

Within the framework of the "liquid modernity" theory, modern society is characterized by variable, unstable connections, where social relationships are constantly being reshaped under the growing influence of global globalization, digitization, and individualization (Bauman, *Liquid Modernity*, 2000). In this context, social gravitation no longer manifests itself as a stable, long-term influence but acquires a variable nature, depending on the dynamics of information flows, economic networks, and political discourses. Studying the evolutionary foundations of social connections, Dunbar concludes: "Human social networks are organized in a layered structure in terms of size with an approximate ratio of 5:15:50:150, which is maintained across different cultures and time periods. Even with the development of digital communication, the structure of social networks continues to reflect the impact of our cognitive limitations, which shows that gravitational centers of solidarity stem from the biological foundations of human sociality" (Dunbar, 2020, p. 3). Therefore, maintaining social solidarity implies the

formation of new "gravitational fields" based on the strengthening of cultural capital, equalizing access to information, and institutional stability of public debate. In this context, Habermas's model of the public sphere can serve as a mechanism of social gravitation, which enables the formation of new centers of influence, even in liquid social conditions.

4. Application of Social Gravitation Models and Analysis of Spatial Interactions

In the fields of spatial sociology and economic geography, gravitational models have long held a key position as effective tools for quantitative analysis of social interactions, revealing spatial structure, and predicting social flows. They are constructed based on a sociological analogy of Newton's law of gravitation, according to which the intensity of interaction between social subjects (communities, cities, organizations) is directly proportional to their "mass" - that is, population size, economic potential, or cultural influence, and inversely proportional to the physical or communicational "distance" between them (Wilson, 1970; Batty, 1976). The structural basis of these models allows viewing social flows not only as random or dynamic movements but as interactions subject to regularities, in which polarization processes, spatial inequalities, and centers of attraction are revealed. The application of gravitational models in a sociological environment makes it possible to analyze both physical movement (e.g., migration, population redistribution) and symbolic and informational flows (e.g., information dissemination, cultural influence, media circulation).

Theoretically, these models are classified according to their functions, of which the most accepted are the following:

Gravity Demand Models, which aim to predict the volume of social or economic flows between different spatial points. These models take into account the size of the mass and the distance between interacting subjects, which makes it possible to determine where flows are directed from and to, for example, population migration, consumer movement, or labor circulation. They are used in urban planning, transport infrastructure design, and territorial policy analysis as a tool for assessing spatial equilibrium and economic integration (Wilson, 1970; Flowerdew & Aitkin, 1982).

Distribution Models focus on the structure of flow distribution, trying to determine which territorial centers are more attractive and what factors determine this attraction. They are particularly useful in urban contexts,

studies of territorial polarization of educational centers, as well as in assessing the effectiveness of service distribution (Batty, 1976; Philbrick, 1973).

These models reinterpret the theory of social gravitation in a new sense, proposing to view interactions not only from a value or ideological perspective but also as a structure of territorial flows, where centripetal (attractive) and centrifugal (repulsive) forces operate. Thus, the application of gravitational models in sociology makes it possible to identify both centers of social attraction and to reveal patterns of social rupture and spatial inequality.

In the context of migration and movement, the gravitational model is applied in urban geography, particularly for assessing mobility flows, studying migration between two territories, and evaluating the attraction of centers or multicenter systems. The idea is that more densely populated and closer centers have greater migration flows between them. Migration processes are also subject to the influence of other factors, such as politics, language, culture, tax systems. Ultimately, the gravitational model shows that human mobility is not only a phenomenon based on physical distance but also a process conditioned by socio-economic, cultural, and political factors.

5. Quantum Approach in Social Gravitation

Waldo Tobler proposed a general principle of spatial interactions, which later became known as "Tobler's First Law." According to this law, "Everything is related to everything else, but near things are more related than distant things" (Tobler, 1970). This thought reflects the key regularity of spatial behavior, according to which as physical or social distance increases, the intensity of interaction decreases. At the core of W. Tobler's theory was the idea of spatial predictive power, which focused on the general mechanism of the influence of distance without focusing on the reasons for dissemination. This approach differed from physical gravitation, as it did not focus on measurable masses, allowing for the study of non-material phenomena, such as knowledge, culture, ideas, etc. Classical gravitation not only offers a static picture of the effect of distance reduction but also encompasses the dynamics of mutual attraction and the balance of influence. Accordingly, gravitation constantly changes the surrounding reality, which cannot be viewed as an entirely static phenomenon.

To uncover the mechanisms of formation of "centers of influence," the theoretical possible justifications of "social gravitation," as well as "quantum

sociology," have been examined from the perspective of cohesion and counteraction processes. From this concept, it is important to study how the nature of social interactions and social roles are reshaped in the context of forming new relationships. Quantum thinking, originating in physics, offers a new perspective in 21st-century sociological discourse for perceiving and explaining social reality. This approach changes the classical structure of knowledge, arguing that social phenomena should be viewed not as the result of predictable, structural movements, but as a system of fluctuating, uncertain, and possibility-filled interactions.

From the perspective of quantum sociology, social gravitation is viewed as a multi-layered and unpredictable phenomenon, where the behavior of individuals and groups depends on a field of probabilities. By studying the balancing and polarizing functions of social gravitation, it becomes understandable that the latter guide the development trends of society. Social contradictions also form new centers of influence in the context of the relationships between social justice and uncertainty. In sociology with a quantum approach, social interactions do not follow predictable movement but develop based on models of probability. In A. Wendt's "Quantum Mind and Social Science," it is emphasized that social relationships can be viewed not in a deterministic framework but within a scope of possibilities (Alexander Wendt, 2015).

Karen Barad, developing the idea of the "entanglement of matter and meaning," proposes a model according to which social realities are formed by simultaneous interaction between the observer and the observed. Her approach reveals that social gravitation can arise not only from a material basis but also from interactive meaningful arrangements. Manuel DeLanda, in turn, proposes to view social systems as non-hierarchical assemblages, where connections are established without centralized structures, based on possibility, interaction, and dynamic reformations (DeLanda M.2006). The application of a quantum sociological approach in the study of social gravitation requires a transition from traditional linear models to non-linear and probabilistic models. This methodological shift allows for a more accurate study of unpredictable changes occurring in social systems and the dynamic nature of the formation of centers of influence. At the same time, this approach accepts that there is a certain level of uncertainty in complex social systems, which requires probabilistic analysis. This theoretical

perspective allows the model of social gravitation to be taken beyond its classical boundaries, transforming it into a system operating by the logic of a probabilistic field. Centers of social attraction, according to this approach, can be formed not only around subjects with large demographic or economic mass but also in areas where meaningful intensity, cultural density, or informational potential predominate. In this way, social gravitation presents itself not as a mechanical model borrowed from physics, but as a meaningful centripetality, conditioned by the density of consciousness, perception, and cultural fields.

This approach is also in line with the idea proposed by Dena Zohar, according to which: "The quantum person exists according to the principle of interconnectedness and an open system. He is not an independently acting unit, but exists in mutual connection with others, constantly defined by new possibilities" (Zohar, 1990, p. 78). This approach emphasizes the interconnectedness of social actors and affirms that at the basis of social interactions lies not only structural position but also the connection arising from reciprocity and probable dynamics.

6. Mechanisms of Formation of Centers of Influence

Centers of influence within society can be formed through several main factors:

1. Informational influence - the development of social media and public communication creates new gravitational centers, where control of information becomes a source of power.
2. Cultural influence - some groups have a greater gravitational force due to their historical and cultural capital.
3. Economic influence - financial power plays an important role in the system of social gravitation, as economic resources can strengthen centers of social influence.

Social gravitation acts in a dual way: it can consolidate certain groups, as well as polarize society. When some groups gain a dominant position in the social gravitational system, others may remain outside the centers of influence. From a quantum sociological approach, it is proposed to view cohesion and counteraction as potentially transformable phenomena: social changes occur with a non-linear dynamic, where the behavior of social actors can unexpectedly transform. The mechanisms of social cohesion and counteraction play an important role in the processes of stabilization and

transformation of the social field, where centers of influence are formed through the accumulation of social capital, control of information, and political influence. Modern societies continually face the problems of social division, inequality, group contradictions, and institutional uncertainty. In these conditions, the theory of social gravitation can become an effective analytical tool for explaining how the dynamics of institutional solidarity, stability, and interconnectedness are formed. In sociology, gravitation is viewed not only as a process of forming social connections between individuals but also as a fundamental mechanism for stabilizing and polarizing social structures.

Zuboff notes: "We no longer serve a commodity economy where machines were used at the expense of people. Now we belong to an economy of surveillance capitalism, where machines are designed to transform and monetize human experiences as behavioral data. This new market mechanism radically transforms the traditional structures of social gravitation" (Zuboff 2019, p. 8).

The idea of social gravitation is based on models of physical gravitation and in sociology, we can view it as follows:

1. "Centers of influence" act as gravitational fields, around which social connections, norms, and institutional frameworks are formed.
2. "Social capital" contributes to the strengthening of gravitation, ensuring solidarity and cooperation.
3. "Cultural and ideological gravitation" plays an important role in group consolidation and the establishment of social norms.

Institutional solidarity is formed when social structures and institutions act as gravitational centers that attract individuals and groups toward common goals. Centers of influence are formed by the following factors:

- The presence of universal values and norms: When society agrees on certain values, an institutional gravitational center is formed.
- The strength of educational and cultural institutions: Higher educational institutions, scientific organizations, and cultural institutes act as gravitational centers, ensuring social solidarity.
- The strength of individual and group connections: Loyal communities and social movements can form centers of influence that contribute to social harmony.

Research shows that in countries with high levels of social capital, institutional solidarity and trust are much more stable (Putnam, 2000). Digital technologies undoubtedly play their role in the field of social gravitation. The media have become a new field of social gravitation. Social networks form virtual gravitational centers, where people gather on ideological, professional, or cultural bases (Castells, 2009). Technological institutes not only form new economic systems but also affect social solidarity, becoming systemic gravitational forces. Digital spaces for public discussions contribute to the creation of social gravitational centers, where ideas and opinions form new social norms.

The theory of social gravitation can have important practical applications in a number of social spheres, opening new opportunities for public administration, territorial development, and the formation of educational policy. At the policy-making level, this theory can serve as an analytical tool for understanding how centers of influence and opinion are formed within society. Governments and political figures, having an understanding of the mechanisms of social attraction, can more effectively ensure public participation, develop inclusive public spaces, and form such communication platforms that restore trust in institutions. In the field of territorial development, the application of social gravitation models can help in urban and regional planning processes. They allow predicting population migration flows, trends in the concentration of economic activity, as well as spatial patterns of resource distribution. These models are most effective when it is necessary to determine which communities have attractive potential, and which are at the risky edge of weakening. At the level of educational systems too, the principles of social gravitation can play an important role. The density of social connections forming around educational institutions, the presence of cultural centers, and institutional authority can be viewed as gravitational forces that contribute not only to educational choice but also to the development of social capital and human resources. From this perspective, educational policy can be built taking into account not only academic quality but also community attraction.

7. Gravitational Field of Social Solidarity

The formation and strengthening of solidarity is possible through the creation of social gravitational fields, which are built on shared values, institutional support, information flows, and mutual trust. The gravitational

field must become a unifying force that will push individuals and groups to unite around common goals. Building a social gravitational field of solidarity requires a systematic approach, where information flows, social capital, institutional support, and digital solidarity are important. In the concept of social gravitation, solidarity is viewed as a centripetal force that unites individuals and social groups, forming stable societies. Solidarity acts as a social gravitational field, where centers of influence are formed around values, norms, mutual support, and common goals. The social gravitation of solidarity is formed on the basis of the following factors: information exchange, cultural connections, and so on.

The formation of centers of influence of solidarity is one of the key conditions for stabilizing and reconstructing modern society. These centers arise where there is meaningful density, correlative ties of trust, and institutional support. From the perspective of quantum sociology, this process is similar to the formation of a field of probabilities, where each stimulus can cause a systemic change. New centers of attraction are not limited by space or material resources; they are born where people rely on common experience, conscious participation, and informational transparency.

The formation of such centers requires not only theoretical understanding but practical construction - transparent institutions, cultural initiatives, educational environments, digital platforms that promote connections and trust. It is only in such an environment that social gravitation can transform from passive attraction to an active force of consolidation.

